Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

Արցախի կիրը պատմություն մեջ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Բելա ԲԱԲԱՅԱՆ

Արցախի կինը պատմության մեջ

«ՍՈՆԱ» գրահրատարակչություն
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 1998

Նվիրում եմ թանկագին անուններ՝
Մնացորի Բաբայանի եւ Սերգեյ Մնացականյանի
պայծառ հիշատակին

ԲԱԲԱՅԱՆ Բ. Ա.

Արցախցի կինը պատմության մեջ: Բելա Բաբայան:
Ստեփանակերտ, «Սոնա» գրահրատարակչություն, 1998 թ.: 96 էջ:

«Սոնա» գրահրատարակչություն

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ · 1998

ՎԱՍՆ ՊԱՅՇԱՌԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՐՈՍԱՑՄԱՆ

Ընթերցողին առաջարկվող աշխատությունը գիտական թեզ է, ավելի ստույգ թեզի համառոտ շարադրանք: Եվ այնուամենայնիվ, դժվարանում եմ այն որակել սոսկ ակադեմիական վերլուծություն: Գուցե այստեղ սազական է ասել, որ նյութը մատուցվում է նման պարագայում սակավ հանդիպող՝ գեղարվեստական պատումի ներշնչանքով: Գիրքը կարդացվում է հարաճուն հետաքրքրությամբ՝ մինչեւ չի շրջվում վերջին էջը:

Բելա Բաբայանը ձեռնարկել է խիզախ գործ՝ ընթերցողին է ներկայացնում արցախցի կնոջ կերպարը պատմության ամբողջ ընթացքում: Ի՞նչ է դա նշանակում: Դա նշանակում է՝ Արցախի պատմության շղթայի մեջ *ներկատել* արցախցի կնոջը, բացահայտել նրա դերը ազգային գոյապայքարի տեւականության մեջ, *ներկատել* եւ պատմական նյութի ընդհանուր համատեքստից *զատորոշել* արցախուհուն՝ նրա էությունը բացահայտող տարբեր դրսեւորումներով. կին, որ զինվոր է ամուսնու, ավելի հավաքական ասենք՝ հայ տղամարդու կողքին, օջախի պահապան, բարեպաշտ քրիստոնյա ու բարերար, նախաստեղծ այնպիսի հատկանիշներ, որոնք հայոց այլ տարածքներում ժամանակի հոլովույթում տարրալուծվել են օտարամուտ, օտարածին շիճուկներում: Եթե այսօր մենք հայ կնոջ կերպարից զատորոշում ենք արցախուհուն, ապա ոչ թե նրա համար, որ հակադրենք մասը ամբողջին, այլ ապշանքով արձանագրենք, թե ինչու եւ ինչպես հնարավոր եղավ հայուհու կերպարը անաղարտ պահպանել՝ ժամանակին ու պատմական հանգամանքներին հակաճառելով:

Դժվար է պատկերացնել Վաչագան Բարեպաշտին առանց Շուշանիկի հորդորների, նրա ազգանպաստ գործունեության ամբողջ ընթացքում՝ քաղաք հիմնադրել, եկեղեցի կառուցել, մատյան ծաղկել:

Գրքի այն էջերում, որոնք նվիրված են Արզուխաթունին, վեր է հառնում բարերարի մի անզուգական կերպար: Եթե միայն հիշենք, որ Դադիվանքն ունենալու մեր ազգային հպարտության համար պարտական ենք Արզուխաթունին, եթե դրան գումարենք տասնյակ մատյանների, մատուռների, եկեղեցիների՝ հայ մշակույթը զարդարող հուշարձանները, եթե ասվածին հավելենք արցախյան ձեռագործության, մասնավորապես՝ գորգագործության՝ մեր ազգային հպարտությունը հանդիսացող, ուրիշ ժողովուրդների մոտ չհանդիպող, մեր էության տարրերը այնտեղ հանճարեղ կերպով բնորոշված գույների ու ձեւերի համանվագը, ապա մեզ ոչինչ չի մնում, քան կրկին ու կրկին հիշել ու որպես թանկագին ժառանգություն պահպանել արցախուհու կերպարի այսպիսի պոռթկումը: Այդ ամենին նա հասել է իր եւ իր դուստրերի նուրբ մատների վարժանքներով:

Արցախուհին բազմեզի իրողություն է, որի մեկ այլ օրինակ մեզ

համար դարձել է հայրենասերի դասական կերպար: Չվերապատմենք, դա ավելի լավ արված է գրքի համապատասխան էջերում նվիրված Ռուզուքանի անձնազոհությանը:

Անտարակույս, կա արցախուհու ֆենոմենը: Դա հավաքական կերպար է, որի գումարելիները զարմանալի բեւեռացված, բայց ներքին կերպով համախմբված ընդհանրություն է, որի դրսեւորումների պատմությունը մեզ թողել է հարուստ ժառանգություն: Եթե մեկ շարքի վրա դնենք Շուշանիկի, Արզուխաթունի, Ռուզուքանի ընդհանրական կերպարները (նրանք, լինելով կոնկրետ պատմական անձնավորություններ, իրենցով խորհրդանշում են արցախուհու ֆենոմենի որեւէ մի եզր) գումարելիներ են, բայց ոչ ամբողջը, եթե մոռանանք Գայանեի հերոսական կերպարը: Նորից չվերապատմենք քաջասիրտ արցախուհու հանդուգն արարքը, որին նվիրված էջերը գեղարվեստական պատում են հիշեցնում:

Պատմությունը շարունակվում է, եւ նախնիներից մեզ ժառանգված ազգային հատկանիշները, որոնք կոդավորված են մեր արյան կաթիլներում, ունեն մերօրյա վառ արտահայտություններ: Այսօր խանդաղատանքով եւ ակնածանքով ենք հիշում նորօրյա արցախուհիներին, որոնք զենքը ձեռքին պաշտպանեցին հայրենի հողը ազերի հրոսակների ասպատակումներից:

Պետք է խոստովանել, որ գրքի հեղինակը ըստ էության ընթացել է չտրորված ճանապարհով, ավելի ստույգ՝ ինքն է բացել այդ ճանապարհը: Ընթերցողը կարող է զարմացած հարցնել՝ ինչպե՞ս, իսկ Լեո՞ն, Մուրացա՞նը, հայ պատմաբաննե՞րը, մեզ հասած մատյանե՞րը: Հարցումը տեղին է, բայց եւ կարիք ունի բացատրության: Բանն այն է, որ առանձին հեղինակներ ներկայացրել են պատմական այս կամ այն ժամանակաշրջանը՝ իրենց հերոսներով, մինչդեռ արցախուհու կերպարը բացահայտող որեւիցե մի հավաք աշխատություն ասպարեզում չկա: Հենց Բելա Բաբայանի «Արցախցի կինը պատմության մեջ» աշխատանքը գալիս է լրացնելու բացը: Ըստ որում այդ բացը լրացնում է այն հրամայականով, որ այսօր թելադրում է արցախյան ներկա գոյապայքարը:

Առաջին փորձը, անտարակույս, ունի լրացումների, ճշգրտումների պակասներ, ինչը բնական է ու բացատրելի:

Հակիրճ այս խոսքը ծանրաբեռնված չի լինի, եթե ընթերցողին տեղեկացնենք, որ գրքի հեղինակը ակտիվ հասարակական գործիչ է, հանդիսանում է ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր: Բ. Բաբայանը գիտական աշխատանքին զուգահեռ պետական եւ հասարակական գործունեությամբ իր նպաստն է բերում Արցախյան նոր պետականության կայացմանը: Հայրենասիրությունը, որով թաթախված է գիրքը, ոչ միայն գաղափարախոսություն է, այլեւ հեղինակի էությունից բխող երակ, որն այնպես բնութագրական է արցախուհուն:

Մաքսիմ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Վաղնջական ժամանակներից, երբ երկրագնդի վրա ստեղծվեցին առաջին պետական կազմավորումները եւ իր ծնունդն ազդարարեց Հայասա-Հայաստանը, պատմական բոլոր վկայագրերով Արցախ-Ղարաբաղը ճանաչվել է որպես հայկական պետության անբաժանելի մասը, իսկ արցախահայությունը՝ հայ ժողովրդի մի հատվածը:

Աշխարհի զորեղները բազմիցս ոտքի կոխան են դարձրել հայկական հողը, ասպատակումների ասպարեզ էր դարձել: Իր ինքնուրույնությունը, ազգային դիմագիծը համեմատաբար անաղարտ պահած հայկական երկրամասերից մեկի՝ Արցախի եւ արցախահայի դասական սահմանում կարելի է համարել «Կավկազսկոյե պլովո» թերթի 1919 թվականի մարտի 23-ի համարում տպագրված Ս. Գորոդեցկու «Ղարաբաղ» հոդվածը, որը հույժ այժմեական է Արցախ-Ղարաբաղի հիմնախնդրի լուծման տեսակետից: «Ազգագրական, տնտեսական ու լեզվական առումով լինելով միասնական, Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արեւելյան թեւը: Այդպիսին է նա եղել անցյալում, այդպիսին է ներկայումս եւ այդպիսին կլինի ընդմիշտ, քանի որ առանց Ղարաբաղի տերը լինելու անկարելի է պաշտպանել Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտը: Պատմության ընթացքում բազմիցս են հարձակման ալիքներ զարնվել ու փշրվել Ղարաբաղի ամրությանը՝ թափանցելով սոսկ գետահովիտները, բայց այդտեղ էլ երկար չեն մնացել: Այնինքի (այդպես էր կոչվում Ղարաբաղը) իշխանության մելիքությունները հին ժամանակներում բազմիցս են սեփական ուժերով տեղի հողերից քշել թշնամուն: Պատմությունը կրկնվում է, եւ վերջին անգամ դա տեղի ունեցավ մեր աչքի առաջ:

Բնությունը եւ պատմությունը Ղարաբաղում ստեղծել են վառ արտահայտված տիպ: Աշխարհով մեկ սփռված դարաբաղցիներին հեշտ է ճանաչել ամենուր: Գործունեության լայն թափ, անձնուրաց քաջություն, կյանքը վտանգելու պատրաստակամություն, ինքնավստահություն, ինքնատիպ համառություն, շիտակ նպատակասլացություն, նահապե-

տական պարզ կենցաղավարություն ահա ղարաբաղցուն բնորոշ այն առինքնող հատկանիշները, որոնք ասես խտացնում են հայի հինավուրց բարեմասնությունները եւ որոնք այլուրեք դժգունել են պատմության արհավիրքներից, բայց անաղարտ վիճակում պահպանվել են Ղարաբաղում: Բարձրահասակ, ամրակազմ ժողովուրդը, կյանքը փրկելու համար բարձրանալով լեռները, ամրապնդվեց լեռնային օդի ազդեցությամբ եւ իրեն զերծ պահեց այն վարակներից, որոնք բաժին են ընկնում հովիտների բնակիչներին»[1]:

Հազարամյակների հեռուներից բերված հայկական շատ բան է պահպանվել այստեղ: Այսօրվա Արցախի հայ կինն ու հայ տղամարդը իրենց արտաքինով, հոգեբանությամբ, հավատամքով, իրենց ամեն ինչով նման են Հայաստանում եւ աշխարհի մյուս կողմերում ապրող հայ կանանց ու հայ տղամարդկանց: Բայց արցախահայի էության մեջ վաղնջական ժամանակների հայերին հատուկ այնպիսի հատկանիշներ են պահպանվել, որոնք մյուս վայրերի հայերի մեջ պահպանվել են նվազ չափով կամ մոռացության են տրվել օտար ազդեցությունների պատճառով: Գրքի նյութը հենց այն հազվագյուտ հատկանիշներն են, որ պահպանել է Արցախի հայ կինը:

---

1 Ս. Գորոդեցկու «Ղարաբաղ» հոդվածի հայերեն թարգմանության այս հատվածը տպագրված է «Հայերն աշխարհում» գրքում, Ե., 1995, էջ 127:

ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԵՏՔԵՐ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախահայն առանձին մարդաբանական տիպ չի կազմում: Նա նույն հայկական մարդաբանական տիպն է, որ գիտության մեջ հայտնի է արմենոիդ (հայակերպար) անունով:

Մակար Բարխուդարյանը գրում է, որ Արցախի Ազոխ գյուղի կողքի Որվան քարանչավում կա երեխա գրկած մի կնոջ արձան. «Արձանը կոփված է քարից, կնոջ զգեստի տարազն եւ գլխի շինության ձեւն ներկայացնում են Արցախի կանանց հագուստների եւ փաթաթոցներով շինած գլուխների տիպը»[1]: Որվանի կամ Ազոխի քարանչավը հայտնի է ոչ միայն այս արձանով: Այս քարանչավում է հայտնաբերվել նեանդերթալյան մարդու մի ծնոտ: Սա վկայում է, որ Արցախը մարդկային բնակության առաջին հայրենիքներից մեկն է, քանզի նեանդերթալյան մարդը համարվում է Եվրոպայի նախնադարյան ամենահին ցեղը:

Հայտնի է, որ հայոց հեթանոսական դիցարանում երեք կին աստվածուհիներ են եղել՝ Անահիտ, Աստղիկ եւ Նանե. առաջինը խորհրդանշում էր հայոց մայրության, զգաստության, պտղաբերության եւ արգասավորության գաղափարը, երկրորդը խորհրդանշում էր սիրո եւ գեղեցկության, երրորդը՝ ողջախոհության գաղափարը: Երեք աստվածուհիներն էլ խոր հետքեր են թողել Արցախում: Նրանց պաշտամունքը ցայտունորեն արտահայտվում է հատկապես Արցախի տեղանուններում: Այս առումով արժե հիշել, որ Արցախի բոլոր մեծ ու փոքր լեռնազանգվածներում կան Ծծաքար անունը կրող ելուստներ, որոնք ըստ Ե. Լալայանի ստինքանման պտուկներ են, որոնք գտնվում են քարալանջերում, երբեմն ահագին ժայռերի եւ կամ այրերի մեջ, որոնցից կաթ-կաթ ջուր է հոսում եւ սակավակաթ կանանց կաթն ավելացնելու դեղ է համարվում:

ԼՂՀ Մարտունու շրջանի Հացի գյուղում մի աղբյուր կա, որ կոչվում է Անահիտի անունով: Ս. Ղանալանյանը գրում է. «Ասում են, թե Աղվանից Վաչագան թագավորը այս աղբյուրի մոտ առաջին անգամ հանդիպել է Հացի գյուղացի գեղեցիկ ու իմաստուն Անահիտին եւ սիրահարվել նրան: Այդ օրվանից էլ աղբյուրը կոչվում է Անահիտի աղբյուր»[2]: Իրենք՝ Հացի գյուղի այժմյան բնա-

---

1. «Արցախ», Բաքու, 1895, էջ 88:
2 Ս. Ղանալանյան, Ավանդապատում, Ե., 1969, էջ 98:

կիչները այս ավանդությունը համարում են նոր ժամանակների հորինվածք եւ ասում, թե աղբյուրն Անահիտ է կոչվել հայոց մեծ աստվածուհի՝ ոսկեմայր ու ոսկեծղի Անահիտի անունով[1]:

ԼՂՀ Մարտակերտի շրջանի Ծահմասուր գյուղից վերեւ Խաթանող սարահարթն է, նրանից հյուսիս՝ Հկեղան վարելահողը, հենց այստեղ էլ գտնվում է Անահտական սարահարթը: Հկեղանի ստորին մասում Կարասի լճակն է, որն ըստ ավանդության գոյացել է Անահիտ աստվածուհու արցունքներից: Հեթանոս չբեր հայուհիները լողանում էին այս ջրով՝ հուսալով, որ իրենք երեխա կունենան:

Արցախի Արցախաշեն (Դաշբուլաղ) գյուղը հնում կոչվել է Աստղաշեն: Այս գյուղանունը տեղացիները ստուգաբանում են այսպես. իբր տարին մի անգամ իր ոտքն այս հողի վրա է դնում հայոց սիրո ու գեղեցկության աստվածուհի Աստղիկը, որի շնորհիվ հայուհիներն այստեղ ծնվում են չքնաղ տեսքով: Դրա համար էլ, իբր, գյուղն ստացել է Աստղաշեն անունը:

Բերդաշեն գյուղը հնում կոչվել է Կուսաբերդ: Ըստ ավանդության այս գեղատեսիլ վայրում մի չքնաղ աղջիկ էր ապրում: Նրա սիրած տղան զոհվում է թշնամու դեմ մղված կռվում: Աղջիկը երդվում է հավատարիմ մնալ իր սիրուն եւ չամուսնանալ որեւէ մեկի հետ: Գեղեցկուհու սիրով հմայված թշնամիները գալիս պաշարում են բերդը եւ փորձում ուժով տիրանալ նրան: Հայ կտրիճները ջարդում են թշնամուն, բայց նա նորից է հայտնվում պարիսպների տակ եւ ջանում երկար պաշարումով ծնկի բերել բերդատիրուհուն: Մահու եւ կենաց մարտ է տեղի ունենում, որի ժամանակ զոհվում են հայ քաջորդիները: Այնուամենայնիվ աղջիկը չի հանձնվում թշնամուն, նա գերադասում է ընդունել մահը եւ ահռելի ժայռի գագաթից իրեն նետում է անդունդ ու զոհվում: Ասում են ցատկելուց հետո աղջկա շրջազգեստի լայն քղանցքները բացվում են եւ դանդաղեցնում նրա անկումը: Թվում էր, թե աղջիկը սավառնում է օդում, ճախրում ինչպես թռչունը: Բերդի ստորոտում հավաքված ամբոխը այդ տեսարանից ահաբեկված վայնասուն է բարձրացնում եւ փրկության աղաղակներ հանում: Այդ ժամանակվանից էլ բերդն ու գյուղը կոչվում են Կուսաբերդ, Աղջկա բերդ, որ օտար հնչմամբ դարձել էր Ղզղալա: 1988-ին գյուղի բնակիչներն իրենց գյուղը վերանվանում են Բերդաշեն:

---

1. Այս մասին գրառում է կատարված Հացի գյուղի դպրոցի շենքը կառուցող (1911-ին) համագյուղացիներ Ջիվանշիր եւ Գյուլբահար Ղազյանների ընտանեկան հիշատակարանում:

Կուսաբերդի տիրուհու՝ այդ անանուն քաջ արցախցու սխրանքը մնացել է սերունդների հիշողության մեջ եւ մարտաշունչ ոգի ներարկել հետնորդներին:

Բուզլուխը Արցախի Ծահուսյանի շրջանի գյուղերից է: Հնում կոչվել է Սառցատեղ: Բուզլուխը Սառցատեղի թարգմանությունն է: Ավանդությունն ասում է, որ հայոց սնուցող մայր աստվածուհի Անահիտը մի բուռ կենարար հեղուկ է ցողում այս բարձրության վրա, որն այստեղ ապրող յուրաքանչյուր հայի կյանքը երկարացնում է քառորդ դարով: Այդ պատճառով էլ հայը հազարավոր տարիներ չի հեռացել այստեղից:

Քարվաճառի շրջանում, Դադիվանքի մոտ, կա մի փոքրիկ հարթավայր, որ միջնադարյան Արցախի Դոփյանների իշխանության հիմնադիր Դոփ իշխանուհու անունով կոչվում է Դոփուն տափ: Այս տեղանվան մեջ անմահացել է հայրենաշեն իշխանուհու անունը:

ԼՂՀ Հադրութի շրջանի Ծամձոր գյուղը հիմնված է մի ձորի երկու լանջերի վրա: Կողքից նայելիս գյուղի տեղանքը նմանվում է կնոջ ծամի, որի համար էլ ստացել է Ծամձոր անունը, այսինքն՝ ձոր, որ նման է ծամի:

Նույն Հադրութի շրջանի գյուղերից մեկն էլ կոչվում է Մարիամաձոր: Այստեղի բնակիչները Մարիամ Աստվածածնի օգնությունը հայցելու համար իրենց հիմնած բնակավայրը նրա անունով կոչել են Մարիամաձոր:

Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղի անտառահատվածներից մեկը կոչվում է Ծուղուն ծմակ (Ծուղին եղել է այդ գյուղի ամենաբազմազավակ կինը, ունեցել է 18 երեխա): Ծուշանա կամ Քյոնդալան գետը սկիզբ է առնում Քիրս լեռնաշղթայի լանջերից: Այս գետը հոսում է մի շարք գյուղերի կողքով եւ կրում է զույգ անուն՝ Ծուշանա եւ Քյոնդալան: Այսպես, Հերհեր գյուղի եւ Կարմիր շուկա ավանի բնակիչները գետն անվանում են Ծուշանա, իսկ մյուս գյուղերի բնակիչները՝ Քյոնդալան: Վերջինս, իհարկե, օտարամույծ անուն է: Հերհերցիներն ու կարմիրշուկացիները պահպանել են գետի իսկական՝ հնագույն հայկական անունը: 1500 տարի է, ինչ այս գետը կոչվում է Ծուշանա: Այդպես է կոչվել 5-6-րդ դարերում Արցախի եւ Ուտիքի Առանշահիկ արքա Վաչագան Բարեպաշտի կնոջ՝ Ծուշանի (Ծուշանիկ) անունով: Ըստ ավանդության թագուհի Ծուշանիկը տառապել է քոր հիվանդությամբ եւ ապաքինվել է այս գետի ջրում լողանալուց հետո: Այդ պատճառով էլ գետը կոչվել է Ծուշան կամ Ծուշանա գետ:

Մատաղիս անվան մասին պահպանվել է մի այսպիսի

զրույց: Այստեղ ժամանակին ապրում էր Մատաղիս անունով մի գեղեցկուհի: Երկու եղբայրներ սիրահարվում են նրան: Աղջիկը փոքր եղբորը հանձնարարում է սարի միջով խմելու ջուր բերել իրենց գյուղը, իսկ մեծին էլ՝ Թարթառ գետից առու հանել դեպի գյուղի դաշտերը: Ով նրանցից շուտ կատարի տրված հանձնարարությունը, խոստանում է նրա կողակիցը դառնալ: Փոքր եղբայրը, դեռ գործի կեսին, տեսնում է, որ մեծն արդեն վերջացնելու վրա է: Մատաղիսը փոքր եղբորն ավելի հավանելով, նրան խորհուրդ է տալիս մի մեծ կտավ փռել այն տեղում, որտեղ պետք է հոսեր ջուրը եւ կտավի վրա աղ լցանել: Առավոտյան գյուղի հոտը հավաքվում է տեղի վրա: Մեծ եղբայրը հեռվից տեսնելով այդ, կարծում է, թե ոչխարներն առվից ջուր են խմում: Հուսահատված դեպի վեր է շպրտում ձեռքի ահագին մուրճը եւ գլուխը պահելով տակը՝ ջախջախվում: Փոքր եղբայրն ամուսնանում է Մատաղիսի հետ, որի անունով էլ գյուղը կոչվում է Մատաղիս:

Որպես հավելում ասվածի, նշենք, որ Ռաֆֆին իր «Ճանապարհորդական նոթերում» Դաստակերտ-Դաստակիրի մասին գրել է. «Մի ամբողջ ժամ տեւեց, մինչեւ դուրս եկանք Եղիշե Առաքյալի վանքի ձորից դեպի Դաստակիրի բարձրավանդակները, ուր գտնվում են նույն անունով գյուղի ավերակները: Գյուղից մնացել է կիսավեր եկեղեցին եւ գերեզմանատունը, որ պատած է անտառով: Ժողովրդի մեջ դեռ պահպանվել է հին ավանդությունը, թե այդ եկեղեցին շինել է Վաչագան թագավորի աղջիկը, որի գերեզմանը նրա մեջ է, թե այդ գյուղը Վաչագան թագավորի աղջիկներից մեկի ամառանոցն է, որի անունը Դաստագյուլ էր, եւ գյուղը նրա անունով կոչվեցավ Դաստագյուլ եւ ժողովրդի բերանում աղճատվելով դարձավ Դաստակիր»[1]:

Ինչպես ցույց տվինք վերեւում, ճիշտ հակառակն է տեղի ունեցել, ոչ թե Դաստագյուլն է Դաստակիր դարձել, այլ Դաստակերտ-Դաստակիրն է դարձել Դաստագյուլ:

ԼՂՀ Մարտունու շրջանի Ճարտար (Գյունե Ճարտար) գյուղի մոտ ճապկի ծառերով շրջապատված մի բլուր-ուխտատեղի կա, որը կոչվում է Կոհակ: Կոհակ բառը հայերենում երկու իմաստ ունի՝ բարձրություն եւ ալիք: Այսօրվա հայը կոհակ ասելով ընկալում է միայն ալիք իմաստը: Բայց ահա Արցախի այս նշանավոր տեղանունը պահպանել է հայերենի այդ հնագույն բառի առաջին՝ բարձրություն իմաստը: Այդ տեսակետից Կոհակ բլուրը դարձել է հայերեն բառիմաստի պահոց: Այս բլուրը հիմնականում կանանց ուխտատեղի է, հետեւապես Կոհակ անունն էլ պահպանել են իրենք՝ կանայք:

Կարմրակուճ, այլ անվանումներով՝ Կարմրագուճ-Կեմրակուճ գյուղը գտնվում է ԼՂՀ Հադրութի շրջանում, շրջկենտրոնից 3 կմ հյուսիս: 1989-ի հունվարի մարդահամարի տվյալներով ուներ 155 հայ բնակիչ: Գյուղի 13-րդ դարում կառուցված եկեղեցին կրում է Ամենափրկիչ անունը: Կարմրակուճը հայկական հնագույն բնակավայրերից է: Գտնվում է Կարմիր քար կոչվող ժայռի ստորոտում: Այդ ժայռի տակից խմելու ջուր է հասցված գյուղ: Գյուղն իր անունը ստացել է կարմիր քարից: Դա կարմիր մարմարի մի տեսակ է: Մարմարը հունարեն բառ է, հայերեն այն կոչվում է կուճ, որը հիմա ուղիղ իմաստով գրեթե չի օգտագործվում, մնացել է միայն բառաբարդումների մեջ (օրինակ կճասալ, այսինքն՝ մարմարասալ): Այսպիսով, գյուղը հենց սկզբից կոչվել է Կարմրակուճ, այսինքն՝ կարմիր կուճ, կարմիր մարմար, վայր, ուր կարմիր մարմար կա: Այս անունը լրացնում է հայոց լեզվի բնական բառարանը, քանզի անաղարտ վիճակում պահպանել է գրաբարյան կուճ ընտիր բառը:

Հետագայում Կարմրակուճը որոշ հնչյունափոխություններով արտասանվել է Կեմրակուճ կամ Կարմրագուճ: Հասկանալի է, որ պիտի հարազատ մնալ բուն անվանը՝ Կարմրակուճին: Գյուղի կողքի աղբյուրը կրում է Մեղրաղբյուր անունը:

Ավանդությունն ասում է, որ Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղը հիմնադրել է Խոնարի անունով մի հարս: Փորձենք վերլուծել բառը, որը կազմված է տեղանվանակերտ երեք ձեւույթից. խ տառի մեջ պահպանվել է Խոնարի անունը, նու գրաբարյան բառ է, որը նշանակում է հարս, շինակ-ը շինել, կառուցելն է: Այստեղ մեզ հետաքրքրողը նու բաղադրիչն է: Հիմա հայերս հարսին նու չենք ասում, բայց մեր նախորդներն ասել են: Եվ ահա Խնուշինակ գյուղանվան նու բաղադրիչը մեզ հիշեցնում է, որ նու նշանակում է հարս եւ պետք չէ մոռացության տալ բնիկ հայերեն նու բառը, ինչպես դա հավաստում է Հր. Աճառյանը:

Արցախի նշանավոր հայուհիները երբեմն պատմության մեջ հիշատակվում են ոչ թե անձնանուններով, այլ պատվանուններով: Այդպես էին վարվում նաեւ Հայաստանի բոլոր կողմերում: «Բազմավեպ» հանդեսը գրում է. «Մեր թագուհեաց ավելի սովորական պատվանուն եղած է Տիկին կոչուիլ, եւ ընդհանուր իրենց

1. *Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ.8, Երեւան, 1967, էջ 600-601:*

իշխանությունը Տիկնություն ըսելը՝ ինչպես կըսվի Թագավորություն: Դշխո անունն էլ իբրեւ հոմանիշ կամ նոյն կգործածվի. Աշխարհատիկին ալ կոչված պիտի ըլլան մեր թագուհիները, ինչպես Վաչագանա կինը Աղուանից թագուհին կկոչվի իր երկրին վրա»[1]: Միաժամանակ դեռեւս միջնադարում ինչպես Արցախում, այնպես էլ Հայաստանի մյուս կողմերում մարդիկ չէին քաշվում իրենց աղջիկներին Թագուհի անունը տալ, թեկուզ նրանք ունենային գեղջկական ծագում:

Արցախի իգական անունների մեջ առանձնահատուկ տեղ ունի Մագաղաթը: 1950-ական թվականներին Արցախ-Ղարաբաղում չէիր գտնի հայկական մի գյուղ, որտեղ Մագաղաթ անունով աղջիկ կամ կին չլիներ: Աբրահամ Կիսիբեկյանը[2] իր հուշագրություններում գրում է, որ Արցախում փարայծում է գտել Մեսրոպ Մաշտոցի ժամանակներից եւ գրի է առել մի ավանդազրույց՝ կապված այդ անվան հետ: 5-րդ դարում, երբ Արցախում բացվեցին առաջին հայկական դպրոցները, մագաղաթյա ամեն մի թերթ սրբազան մասունք էր համարվում: Բոլոր բնակավայրերում ձեռագիր մագաղաթների պահպանությունը հանձնվում էր գյուղի նշանավոր կանանց: Ժամանակի ընթացքում այդ կանանց անվանում էին ոչ թե իրենց անուններով, այլ Մագաղաթ պահող կին կամ Մագաղաթի կին, որը հետագայում սեղմվում է ու դառնում Մագաղաթ: Եվ սկսեց սովորություն դառնալ կանանց Մագաղաթ անուն տալը:

Արցախ-Ղարաբաղում հնուց հաստատված մի սովորություն կա: Ոչ մի կնոջ լեռան անունով չէին կոչում: Այստեղ լեռներն ասես «տղամարդկանց սեփականությունն էր»:

Մի քանի գյուղերում միջնադարում արմատացած է եղել մի այսպիսի սովորություն. աղջկանը անուն տալուց հետո մի գլխաշորի մեջ քաղցրավենիք էին փաթաթում եւ տանում գյուղի ամենատարեց կնոջը եւ խնդրում, որ նա օրհնի նորածնի ծնունդը:

Արցախուհին ազգային հնամենի սովորությունների հիմնական կրողն է: Արցախի հայուհու հուշաբջջի մեջ հինգհազարամյա հայկական սովորությունների խտացվածք կա: Կարելի է վստահորեն ասել, որ արցախուհու հուշաբջիջն ավելի տարողունակ է, քան տղամարդունը: Իր աշխատության մեջ Ստ. Լիսիցյանը գրել է. «Ինչպես անձրեւ կանչելու դեպքում տղամարդիկ միայն հանդիսատեսի դերում էին լինում, մասնակցում էին բացառապես կանայք՝ վերապրուկներն այն ժամանակների, երբ հողի մշակությունը բացառապես կնոջ գործ է եղել: Կարկուտը դադարեցնելու, եղանակը «շրջելու», չար ոգիներին քշելու համար ժողովուրդը, բացի բոլոր զանգերը տալուց եւ ամեն կերպ աղմուկ բարձրացնելուց, նաեւ շուռ էր տալիս՝ պրանում[1] էր քարեր, կանայք եռոտանիները՝ թաղանները, շրջված դուրս էին գցում բակ՝ անձրեւի տակ, իսկ որպեսզի խոշոր կարկուտը մանր դարձնեն, սկսում էին կարկտահատիկը դանակով կամ կացնով կիսել: Կինը որպեսզի հղիանար՝ ծընհանար, ծոծրակին ծանր քար բռնած, ծնկաչոք եռաոտքան էր անում եկեղեցու շուրջը, որից հետո տերտերը (կամ վանականը) նրան իր փարաջայի քեղի (փեշի) տակ առնելով, աղոթք էր կարդում: Կինը քարը հետը տուն էր տանում»[2]:

Սկսած մարդկային հասարակության արշալույսից կինը կարեւոր դեր է խաղացել քաղաքակրթության ճանապարհին: Ինչպես գրում է հնագետ Խաչիկ Սամուելյանը, մայրիշխանության ժամանակաշրջանում «տղամարդը հայթայթում էր անհրաժեշտ կենսապարենը որսորդությամբ ու ձկնորսությամբ, իսկ կինմարդը քաղում էր երկրի երեսից պտուղներ ու արմտիք, նաեւ միջատներ ու զեռուններ: Այդ յուրատեսակ աշխատանքային բաժանումն ըստ սեռի ու ֆիզիկական ուժի՝ ունենում է այն հետեւանքները, որ կինմարդը դառնում է երկրագործական մշակույթի անդրանիկ հիմնադիրը, հողամշակույթի գաղտնիքի հայտնաբերողը:

...Մեկ խոսքով՝ նախնական երկրագործության ամբողջ ընթացքն ու զարգացումը կնոջ աշխատանքների ու հոգատարության հետեւանքն է: Կնոջ ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, որոնք կապված էին նրա ծննդաբերական գործողությունների հետ, անշուշտ, պատճառ էին դառնում, որ նրան վիճակվում էին համեմատաբար տղամարդու հետ՝ նվազ ֆիզիկական ուժ եւ շարժում պահանջող զբաղմունքներ: Այրմարդն ստանձնել էր պատերազմի ու որսի աշխատանքները, իսկ կինմարդը տնային տնտեսության հոգսերը: Այդ հանգամանքները դրդում էին կինմարդուն հնարագետ լինելու իր տնտեսական գործունեության մեջ. նա էր գործում կողովներ ու պարաններ, քե-

1. «Բազմավեպ», 1849, հունվար, էջ 20:
2. Կիսիբեկյան Աբրահամ (1892-1972), մանկավարժ, ազգային հասարակական գործիչ: Թողել է 9 մատյանից բաղկացած իր անտիպ հուշագրությունը: Այդ 9 մատյանը մեքենագիր է, տպագրության պատրաստ: Հուշերը վերաբերում են դարասկզբից մինչեւ 1960-ական թթ, տեղի ունեցած արցախյան անցուդարձերին: Դրանք պատմագիտական մեծ արժեք ունեցող նյութեր են: Ինքը՝ Աբրահամ Կիսիբեկյանը ծննդով Արցախի Սխտորաշեն գյուղից է:

1. Պրանել՝ Արցախի բարբառով նշանակում է շուռ տալ:
2. Ստ. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը, էջ 62:

ռում էր քարե քերիչներով մորթիները եւ սրանցից կարում էր ոսկրե ասեղներով զգեստներ, շինում էր կավից ամաններ, կառուցում էր բնակության հյուղը, անընդհատ կատարելագործում էր օջախը եւ պահում անշեջ կրակը: Այդ ամենը կնոջ գործ էր, որ զարգանում էր նորաքարային դարերին, երկրագործության, հողամշակության սկզբնական աստիճաններում»[1]:

Մինչեւ 1930-ական թվականները Արցախում մի սովորություն կար, որով վավերացվում էր այն իրողությունը, որ կինը երկրագործության հիմնադիրն է: Դա արտահայտվում էր այսպես: Արցախի գյուղացին իր հողակտորը հերկելիս արորի մաճը տալիս էր կնոջը, որն անում էր առաջին ակոսը: Հնագույն ժամանակներում այդ սովորությունը տարածված է եղել Հայաստանի մյուս կողմերում, բայց ամեն տեղ այն մոռացության է տրվել եւ պահպանվել է միայն Արցախում: Արցախի եւ Ուտիքի (Հայկական Աղվանքի) կնոջ եւ տղամարդու զբաղմունքները որոշ բնագավառներում խստիվ սահմանորոշվել են, նույնիսկ կանոնակարգվել են: Այս առումով ուշագրավ է, որ նաեւ Հայկական Աղվանքի (Արցախի եւ Ուտիքի) համար կանոնական իրավանորմեր ստեղծող Դավիթ Ալվկա որդին (մոտ 1075-1139) իր կանոններում անդրադարձել է այդ խնդրին: Այսպես, ՀԱ (71) կանոնում նշում է, որ կինը չպետք է զբաղվի որսով, արտը հերկելով, ոտքերով հնձանում խաղող ճմլելով: Նույնիսկ կանոնական պատիժ է նախատեսվում կնոջ ճմլած խաղողից ստացված գինին օգտագործողի նկատմամբ՝ մեկամյա ապաշխարությամբ, ինչը ծանր պատժատեսակ էր[2]:

Երկրագործության հետ հնադարյան կնոջ առնչությունները պահպանվել են նաեւ հավատալիքներում: Երաշտ ժամանակ կանայք ոտաբոբիկ եկեղեցի են մտնում եւ աղի արցունք թափելով անձրեւ աղերսում աստծուց: Ինչպես Հայաստանի մյուս կողմերում, Արցախում եւս քաղաքակրթությունն սկսվել է մայրիշխանությունից, Խ. Սամուելյանի խոսքերով «կինն է եղել հողի առաջին մշակողը, նախնական երկրագործը եւ ճանաչվել է որպես միակ ծնող ու արգասիք բերող, իբրեւ մայր աճող սերունդների»[3]:

Վաղնջական ժամանակների հետ է կապված մի սովորություն, որը իր էությամբ հույժ հայկական է եւ որը պահպանվել է միայն Արցախ-Ղարաբաղում: Խոսքը վերաբերում է Արցախի նշանավոր ժնգալով հացին:

1. Խ. Սամուելյան, Գիր Հայաստանի կոլտուրայի, հ. Ա, Երեւան, 1931, էջ 216-217:
2. Ս. Աբրահամյան, Դավիթ Ալվկա որդու կանոնները, «Էջմիածին» 1953, 2, էջ 57:
3. Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 227:

ժենգյալ՝ Արցախի բարբառով նշանակում է կանաչի, կանաչեղեն, բայց ժնգալով հացը չի կարելի թարգմանել կանաչիով հաց: «ժնգալով հացը արցախահայության ինքնության հնագույն խորհրդանշաններից է: Այդպիսի հաց թխելու սովորույթը գալիս է այն վաղնջական ժամանակներից, երբ հայ ժողովուրդը տոնում էր գարնան սկզբին՝ գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին: Դա տարեգլխի պատահական ընտրություն չէր: Հայ մարդը բազմամյա դիտարկումներով նկատել է, որ բնությունը հարություն է առնում գարնան սկզբին: Հայերն այդ օրը նշել են ցնծալի տոնախմբությամբ, որով փառաբանել են բնության զարթոնքը, հողագործի աշխատանքը, աղերսել աստվածներին, որպեսզի բերքառատ, կանաչազարդ դարձնի տարին: Ժնգալով հացը թխելով՝ արցախահայը հուշել է աստվածներին, որ նրանք մշտապես բնությունը կանաչազարդ պահեն: Հավանաբար ժնգալով հաց թխելու սովորությունը հատուկ է եղել հայկական լեռնաշխարհի բոլոր կողմերին: Ամենուրեք մոռացության է տրվել այդ սովորությունը: Իսկ ավանդապահ դարաբաղցին պահպանել է: Ժնգալով հացը արցախեցին թխում է գարնան սկզբին: Այդ տեսակ հաց թխելու համար արցախեցին ընտրում է Արցախի բնության մեջ տարածված շուրջ 40 տեսակ կանաչեղեն, այդ թվում՝ ճռճռոկ, պռավապորտ, եղինջ, մանուշակ, գինձ, սամիթ, կնձմնձուկ, ռեհան, խաղաղ, թրթնջուկ եւ այլն: Դրանք ուտելի բույսեր են, մի մասն էլ սքանչելի հոտ ու համ ունի: Այդ բոլորը մեկտեղելով մանրատրում են որպես միջուկ, հավասարապես փռում թխվող հացի մեջ: Ժնգալով հացի համից արցախեցու քիմքը «տրտինգ է տալիս»: Ղարաբաղցու մարմինը պնդացել է նաեւ ժնգալով հացով»[1]:

Մինչեւ այժմ Արցախի հայուհու սովորությունները գիտականորեն չեն ուսումնասիրվել: Հանգամանալից ուսումնասիրության դեպքում արցախուհու հասարակական դիմագիծը բացահայտող շատ նորույթներ վեր կհանվեն:

ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՒՀԻՆ ՈՐՊԵՍ ԿԻՆ ՈՒ ՄԱՅՐ

«Ղարաբաղցի հայի կերպարը նշանակալիորեն տարբերվում է ստորին չորային շրջանների, հատկապես Մերձարաքսյան, Հարքի, Մշո շրջանների հայերի կերպարից: Այստեղ գերակշռում

1. «Արցախ օրացույց 1995», Երեւան, «Աղվանք» հրատարակչություն, էջ 84:

են բարձր հասակը, համեմատաբար ավելի սպիտակ մաշկն ու բաց գույնի մազերը (մուգ սեւից մինչեւ մուգ շիկահեր), բավական հաճախ են հանդիպում մի այնպիսի մեկուսացած անկյունում, ինչպիսին է Խոնաշեն գեղի ակունքների մոտ, Բողիրխանի զանգվածի լանջերի տակ գտնվող Նոգի գյուղը»[1]: Այս զուգակշռումից հետո Ստ. Լիսիցյանը ավելացնում է՝ գիտական կերպավորում տալիս Արցախի հայ կնոջը. «Ղարաբաղցի կինն էլ, տղամարդն էլ կանգնում են ուղիղ, ուղղահայաց ձգված մեջքով: Կորացածությունն ու դուրս ցցված փորը խիստ հազվադեպ երեւույթներ են: Նույնիսկ ծերունիներն ու պառավները ուղիղ են քայլում, առանց կռանալու: Ջրով լի մեծ սափորի ծանրությունն էլ չի խանգարում, որպեսզի աղջիկը վայելչակազմ ու լարի պես ձգված բարձրանա լեռնային արահետով»[2]:

Արցախահայ կանայք նրբաքիթ են: Նրանց քիթը սրածայր չէ: Բերանը փոքր է, շրթունքները նուրբ են, ականջները համաչափ: Ղարաբաղում չես հանդիպի մի հայուհու, որը ծալովի կոպերով աչքեր ունենա, ինչպես մոնղոլուհիները:

Արցախի հայուհու մեջ պահպանողականը միայն արյան կանչի արգասիք չէ: Նույնիսկ բարձր զարգացում ունեցող արցախուհին, որը շփվել է ժամանակակից ուրիշ ազգերի ամենանրբաճաշակ կանանց հետ, կուրորեն չի նմանակում նորագույնը, իր էության մեջ պահում է հուշաբջջի հետ եկողը: Նա հավատում է սիրո ավանդական գուշակությանը: «Սիրո ու սեռական գաղափարի նշանակություն ունի «սիրի-սիրի» եռատերեւ կանաչը, որով նորապտի աղջիկներն ու պատանիները գուշակություններ են անում, թե իրենցից որին է սիրում մտադրված անձնավորությունը»[3]:

Չնայած առօրյա խոսակցության մեջ Արցախի տղամարդուն համարում են տան գլխավորը, «կնոջ գլխի տերը», բայց իրականում կնոջ ու տղամարդու իրավունքները սովորութային ուժով հավասարազոր են: Այդ սովորությունը գալիս է հնուց: Հազվադեպ է պատահում, որ ղարաբաղցի տղամարդը ձեռք բարձրացնի կնոջ վրա: Ղարաբաղցի կինը չի հանդուրժում ծեծը եւ ծեծին կարող է ծեծով պատասխանել: Ստ. Լիսիցյանը գրում է, որ Սոս գյուղում եղել են դեպքեր, երբ կին ամուսնու ծեծին ծեծով է պատասխանել[4]:

Ղարաբաղցի հայուհու մասին ահա թե ինչ է գրել Բաքվում գործող ֆրանսիացի նավթարդյունաբերողների ընկերության

1. Ստ. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը, էջ 35:
2. Նույն տեղում, էջ 35:
3. Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, էջ 213:
4. Ստ. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը, էջ 41:

աշխատող Ժան դը Մարսելինոն. «1912 թվականի ամռանը հյուրընկալվեցի Խաչենի գավառի Դաշբուլաղ հայկական գյուղում: Տանտիրուհուս աշխատասիրությունը ապշեցրեց ինձ: Նա ցերեկը դաշտում էր աշխատում, գիշերը՝ տան գործերը անում: Ես չտեսա, թե նա երբ է քնում, որ ժամին էլ արթնանայի՝ նա ոտքի վրա էր: Պետք է ընդունենք, որ մեր ֆրանսուհիները այս հայուհիների հետ չափվել չեն կարող: Սրանք ոչ հոգնել գիտեն, ոչ էլ տրտնջալ: Աշխատասիրության շնորհիվ Արցախի հայուհին իր թարմությունը, հրապույրն ու գեղեցկությունը ավելի երկար է պահում, քան Եվրոպայի կանայք»:

Հասկանալի է, որ այսպիսի կնոջ վրա արցախցի տղամարդը իրեն թույլ չի տա ձեռք բարձրացնել: Դա ամենեւին չի նշանակում, որ Արցախում ընդհանրապես կնոջը չեն ծեծել: Մելիքության շրջանում կային պատժի մի քանի միջոցներ: Այդ միջոցներից էին անվանարկությունը եւ ձիու պոչից կապելն ու քարշ տալը, որին, ինչպես գրում է Լեոն, գլխավորապես ենթարկվում էին անառակ կանայք, որոնց նստեցնում էին էշի վրա, էշի պոչը ձեռը տալիս, երեսին մուր քսում եւ շրջեցնում էին գյուղում: Ավելի փոքր հանցավորների երեսին թրիք էին քսում եւ գյուղով ման ածում[1]:

Արցախուհին բոլոր ժամանակներում դրսեւորել է իրեն ե՛ւ որպես մայր, ե՛ւ որպես կին: Ընտանիքապաշտ է այստեղի հայուհին: Հայաստանի մյուս գավառների հետ համեմատած ամենաքիչ ամուսնալուծությունները լինում են Արցախում: Արցախեցի տղամարդու համար կինը Աստծու պես պաշտելի արարած է: Հր. Աճառյանը կին բառը համարում է բնիկ հայերեն բառ եւ այն արտածում կյանք բառից, այսինքն՝ կինն առաջացել է կյանք բառից[2], որ նշանակում է, թե կինը հենց ինքը կյանքն է: Լեոն գրել է, որ արցախցի հայ կինը ընտանեկան կյանքի մեջ առանձնակի դեր ունի եւ պահպանել է նախնական սովորությունները ամենայն սրբությամբ. «Նա միշտ հարազատ է մնացել հայության լեզվին եւ բոլորովին պահպանել է հայ կնոջ պատմական առանձնահատկությունները՝ չենթարկվելով ոչ մի տեսակ արտաքին ազդեցության»[3]:

Ռաֆֆին իր աշխատություններում հաճախ է անդրադարձել հայ կնոջ եւ մասնավորապես Արցախի հայ կնոջ խնդրին: 1878

1. Լեո, Երկերի ժողովածու, հ.3, Երեւան, 1973, էջ 26:
2. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.2, Երեւան, 1973, էջ 588-589:
3. Լեո, Երկերի ժողովածու, հ.8, Երեւան, 1985, էջ 16:

թվականին նա գրել է մի ուսումնասիրություն, որի խորագիրն է «Հայ կինը»: Նա այդ ուսումնասիրության բնաբան է ընտրում լատինական մի ասացվածք՝ «Կինն է այն առանցքը, որի շուրջը պտտվում է քաղաքակրթությունը»[1]:

Սովորաբար ասում են, թե կանանց բարեմասնությունների մի մասը բնատուր են, մի մասն էլ՝ ընտիր դաստիարակության արգասիք[2]: Բնատուրը արցախուհու մեջ այնքան շատ է, որ հաճախ նա իր քաղաքակրթությամբ գերազանցում է քաղաքակրթության բարձր ոլորտների հարազատ ծնունդ կանանց: Դա է հաստատում նաև հայ կնոջը նվիրված «Բազմավեպի» հոդվածներից մեկը[3]: «Շուշեցի... հայուհիք ընդհանրապես գեղադեմ են եւ հաճոյատեսիլ, եւ առանց ունելոյ վրայի կանանց անհոգ կերպը, եռանդուն են բնությամբ»:

Արցախի մոր կերպարը ցայտունորեն է ընդգծված արցախցի բանաստեղծ Լեւոն Աթաբեկյանի ստեղծագործության մեջ[4]: Որդուն գրած նամակում սիրագորով մայրը զեղում է իր մայրական սիրտը, ցուցաբերելով արցախցի մոր հոգեկան վսեմ հատկությունները: Որդու կարոտն այրում է նրան, գիշերները քուն չի գալիս աչքերին: Նա հիշում է որդու բարոյական բարձր հատկանիշները: Նամակում զգացվում է մոր լավատեսությունը, մարդասիրական վերաբերմունքը «քյասիբ-քյուսուբ խալխի» նկատմամբ, նա ցուցաբերում է բարեպաշտ քրիստոնեուհու գծերը: Նամակն ավարտվում է դժվարությունների առջեւ գլուխ չծռելու վճռականությամբ:

Այս նամակը արտացոլում է ոչ միայն աքսորված որդու մոր հոգեկան զեղումները, այլեւ որդու հանդեպ տածած արցախցուհու անսահման սերը: Արցախցի մոր սրտի ներկապնակն այստեղ փալատակում է շռայլ ճաճանչներով: Արցախի հայ կինը իր կյանքը կտա ոչ միայն որդու համար, այլեւ ընտանեկան սրբությունը պահելու համար: ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնչրիստան գյուղի շրջակայքի ամենաբարձր սարը Սուլուր քարն է: Այստեղ, բլրակի վրա ցցված, մարդանման մի մեծ քար կա, որն իր գլխին պահում է կաթսայաձեւ մի այլ քար: Ավանդությունը պատմում է հետեւյալը. թաթարների տիրապետության ժամանակ մի

1. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ.9, Երեւան, 1958 թ., էջ 325:
2. «Բազմավեպ» հանդես, 1858 թ., հոկտեմբեր, էջ 290:
3. «Բազմավեպ», 1892, հուլիս, էջ 247:
4. Լ. Աթաբեկյան, Բանաստեղծություններ, Երեւան, 1970, էջ 60-63:

հայ կին կերակուր է եփում, հաց է պատրաստում եւ կաթսան գլխին դրած, տանում է հանդը՝ գութանավորների համար: Ճանապարհին մի քանի թաթարներ խեղճ կնոջ հետեւից են ընկնում: Ճարահատյալ կինը խնդրում է Աստծուն՝ քար դարձնել իրեն, որպեսզի չընկնի բռնավորների ձեռքը: Եվ իսկույն քարանում է կաթսայով միասին: Այս ավանդության իմաստը դարաբաղցի հայ կնոջ վեհությունն է, անչնազոհ նվիրվածությունն ու անսահման հավատարմությունը իր ընտանիքին:

Հեթանոսական ժամանակներից մեր օրերին է հասել արցախուհուն չար աչքից հեռու պահելու մի սովորություն, որ հատուկ է միայն Արցախին: Գերդաստանի իգական սեռի ներկայացուցիչներին չար աչքից, չարակնումից, նախանձից հեռու պահելու համար արցախեցին տան բակում կամ այգում տնկում է փռշնի (բռշնի) ծառ, որն ասես հուռութի դեր է կատարում կանանց համար:

Արցախի հայ կինը, աղջնակ, արբունքի հասած աղջիկ, հարս թե տարիքով կին լինի, պահպանում է հասակին համապատասխան ավանդությամբ հաստատված փոխհարաբերությունները: Այստեղ՝ փոքրը փոքր է, մեծը՝ մեծ: Արցախին նվիրված իր աշխատության մեջ Երվանդ Լալայանը ներկայացրել է Արցախում մինչեւ մեր օրերը պահպանված ազգակցության աստիճանները[1]:

Արցախի հայ կինը սիրում է շատ զավակներ ունենալ: Հնուց ի վեր Արցախը եղել է բազմազավակ մայրերի երկրամաս: Բազմազավակությունը երկարակյաց է դարձնում կնոջը: Պատահական չէ, որ ամենաերկարակյաց հայուհիներն ապրում են Արցախ-Ղարաբաղում: Նրանցից հիշենք միայն երկուսին՝ Մարտունի քաղաքի երկարակյաց Լուսիկ Եսայանին (ծնվ. 1897 թ.), որն ունի 5 զավակ, 20 թոռ եւ 50 ծոռ: Պատասխանելով «Խորհրդային Ղարաբաղ» օրաթերթի թղթակցի հարցին, Լուսիկ Եսայանն ասել է.«Մենք դիմացկուն ժողովուրդ ենք, պիտի իրար թեւ ու թիկունք լինենք, պայքարենք ազգովի ու միահամուռ, որպեսզի կարողանանք ապրել այս դաժան աշխարհում: Մեզ կարող է փրկել բազմազավակությունը: Եթե պատերազմը չլիներ, ամուսինս չզոհվեր, հինգը չէ, տասնհինգը կունենայինք, ու բերդ կլինեինք, շատ ու անկոտրելի»[2]:

Մարտակերտի շրջանի Մեծ շեն գյուղի երկարակյաց Շուշանիկ (Շուշի) Հարությունյանը (ծնվ. 1878 թ.) Արցախյան շարժման օրերին այսպես է արտահայտվել. «Մեռնելու մասին չեմ

1. Ե. Լալայան, Երկեր հինգ հատորով, հ.2, Երեւան, 1988, էջ 128-129:
2. «Խորհրդային Ղարաբաղ» օրաթերթ, 1990, 14 սեպտեմբերի:

մտածում: Թող քանդված-ավերված մեր գյուղը վերականգնվի, աչքովս տեսնեմ այդ ամենը, հետո մեռնեմ»:

Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի երկարակյացը Սաթենիկ Առաքելյանն է (ծնվ. 1886 թ.), որն ունի 15 թոռ ու 10 ծոռ: Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղից է 110-ամյա Մարյան-գյուլ Բարսեղյանը, որը ունի 16 թոռ եւ 50-ից ավելի ծոռներ ու կոռներ:

ՀՀ Տավուշի շրջանի Նոր Բուզլուխ գյուղում է բնակվում Արցախի եւ Հայաստանի Հանրապետության ամենափարեց բնակչուհին՝ 114-ամյա Մաշինկա Մովսիսյանը, որի կյանքի մեծ մասն անցել է իր հայրենի Ճահումյանի շրջանի Բուզլուխ գյուղում:

Արցախի երկարակյացներն աչքի են ընկնում իրենց աշխատասիրությամբ, բավարար տեսողությամբ ու հիշողությամբ, կենսուրախությամբ, լավատեսությամբ: Արցախի յուրաքանչյուր 10 երկարակյաց կանանցից 7-ը ակնոց չի օգտագործում: Տարիքը նրանց կորամեջք չի դարձրել: Նրանց մեծ մասի քայլվածքը թեթեւ է: Նրանք սիրում են շարժման մեջ լինել, զբաղվել որեւէ գործով: Անգործությունը անհարիր է Արցախի հայ կնոջ ներքին էությանը: Սովորաբար ասում են՝ զառամյալ կանայք շատախոս են դառնում: Բայց արցախեցի հայ կանայք շատախոսել չգիտեն եւ ծաղրում են շատախոս մարդկանց: Նրանք չափավոր սնունդ են ընդունում եւ հիմնականում բոլորն էլ քչակեր են:

ՆՇԱՆԱՎՈՐ ԱՐՑԱԽՈՒՀԻՆԵՐ

Նշանավոր արցախուհիների շարանը գրավոր աղբյուրներով կարելի է սկսել 5-6-րդ դարերի Աղվանքի թագավոր Վաչագան Բարեպաշտի կին Ճուշանիկից: Այդ անունը հիշատակվում է Մովսես Կաղանկատվացու գրքում. «Աղուանքի Ճուշանիկ թագուհին, որ չափազանց հավատացյալ եւ բարեսիրտ մի կին էր...»[1]: Նա օգնել է ամուսնուն հիմնադրելու Արցախի քաղաքամայր Գյուտականը՝ Տրտու գետի ափին, տարվա օրերի թվով եկեղեցիներ ու դպրոցներ բացել Արցախի բոլոր կողմերում: Արցախի գետերից մեկը այս թագուհու անունով կոչվում է Ճուշանա գետ: Դա վկայում է, որ նա աչքի ընկնող թագուհի է եղել: Ըստ ավանդության Ճուշանիկը փառապել է քոր հիվանդությամբ եւ ապաքինվել է այդ գետում լողանալուց հետո, որի համար էլ գետն

1. Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղուանից աշխարհի, էջ 45:

ստացել է Ճուշանա գետ անունը: Ճուշան անունն իր մեջ նաեւ ուրիշ իմաստ է պարունակում: Սոնա Զեյթլյանը գրում է, որ Վարդան Մամիկոնյանի երեց աղջկա՝ Ճուշանի «իսկական անունը Վարդանուհի կամ Վարդուհի էր, սակայն իր բարոյական մաքրության եւ քնքուշ բնավորության համար զինք Ճուշան կկոչեին, ծաղիկներուն մեջ անմեղության ու անբծության թագուհիին անունով»[1]: Հնարավոր է, որ այդպիսի անվանափոխություն ունեցած լինի նաեւ Վաչագան թագավորի կինը իր «բարոյական մաքրության եւ քնքուշ բնավորության համար»:

Վաչագան Բարեպաշտն ու Թագուհի Ճուշանիկն ունեցել են մի դուստր՝ Խնչիկ անունով, որի հետ է կապված Մարտակերտի շրջանում Դաստակերտ բնակավայրի հիմնադրումը: Այդ մասին մեզ տեղեկություն է հաղորդում Մովսես Կաղանկատվացին, ասելով, որ «սրան է տալիս սրբի մասունքների մի մասը եւ նույն դաստակերտում շքեղ կերպով ու պես-պես պատիվներով է տոնվում հիշատակը»[2]: Հրաչյա Աճառյանն էլ իր գրքում մեկնաբանում է, թե խոսքն ինչ մասունքների մասին է. «Նրա անունով Վաչագանը շինեց մի դաստակերտ, ուր դրին Ս. Գրիգորիսի մասանց մի կտոր եւ տոն հաստատեցին»[3]: Դրանով էլ սահմանափակվում են Խնչիկի մասին մեր ունեցած տեղեկությունները:

7-րդ դարի Աղվանքի մեծ իշխան եւ զորավար Ջեւանշիրի կնոջ անունը Խոսրովանուշ էր[4]: Պատմությունը նրա գործունեության մասին ոչինչ չի պահպանել, միայն իր աղոթքի մեջ Ջեւանշիրն մերյավորների անունները թվարկելիս առաջինը տալիս է Խոսրովանուշի անունը, որ հավաստում է իշխանի սերն առ իր կողակիցը. «Իսկ երբ համընդհանուր հարության օրը կգա, երբ աներեւույթները կփոխանորդեն երեւացողներին, փողային բարձրագոչ հնչյունները ննջեցյալներին կարթնացնեն քնից, եւ հրեղեն ջոկատները աշխարհի ծայրերից կհավաքվեն քեզ՝ ամենակալ թագավորիդ մոտ, այդ ժամանակ քո ուղեցույց խաչի միջոցով, որին ես ապավինել եմ, այցելիր ինձ ու իմ կողակից Խոսրավանուշին եւ իմ նախահայրերին, մանավանդ իմ ալեզարդ հորը՝ Վարազ-Գրիգորին ու իմ մորը՝ Գորիդուխտին, իմ եղբայրներին՝ Վա-

1. Ս. Զեյթլյան, Հայ կնոջ դերը, Անթիլիաս, 1968, էջ 10:
2. Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 62:
3. Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հԲ., Երեւան, 1944, էջ 516:
4. Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 147:

ռազ-Պերոժին ու Հեզուլ-Խոսրովին եւ իմ զավակներին»[1]: Այս-քանը: Թե ամուսնու եղերական մահից հետո ինչ ճակատագիր է ունենում Խոսրովանուշը, հայտնի չէ:

Իր պատմության մեջ Մ. Կաղանկատվացին գրում է. «Այդ ժամանակ նա (Աղվանքի իշխան Վարազ-Տրդատը) դիմեց Հեղինե իշխանուհու՝ Մեծ Հայաստանի տիկնոջ օգնությանը, որը հենց Աղվանքից էր. այս պատճառով էլ սա օգնեց նրան»[2]: Այս Հեղինեն ապրել է 7-8-րդ դարերում եւ հավանաբար եղել է հայ մարզպանի կին, որի համար էլ Մ. Կաղանկատվացին նրան անվանում է Մեծ Հայաստանի տիկին: Այս Հեղինեի մասին որեւէ հավելում անել չենք կարող, քանզի պատմական աղբյուրներում ոչ մի տեղեկություն չկա գործունեության մասին: Բայց հենց այն, որ արցախեցի (պատմիչը գրում է Աղվանքի, իմա՝ Արցախի) այս կինը Մեծ Հայաստանի իշխանավորի կինն է եղել, վկայում է այն իրողությունը, որ նա բարձրատոհմիկի դուստր է եղել, կամ արտասովոր գեղեցկություն է ունեցել, իսկ գուցե նաեւ՝ երկուսը միասին:

Նշանավոր արցախուհիների շարքում հիշատակելու արժանի է նաեւ Աղվանքի գահերեց իշխան Վարազ-Տրդատի գեղեցկուհի դուստր Շահանդուխտը[3], որը Սյունյաց աշխարհ հարս գնալու ժամանակ հարձակման ենթարկվեց ավազակների կողմից, ապա դրսեւորելով խիզախություն՝ իր ձիով թռավ անդունդ եւ ողջ մնաց: Ճիշտ է, նա իշխանուհի չդարձավ, բայց իրեն նվիրեց Աստծուն եւ սրբացավ: Սրբանալու համար էլ խիզախություն է պետք: Եվ կարելի է ասել, խիզախ հայուհիների ցուցակը սկսվում է հենց այս Շահանդուխտից:

Ստեփանոս Օրբելյանը իր նշանավոր պատմության մեջ հիշատակում է երեք Շահանդուխտ, երեքն էլ արցախեցի: Առաջինին մենք ներկայացրինք հանգամանորեն: Այս Շահանդուխտի մասին արժե ավելացնել Հր. Աճառյանի գրածը: Անվանի հայագետ-լեզվաբանը ոչ թե հենց այնպես վերապատմում է Ստեփանոս Օրբելյանի հաղորդածը, այլ իր հիացքն է ներարկում իր տողերի մեջ. «Շահանդուխտ, չքնաղագեղ դուստր Աղուանից Վարազ-Տրդատ իշխանի. հարս էր գնում մի հայ իշխանի: Տաթեւի մոտ դարանակալ պարսիկները հարձակվեցին առեւանգելու համար: Շահանդուխտը իր պատիվը կյանքից բարձր գնահատելով, նրանց ձեռքը չընկնելու համար, ժայռից ցած գցեց իրեն, բայց անվնաս մնաց ու ազատվեց, իբր նշան շնորհակալության այնտեղ մի մատուռ շինեց, ուր 30 տարի ճգնեց ու մեռավ»[1]:

Մյուս Շահանդուխտը, որի մասին գրել է Ստեփանոս Օրբելյանը, Աղվանից (Արցախ) Սեւադա իշխանի դուստրն էր, Սյունիքի Սմբատ Ա թագավորի կինը: Ապրել ու գործել է 10-11-րդ դարերում: Ամուսնու հետ վերաշինել է Սյունիքի Ցուրաբերդի եկեղեցին[2]: Ստեփանոս Օրբելյանը գրում է. «Թագուհի Շահանդուխտը, իր որդիներ Վասակն ու Սեւադան բարեպաշտ ու աստվածասեր Սմբատ թագավորի հոգու համար սուրբ եկեղեցուն նվիրեցին վեց հազար դրամ եւ Հաբանդ գավառի Տեղ գյուղը, որը նույն ինքը՝ Շահանդուխտն էր շենացրել խոպան վայրից: Եվ մեծամեծ նզովքներով վճռագիր գրեցին...»[3]:

Միաժամանակ՝ Տեղ գյուղն ազատվում է հարկերից: Ուշագրավ է, որ այս առթիվ Շահանդուխտի որդին՝ Վասակ արքան, գրում է. «Եվ վասն առաւել հաստատութեան գրեցի իմ ձեռքս զայս վճիռս՝ ես՝ Վասակ՝ որդի Սմբատայ թագաւորի, հրամանաւ իմ մորս... ի թուիս Հայոց 447 (998) եւ կնքեցաւ մերով մատանեաւս»[4]: Հետեւաբար Շահանդուխտի թագավոր որդին անսալով «մոր հրամանին», գրում է իր վճիռը, հանգամանք, որը վկայում է այրիացած թագուհու բարոյական եւ իրավական մեծ ազդեցության մասին: Ի դեպ, նույն առիթով Սյունյաց եպիսկոպոս Շահանդուխտին անվանում է «Սուրբ թագուհի»:

Շարունակության մեջ պատմիչը ընդհանրացնում է Շահանդուխտի գործունեությունը՝ ամբողջացնելով նրա կերպարը. «Ապա Աշոտի որդի Սահակի որդի Սմբատը, որ ամուսնացած էր Աղվանից մեծ ու փառաբանված իշխան Սեւադայի Շահանդուխտ անվամբ դստեր հետ, իր թոռ Կատրամիդեին՝ իրենից հետո թագավոր դարձած իր Վասակ որդու դստերը, կնություն էր տվել Ա-

1. Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 147:
2. Նույն տեղում, էջ 184:
3. Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 169-170:

1. Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ.Դ, էջ 106:
2. Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 210-211:
3. Նույն տեղում, էջ 251:
4. Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 293:

շոտի որդի Գագիկ թագավորին, որը եւ կառուցեց Անիի մեծ կաթողիկե սքանչելի, հոյաշեն եկեղեցին[1]:

Նրա իշխանությունը ժառանգում է իր կտրիճ որդի Վասակը, որը եւ մեծահանդես համախմբությամբ, ազատակույտ բազմությամբ օծվում է Սյունիքի ու Բաղքի թագավոր Սյունյաց եպիսկոպոս Տեր-Գրիգորի ձեռքով: Նա իր Սեւադա եղբորը դարձնում է իր ազատակույտ զորքերի իշխանաց իշխան: Սրանց մայրը՝ երանելի թագուհի Շահանդուխտը, դեռ կենդանի էր: Սա, աստվածային մի հիշեցումից մղված, շինում է Վաղադնի գեղեցկակերտ ու վայելչաձեւ վանքը, որը դեռ վաղուց ուխտադիր մարդկանց վայր էր, որովհետեւ այնտեղ վաղ ժամանակներից մի եկեղեցի կար Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով, որը նրա կողմից էլ հիմնադրված էր, հետո վերաշինված Ստեփանոս հոր եւ սուրբ ճգնավորի կողմից: Այն բուժում է թունավոր օձերից խայթվածներին, ինչպես որ Փարպու եկեղեցին է բուժում մարդու եւ անասունի անբուժելի կատաղի ցավը: Այստեղ հենց այժմ էլ տեսնում ենք անպատմելի հրաշքներ, թունավոր (զեռունների) խայթված, սեւացած ու պայթելու աստիճան ուռածներին հանում են բարձրադիր լեռները, ցույց տալիս վանքը եւ կամ եկեղեցուց մի քիչ հող են հասցնում, մակարդված թույնն իսկույն քայքայվում է, ու հիվանդը բուժվում:

Այդ պատճառով մեծ բարեպաշտ Շահանդուխտը Սյունիքի Ծղուկ գավառի Վաղադին գյուղում կոփածո քարերով եկեղեցի է շինում սուրբ նախավկա Ստեփանոսի անունով, հայոց չորս հարյուր քառասունինը (հազար) թվականին, այնտեղ հաստատում է կրոնավորների ու վանքի բազմաթիվ սպասավորների տուն: Եկեղեցու բակում շինում է նաեւ աղոթատուն՝ կրաշաղախ քարե շարվածքով, ինչպես նաեւ պահեստներ, արհեստանոցներ եւ վանքը շրջափակում պարսպով: Վանքի համար սահմաններ է առանձնացնում Վաղադնից, նրան է հանձնում Գոմեր ագարակը: Զանազան զարդերով պայծառապես զարդարում է եկեղեցին: Ինքն էլ վախճանվելով թաղվում է նույն սրբարանի բակում»[2]:

---

1. Խոսքը Անիի Մայր տաճարի մասին է, որը կրում էր նաեւ Ս. Աստվածածին անունը: Անիի հայկական ճարտարապետական այս հուշարձանը հիմնադրել է Սմբատ Բ թագավորը 989-ին, շինարարությունն ավարտվել է 1001-ին, Գագիկ Ա-ի օրոք՝ Կատրանիդե թագուհու հովանավորությամբ: Կառուցել է ճարտարապետ Տրդատը:

2. Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 256-258:

Սկզբնաղբյուրների վկայությամբ հայ ավատական տոհմերն ունեն իրենց հովանավորությունը վայելող վանքերը, որոնք դառնում էին հոգեւոր կենտրոններ, իրենց տերերի, նաեւ իշխանուհիների, թագուհիների կողմից սրանում էին նվերներ: Նման վանքերը դառնում էին նաեւ տվյալ տոհմի գերեզմանատունը: Վաղադնի վանքին նման դեր էր հատկացված: Այս վանքը թեեւ կառուցել էր Շահանդուխտը, բայց եկեղեցու մի արձանագրության մեջ ասվում է. «Շինեցաւ հրամանով թագաւորին Սնպատա ի ձեռն Շահանդխտո բարեպաշտ թագուհոյ»[1]: Այս արձանագրությունից հետեւում է, որ Շահանդուխտը եկեղեցին կառուցել է ոչ թե իր, այլ վախճանված ամուսնու անունով, ինչը դրսեւորում է նրա նվիրվածությունը ամուսնուն: Հնարավոր է, որ ամուսինը կենդանության ժամանակ կնոջ հետ հղացել է վանքի կառուցումը, որը իրականացվել է կնոջ կողմից: Հենց այդ վանքում էլ ամփոփվեց Շահանդուխտի դին: Ըստ Ղ. Ալիշանի, Շահանդուխտը պետք է վախճանված լինի 11-րդ դարի առաջին տասնամյակում[2]:

Երրորդ Շահանդուխտը Աղվանից (Արցախի) թագավորազն Սեւադայի դուստրն էր, որն իր քրոջ հետ կառուցել է Սյունիքի Զորք գավառի նշանավոր Վահանավանքը:

Շահանդուխտը ամուսնացած էր Սյունիքի Գրիգոր թագավորի հետ, որը Շահանդուխտի 1-ի թոռն էր: Սակայն Գրիգորը եւ Շահանդուխտը ժառանգ չունեցան, ուստի նրանց թագավորությունը,- գրում է Սյունյաց պատմիչը,- դատապարտված էր մնալ առանց գահաժառանգի[3]: Այդ պատճառով Շահանդուխտի հորդորով ամուսինը թագաժառանգ կարգեց Շահանդուխտի եղբորը՝ Սենեքերիմին, որին փոխարեն Արցախից բերեցին Սյունիք եւ հռչակեցին գահաժառանգ[3]:

Երկար չապրեց Շահանդուխտի ամուսինը, որին հաջորդեց Շահանդուխտի եղբայրը Սենեքերիմը, որը քույրերի՝ Շահանդուխտի եւ Կատայի հետ իր հայրենատիրույթ Արիտ գյուղը (Ծղուկ գավառում) նվիրաբերեց Սյունյաց Տաթեւ վանքին: Ուշագրավ է, որ այդ առթիվ կնքված պայմանագրում Սենեքերիմ արքան շեշտում է, որ այն կնքվել է ոչ միայն իր կամքով, այլեւ քույրերի կամքով ու «հրամանով»: Նվիրաբերված գյուղի դիմաց Սյունյաց թագավորն ստացավ պատարագներ քրոջ՝ Շահանդուխտի, նրա ամուսնու եւ մոր՝ Սոփիայի համար[4]: Այս պայմանագրից երեւում

---

1. Դիվան հայ վիմագրության, պրակ 2, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երեւան, 1960, էջ 100:

2. Տես Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 16:

3. Ստ. Օրբելեան, էջ 318:

4. Նույն տեղում, էջ 323:

է, որ Ճահանդուխտը կիսում էր եղբոր թագավորական իշխանությունը, մնում էր որպես Սյունյաց թագուհի:

1086 թ. Ճահանդուխտը քրոջ՝ Կատրայի հետ, անշուշտ, եղբոր աջակցությամբ Սյունիքի Զորք գավառում կառուցեց Վահանավանքը, որի ս. Աստվածածին եկեղեցու կառուցման առթիվ Ճահանդուխտը թողել է արձանագրություն, ուր ասվում է. «Ի ՇԼԵ թուականիս ես Ճահանդուխտ դուստր Սեւադայ Աղվանից թագաւորի եւ ամուսին Գրիգոր թագաւորի... վասն ոչ գոլոմերի միասին ժառանգ ըստ մարմնո, ես եւ քոյրս իմ Կատրայս շինեցաք զՍբ Աստծինս փոխարեն գրոց նորա»[1]:

Ճահանդուխտ 2-ը վախճանվեց 1116 թ.[2]: Պատմիչն այս մասին ասում է. «Երկար ժամանակ անց Բաղքի Գրիգոր թագավորի օրոք, ինչպես եւ Ճահանդուխտ թագուհու, Կատրայի, Սենեքերիմ թագավորի կողմից բազմաթիվ ու գեղեցիկ կառուցումներով առավել գեղցկացվեց Վահանավանքը: Կանգնեցրին մեծամեծ կամարներ՝ վրաններ, եկեղեցիներ, բազմասյուն ու բազմահարկ սրահներ, իշխանական հովանոցներ ու խրախճարաններ»[3]: Ստեփանոս Օրբելյանը նրան ներկայացնում է որպես երկիրը բարեշինող թագուհու, ապա գրում. «Իսկ հինգ հարյուր վաթսունհինգ թվականին (1116) մեծ ճգնությամբ վախճանվեց սուրբ թագուհի Ճահանդուխտը՝ Սենեքերիմ թագավորի քույրը»[4]: Այս նույն Ճահանդուխտին Հր. Աճառյանը ներկայացնում է այսպես. «Ճահանդուխտ թագուհի, դուստր Աղվանից թագավորազն Սեւադայի, քույր Սենեքերիմ Ա թագավորի Սյունյաց, կին Գրիգոր թագավորի Սյունյաց՝ որդվո Աշոտի: Անժառանգ լինելով, իր քրոջ՝ Կատրայի հետ շինեց ս. Աստվածածինը Վահանավանքը Զորք գավառում, Կապանի մոտ (1086 թ): Մեռել է 1116 թ.»[5]:

Արցախի երեւելի դեմքերից է եղել իշխանադուստր Սոփին՝ Մովսեսի դուստրը, Եսայի Աբու-Մուսեի թոռը: Աբու-Մուսե Եսային կամ Եսայի իշխանը եղել է Արցախի բոլոր ժամանակների ամենաքաջ զորավարն ու ամենապաղանդավոր բանաստեղծը: Գտիչ կամ Քթիշ ամրոցը գտնվում էր Մեծ Հայքի Արցախ նահանգի Մյուս Հաբանդ գավառում, հետագայում Դիզակի գավառի եւ այժմյան ԼՂՀ Հադրութի շրջանի Տող, Տումի, Մեծ Թաղեր գյուղերի արանքում առանձնակի բարձրացող Տողասար

1. Դիվան հայ վիմագրության, հ.2, էջ 138:
2. Ստ. Օրբելեան, էջ 335:
3. Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 216:
4. Նույն տեղում, էջ 279:
5. Հր. Աճառյան, Նշվ. աշխ., հ.Դ., էջ 107:

լեռան գագաթին: Իր անառիկության համար կոչվել է Գորոզ կամ Գորոզու բերդ անունները, որ նշանակում է հպարտ, խրոխտ բերդ: Այդ խրոխտությունը կապված է Արցախի լեգենդար իշխան Եսայու անվան հետ: Եսայի Աբումուսեն (Եսայի՝ հայր Մովսեսի), արաբական աղբյուրներում Իսա իբն Յուսուֆ Ապումուսե, Ապուսահլ, Մուսե եւ Յիսայի (ծննդյան եւ մահվան թվականներն անհայտ) գործել է 9-րդ դարում եւ իր խիզախությամբ աչքի ընկել արաբական բռնակալության դեմ մղված պայքարում: Ամրանալով Գտիչ ամրոցում մեկ տարվա ընթացքում (853 թվականի ամառվանից մինչեւ հաջորդ տարվա ամառը) Եսայի իշխանը 23 ճակատամարտ է տվել արաբ զորապետ Բուղայի 200-հազարանոց բանակի դեմ եւ մնացել անպարտելի: Եսայի իշխանը Գտիչ ամրոցի իր հերոսամարտերով հաստատեց աշխարհին, թե ինչպիսի ուժ ունի Արցախահայության դիմադրական ոգին: Արաբ զորավար Բուղա Ճարաբին, իր ահեղ բանակի գլուխն անցած, ոտքի կանգնելով այլեւայլ երկրներ, մտավ Արցախ՝ դյուրին հաղթանակ ձեռք բերելու հույսով, բայց դեմ առավ Գտիչին՝ նրա ձեռնարկած 28 գրոհներն էլ ապարդյուն անցան: Հայերը ջարդում եւ ետ էին շպրտում հակառակորդին: Բուղան փորձում էր սպառնալիքներով երկյուղ ներշնչել Եսայի իշխանի հոգում: Բայց արցախեցի զորավարը նվաճողին նայում էր լեռան բարձունքից եւ դյուցազնի արժանապատվությամբ պատասխանում նրան: Թովմա Արծրունու երկում պահպանվել է Եսայի իշխանի պատասխանը, որն իր հերոսականության ոգով ազատության համար մարտնչողի բացառիկ վավերագիր է համաշխարհային չափանիշով: Այդ պատասխանի մասին Լեոն գրել է.«Դժվար թե գտնվի մի այլ վավերագիր, որի մեջ այդպիսի կլասիկ պարզությամբ արտահայտված լինի լեռնական մի պարզամիտ ժողովրդի հոգին»:

Ահա այդ քաջ իշխանի թոռն է Սոփին: Մակար Բարխուդարյանը գրում է, որ Եսայի իշխանի թոռնուհին Տումի գյուղի հարավային կողմում կառուցել է մի եկեղեցի, որ կոչվում էր Կարմիր[1]: Միջնադարյան Արցախի բազմահմուտ գիտակ Բագրատ Ուլուբաբյանը գրում է. «Մակար եպիսկոպոսն իշխանադստեր արձանագրության մեջ Սոփի անվան փոխարեն սխալմամբ կարդացել է Ոսկի[2]»: (Այս արձանագրությունը՝ դռան ճակատակալ քարի վրա, այժմ պահվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

1. Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 79:
2. Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երեւան, 1975, էջ 63:

թանգարանում»[1]: Ապա Ուլուբաբյանն ավելացնում է, որ «Եսայի Աբու Մուսեի ժառանգներից գիտենք նրա որդի Մովսեսին եւ երեք թոռներին՝ Գագիկին, Վաչագանին ու Սոփիին»[2]:

Վերոհիշյալ արչանագրությանն անդրադարձել է նաեւ Լեոն: Նրա երկերի ժողովածուի ծանոթագրության բաժնում կարդում ենք. «Այնտեղ (արչանագրության մեջ) կարդում ենք. «Ի ՆԽԹ (1000) թվին հայոց եւ ի թագավորութեանս տեառն Գագիկա՝ որդվո Մուսեի, ես՝ Սոփի՝ դուստր Մուսեի, շինեցի տուն աստուծո ի փրկություն հոգվո իմո եւ ծնողաց իմոց»: Սոփին ու Գագիկ թագավորը Մուսեի զավակներն էին, իսկ Մուսեն՝ որդին այն Եսայի Աբու Մուսեի, որը Բուղայի զորքերի դեմ հաղթական ճակատամարտեր տալուց հետո զոհ դարձավ խարդավանքի եւ 854 թ. տաժանակրության քշվեց Սամարա (Արաբիա)[3]:

Միջնադարյան Արցախի նշանավոր հայուհիներից մեկն է Արզու խաթունը: Նա մտնում է այն բացառիկ հայուհիների ցանկի մեջ, որին համեմատել են աստվածուհու հետ: Նրա անունը կապված է հայկական ճարտարապետական հրաշալիքներից մեկի հետ: Արզու խաթունի մասին Կիրակոս Գանձակեցին գրել է. «Այս տարում ավարտվեց Գետիկի հռչակավոր ու ծիծաղաշտեսք եկեղեցին, որ կառուցեց Մխիթար վադապետը միաբանների հետ՝ Հաթերքի տեր՝ խաչենցի Վախթանգի ու իր եղբայրներ Գրիգորի, Գրիգորիսի, Խոյդանի, Վասակի, այլեւ բարեպաշտ իշխաններ՝ Քրդի որդիներ Դավթի ու Սադունի, սրանց քույր Արզուխաթունի՝ հաթերքցի Վախթանգի կնոջ օգնությամբ: Սա շատ բաներում օգտակար եղավ. իր դուստրերի հետ պատրաստեց նաեւ գեղեցիկ վարագույր, սուրբ խորանի ծածկույթը, որ հիացնում էր տեսնողներին, պատրաստված էր այծերի շատ փափուկ աղվամազից, ներկված էր պես-պես ու գույնզգույն, գործված էր քանդակաչեւ ու նկարված էր պատկերներով՝ Փրկչի մարդեղության ու այլ սրբերի ճշգրտագույն (նկարների) ընդօրինակությամբ, որ հիացնում էր տեսնողներին: Ովքեր տեսնում էին, Աստծուն օրհնություն էին տալիս, որ այդ կանանց ոստայնանկության իմաստություն ու

1. Տումուց այդ արձանագրությունը Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարան է տեղափոխել գրող Հրաչյա Բեգլարյանը: («Սովետական Ղարաբաղ», 1989 թ, 31 մարտի)
2. Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 64:
3. Լեո, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 536: Տաժանակրության այս տարեթիվը Բ. Ուլուբաբյանը համարում է 855-ը եւ գրում է «Միայն խարդավանքով Բուղային հաջողվեց ընկճել Գոհիչի հերոսին: Հայ մյուս իշխանների հետ Եսային արաբական տաժանակրության քշվեց 855 թ.» (Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 63):

նկարակերտության հանճար տվեց, ինչպես որ ասված է Հոբի գրքում: Ոչ մի բան պակաս չէր խորանի զարդարանքից, որ արին Բեսելիելն ու Եղիաբը. հանդգնություն չէ այս ասելս, որովհետեւ նույն հոգին էր, որ թե նրանց, թե սրանց ոգեշնչում էր: Նա ոչ միայն այս եկեղեցու համար ծածկույթ պատրաստեց, այլեւ ուրիշ եկեղեցիների՝ Հաղպատի, Մակարավանքի ու Դադի վանքի, որովհետեւ այդ բարեպաշտ կինը չափազանց սիրում էր եկեղեցիները»[1]:

Հավանաբար այստեղ խաչքարեր պատրաստելիս քարագործներն ընդօրինակել են Արզուխաթունի գործած ժանյակների առանցին դրվագներ: Այդ խաչքարերի մասին ժամանակին այսպես են գրել. «... Ոչ մի տեղ, ոչ մի վանքի մեջ հավասարը չունեն»[2]:

Դադիվանքի եւ Արզուխաթունի մասին Սեդրակ Բարխուդարյանն այսպես է գրել. «Բազմաթիվ այլ արչանագրությունները եւ գրավոր տեղեկությունները վկայում են, որ 12-րդ դարից սկսած վանքի հովանավորը եղել է Արցախի ամենանշանավոր Վախթանգյան տոհմը, եւ վանքը՝ նրա հոգեւոր կենտրոնն ու դամբարանատունը: Վանքի առաջնորդները եւս այդ տոհմից են նշանակվել: Առավել նշանակալից վաստակ ունի Վախթանգյան տոհմի տիկին Արզուխաթունը. նա է կառուցել վանական շենքերից ամենագեղեցիկն ու ամենածախսը՝ ս. Նշան կոչվող գմբեթավոր եկեղեցին, որն իր ճարտարապետական եւ կառուցողական վարպետությամբ Արցախի լավագույն հուշարձաններից մեկն է: Արվեստագետ եւ հասարակական գործիչ Արզուխաթունը դուստրն է Մահկանաբերդի Քուրդ իշխանի, որը հովանավորում եւ աջակցում էր Մխիթար Գոշի գործունեությունը: Արզուխաթունն, ամուսնանալով Արցախի իշխան Վախթանգի հետ, իր հասարակական գործունեությանը զուգակցեց նաեւ ասեղնագործությունը: Արզուխաթունն իր աղջիկների հետ ասեղնագործել է մի քանի նշանավոր վանքերի վարագույրները (Հաղպատ, Մակարավանք, Դադիվանք եւ այլն): Ժամանակի պատմագիր եւ ականատես Կիրակոս Գանձակեցին, նկարագրելով այդ վարագույրները, նրանց արվես-

1. Կ. Գանձակեցի, Հայոց պատմություն, Երեւան, 1982, էջ 156-157:
2. Ն. Մ. Թանգ., Գանձասարը եւ Խութք վանքերը, «Նոր դար», 1891, թիվ 123:

տը համեմատում է բիբլիական նկարիչներ Բեսելիելի եւ Եղիաբի հետ»[1]:

Բագրատ Ուլուբաբյանը, որը հանգամանորեն ուսումնասիրել է Դադիվանքի պատմությունն ու Արզուխաթունի գործունեությունը[2], գրում է. «1184 թ., երբ Մխիթար Գոշը մահմեդականներից հալածված եւ Գանձակում նստող Աղվանից կաթողիկոս Ստեփանոսի խարդավանքներից զզված՝ ապաստանել է Հաթերքում, այնտեղի, այլեւ ամբողջ Խաչենի իշխանաց իշխանն էր Վախթանգը: Միջնադարի մեր մեծ իրավագետն ու պատմիչը նշում է, որ ինքը Դատաստանագիրքը սկսել գրել «ի թուականութեանս հայոց ՈԼԳ (1184)... յամս անիշխանութեան մերոյ ի վաղնջուց՝ ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանաց ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ կրաւնաւորեցելոյ եւ որդւոյ նորա Վախթանգայ ի դղեկին, որ անուանի Հայթերք, գլխաւորի այլոց իշխանաց եւ կողմանցն Կիւղիկեայ՝ մեծի իշխանին Ռուբենի...»[3]: Ապա Ուլուբաբյանը շարունակում է. «Մխիթար Գոշը եւս վկայում է, որ Վախթանգն իսկապես գահերեցն էր Խաչենի իշխանության («գլխաւոր այլոց իշխանաց»), եւ նրա իշխանության առավել նշանակալից եւ հուսատու բեկորն էր վաղնջուց կորսված հայոց թագավորութեան:

Վախթանգն ու եղբայրները Արզուխաթունի հետ մի քանի տարի անց (1191) Գոշի համար կառուցում են Նոր Գետիկի վանքը՝ մեծապես օժանդակելով հյուսիս-արեւելյան Հայաստանի այդ նշանավոր հոգեւոր կենտրոնի հիմնադրությանը:

Այս առթիվ Նոր Գետիկի վանքի աջակողմի երկրորդ խորանի ճակատին դրոշմված արձանագրության մեջ ասվում է. «Ի Ոխ թուին... սկսեալ եկեղեցիս ս. ի նորս Գետիկ եւ կատարի ամս է... ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանին Վախտանկայ եւ նորին գուգակցին Արզու խաթունին»[4]:

Գոշը հետագա իր գործունեության ընթացքում միշտ էլ երախտագիտությամբ է հիշել Վախթանգին ու նրա եղբայրներին, հատկապես Վախթանգին ու նրա կին Արզուխաթունին (վերջինս Կայենի ու Մահկանաբերդի տեր եւ Տփխիսի ամիրա Քրդի դուստրն էր, Դավիթ ու Սադուն իշխանների քույրը)»[5]:

---

1. Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 215-216:
2. Տես Բ. Ուլուբաբյան, Դադի կամ Խութա վանքը, «Էջմիածին», 1971, էջ 62-73:
3. Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, էջ 146
4. Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 350:
5. Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը... էջ 141:

Մխիթար Գոշը իր «Դատաստանագրքի» մի օրինակը Վախթանգին ու Արզուխաթունին է նվիրել երախտագիտական ընծայագրով. «Յիսուս Քրիստոս, յորժամ գաս ի նորոգել զերկիր, նորոգեա հոգւով եւ մարմնով զաստուածասէր իշխանն իշխանաց զՎախթանգ եւ զամուսին իւր զԱրզուխաթուն ի կեանս անմահս»[1]: Պահպանվել է նաեւ Գոշի «Դատաստանագրքի» Վախթանգին ու Արզուխաթունին նվիրված մի այլ օրինակ՝ հեղինակի այսպիսի ընծայագրով. «Տէր Աստուած վայելել փայլեա աստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Վախթանգայ՝ որդւոյ Հասանայ ի կամս իւր զգիրքս Դատաստանի անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին»[2]:

Արզուխաթունը եւ նրա Մամա դուստրը հույժ ճարտար եւ բեղմնավոր եղան նրբարվեստ վարագույրներ ստեղծելու մեջ[3]:

Եթե Արզուխաթունը եւ նրա դստրերը Հաթերքում ստեղծել էին մեծ արհեստանոց եւ գործում էին գորգեր[4], սուրբ խորանի ծածկույթներ ու վարագույրներ, որոնց վրա «ճշգրտագոյն հանուածովք» կային փրկչի ու այլ սրբերի պատկերներ, իր ուշադրավ եզրահանգումն է անում Բագրատ Ուլուբաբյանը, եւ սրանք՝ մի այնպիսի վարպետությամբ, որ պատմիչը նրանց մեջ տեսնում էր «հանճար նկարակերտության», ապա մենք հնարավոր ենք համարում, որ նրանց ձեռքի գործը լինեն նաեւ Դադիվանքի՝ հենց Արզուխաթունի կառուցած կաթողիկեի որմնանկարները[5], որոնցում դարձյալ փրկչի ու այլ սրբերի նկարներն են՝ սյուժետային տարբեր արտահայտություններով»:[6]

Արզուխաթունը դրսեւորել է իրեն նաեւ որպես մեծ բարեգործուհի: 1214 թ. Դադիվանքի կաթողիկեն կառուցելուց հետո նա մեծամեծ նվերներ է տվել եկեղեցուն, նրանց հետ նաեւ «երկու տուն (ընտանիք) յԱրփա»[7]:

---

1. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 407:
2. Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 147, տես նաեւ «Բազմավեպ», 1848, էջ 117:
3. Տես Վ. Հացունի, Հայուհին պատմութեան առջեւ, Վենետիկ, 1936, էջ 201-202, 251:
4. Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը (սկզբից մինչեւ մեր օրերը), Երեւան, 1994, էջ 73:
5. Տես Մեսրոպ Մագիստրոս (Տեր-Մովսիսյան Մեսրոպ Մագիստրոս), Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինությունները, Երուսաղեմ, 1938, էջ 86 բ-87 ա:
6. Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դդ., էջ 246:
7. Նույն տեղում, էջ 271:

Այս ամենը վկայում է, որ Արզուխաթունը եղել է հայ ժողովրդի շնորհալի դստրերից մեկը, որի մասին քիչ բան գիտեն մեր ժամանակակիցները: Նրա անվամբ ո՛չ դպրոց կա, ո՛չ փողոց: Ժամանակին շուշեցիներն ուզում էին իրենց քաղաքում ասեղնագործության ուսումնարան բացել եւ կոչել այն Արզուխաթունի անունով: Այդ մտահղացումը կարելի է իրագործել այժմ:

Դադի վանքի 1214 թ. արձանագրության մեջ ասվում է, որ ամուսու եւ երկու որդիների մահից հետո Արզու տիկինն ավարտել է այդ վանքի գմբեթավոր եկեղեցու շինությունը: Վշտաբեկ մոր եւ ամուսնու սրտի մորմոքն է արտահայտված հիշյալ արձանագրության մեջ, ուր ասվում է. «Ես՝ Արզուխաթունս... ամուսին Վախթանկա թագաւորազնո տեառն Հաթերքո եւ ամենայն Վերին Խաչենո յուսով մեծաւ շինեցի զսուրբ կաթողիկէս ի տեղոջ հանգստարանի առն իմո եւ զաւակաց իմոց՝ Հասանա՝ անդրանիկիս իմո եւ Գրիգորի, որ եւ ի տէրն կիսաւրեայ վախճանելոց. զի վասն իմ մեղաց խրատեաց զիս Աստուած եւ եբարձ ի գլխո իմո զերկոսեան պսակսն վայելուչ, զի անդրանիկն իմ Հասան սպանաւ ի թուրքաց պատերազմին վասն քրիստոնեական հաւատոյս եւ զկնի երից ամսոց եւ կրտսեր որդին իմ Գրիգոր տէրն կոչեցեալ զպարտ բնութեանս հատուցանելով վճարեաց եւ փոխեցաւ առ Քրիստոս՝ սուգ անմխիթար թողելով թշուառացելո մաւրս իւրեանց»[1]:

Նույն արձանագրությունից հետեւում է, որ Արզուի ամուսինը եւ որդիները իրենց կենդանության ժամանակ մտահղացել էին կառուցել Դադի վանքի այդ եկեղեցին, սակայն վերահաս մահը խանգարել էր դրան: Ուստի, շարունակում է հեգ կինը եւ մայրը, նրանք «ինչ աւանդեցին անդարձիւ կատարել զփափագ սրտուց նոցա. եւ իմ յանձն առեալ մեծ յուսով եւ շատ աշխատութեամբ շինեցի զքաւարանս վասն փրկութիւն ոգոց նոցա եւ իմո եւ դստերաց իմոց եւ ամենայն զարմից»[2]:

Դադի վանքի տոհմական դամբարանում է թաղված նաեւ Արզու տիկինը (մահվան թվականը հայտնի չէ)[3]:

Միջնադարյան Արցախի տաղանդավոր հայուհիների մի բույլ կապված է Հասան Ջալալ Դոլայի ու նրա նշանավոր գերդաստանի հետ:

---

1. Դիվան հայ վիմագրության, 5, Արցախ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երեւան, 1982, էջ 199:

2. Նույն տեղում:

3. Դադի վանքի մասին տես նաեւ Բ. Ուլուբաբյան, Դադի կամ Խութք վանք, «Էջմիածին», 1971 թ., թիվ 6-7:

«Հասան Ջալալ Դոլա (ծ. թ.՝ անհայտ - 1260, Ղազվին), Հայոց Արեւելից կողմանց գահերեց իշխան: Առանշահիկների տոհմից, Վախթանգ Տանգիկի եւ Ջաքարյան Սարգսի դուստր Խորիշահի որդին: Հասան Ջալալյանների տոհմի հիմնադիրը: Ներքին Խաչենի իշխանությունը ժառանգել է 1214-ին եւ դարձել Արցախի ու հարակից հայկական շրջանների իշխանների գահերեցը: Կոչվել է նաեւ «թագավոր», «ինքնակալ»: Փորձել է եւ վանել թաթար-մոնղոլների առաջին արշավանքները, սակայն, հետագայում ընդունելով նրանց գերիշխանությունը, հմուտ դիվանագիտությամբ իր երկրամասն ու Արեւելյան Հայաստանը զերծ է պահել բռնագրավիչների վայրագություններից: Այդ նպատակով երկու անգամ մեկնել է Կարակորում մեծ խանի մոտ, եւ Հայաստանի համար ֆեռք բերել արտոնություններ: Նրա միջնորդությամբ բարեկամական հարաբերություններ են հաստատվել Կիլիկիայի հայոց թագավորության ու մոնղոլների միջեւ: 1260-ին միացել է մոնղոլների դեմ Վրաստանում բռնկված ապստամբությանը, որի ճնշումից հետո Արղուն խանի կարգադրությամբ սպանվել է:

Վարել է նաեւ մշակութային-շինարարական գործունեություն. կառուցել է Գանձասարի վանքը (1216-1238), Վաճառի եկեղեցին (1251), հիմնովին վերակառուցել Կեչառիսի վանքը (1248): Նրա պատվերով է ստեղծվել հայկական առաջին համահավաք Հայսմավուրքը (1240-ական թ.թ.)»[1]:

Հասան Ջալալ Դոլայի մասին հիմնական տեղեկությունները պահպանվել են Կիրակոս Գանձակեցու երկում. «Գնացին նաեւ Ջալալ անվանված բարեպաշտ իշխան Հասանի վրա: Սա մեծամեծ իշխաններ Ջաքարեի եւ Իվանեի քեռորդին էր, մի բարեպաշտ, աստվածասեր, հեզ ու հանգիստ, ողորմած ու աշխատասեր, անապատականների նման աղոթքների ու աղաչանքների մեջ ճգնող»[2]:

Այնուհետեւ պատմիչը պատմում է, թե նա ինչպիսի ճկուն քաղաքականություն է վարում մոնղոլների հետ. «Երբ այս իմաստուն իշխանը տեսավ անօրենների հարձակումը, իր երկրի բնակիչներին ամրացրեց պարսկերեն լեզվով Խոխանաբերդ[3] կոչված ամրոցում: Երբ (թաթարները) եկան այն պաշարելու, տեսան, որ

---

1. Հայկական սովետական հանրագիտարան, հ.6, էջ 246:

2. Կ. Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 192-193:

3. Խոխանաբերդ, ամրոց Մեծ Հայքի Արցախ նահանգի Խաչեն (Ներքին Խաչեն) գավառում, Խաչենագետի աջ ափին, անտառապատ բլրի վրա, Գանձասար վանքից հարավ, այժմյան ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտ:

հնարավոր չէ այդ ամրությունները գրավել, հեշտությամբ ու խաղաղությամբ նրան կանչեցին իրենց մոտ: Նա իմաստնաբար գոհացրեց նրանց: Հետո բազմաթիվ ընծաներով ինքն էլ նրանց մոտ գնաց: Նրան մեծարելով՝ նրա երկիրը հանչնեցին իրեն եւ այն էլ մեծացնելով: Նրան հրամայեցին ամեն տարի իրենց հետ պատերազմի գնալ եւ հավատարմությամբ հնազանդ մնալ իրենց: Իսկ նա խոհեմաբար կարգավորեց իր երկիրը. ինչ որ կարող էր առնել երթեւեկողների կարիքների համար, առնում էր, երբ գալիս էին նրանց մոտ, թե ուտելիք եւ թե այլ ինչ ինքը առնում պահում էր ու իր կողմից ավելացնելով՝ տալիս էր նրանց, երբ որ նրա մոտ էին գալիս, եւ (նրանք) երկրին նեղություն չէին տալիս, բայց թե նրա մոտ էին գալիս: Իսկ այլ երկրներում այսպես չէին վարվում, այլ ուր որ հասնում էին, ամեն տեղ նեղում էին նրանց»[1]:

Հասան Ջալալ Դոլայի գործունեության մեջ կարեւոր տեղ է գրավում Գանչասարի կառուցումը: Գանչասարը գտնվում է այժմյան ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի դիմացի բլրի վրա, գյուղից մոտ 2 կմ հարավ-արեւմուտք: Տաճարը 1216-1238 թվականներին կառուցել է Հասան Ջալալ Դոլան, իսկ գավիթը, որն իր ճարտարապետական հորինվածքով նման է Հաղպատի ս. Նշան վանքի նույնատիպ կառույցին, հիմնադրել են Հասան Ջալալ Դոլան եւ նրա կին Մամքանը 1261-ին եւ ավարտել է նրանց որդի Աթաբակ-Իվանեն՝ 1266-ին: Տաճարի գլխավոր կառույցը Հովհաննես Մկրտչի եկեղեցին է: Կիրակոս Գանչակեցին, որ եղել է Վանքի կառուցման ականատեսը, գրել է. «(Սա) Գանչասար կոչված վանքում, Խոխանաբերդի հանդեպ, իրենց շիրմատեղում կառուցեց գեղեցկազարդ հորինվածքով, գմբեթաչեւ, երկնանման, Աստծու փառքի տաճար մի եկեղեցի, ուր մշտապես պատարագվում է Աստծու գառը, որ վերցնում է աշխարհի մեղքերը: Շատ տարիներ չարչարվեցին նրա համար:

Երբ ավարտվեց, բացման մեծահանդես տոն կատարեց եկեղեցին օրհնելու համար»[2]:

Գանչասարի վանքի հետ է կապված հայ մշակույթի լուսատու աստղերից մեկի՝ խաչենցի եպիսկոպոս Տեր-Իսրայելի (մահացել է 1249-ին) գործունեությունը: Տեր-Իսրայելը Հասան Ջալալի եւ Վանական վարդապետի հանչնարարությամբ խմբագրել եւ ազգապահպանման պահանջներին է հարմարեցրել «Հայսմավուրքը»: Ինչպես նշում է Մայիս Ավդալբեկյանը, Տեր-Իսրայելը

1. Կ. Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 192-194:
2. Նույնը, էջ 194:

հունական Հայսմավուրքի վրա հունական եւ համաքրիստոնեական տոների շարքում տեղ է բացել հայ գործիչների հիշատակին նվիրված տոների համար, այսպիսով նա ազգային նկարագիր է տվել համաքրիստոնեական ժողովածուին: Տեր-Իսրայելը Հայսմավուրք ժողովածուի դեմքն ազգայնացրել է, հարստացրել հայ իրականության արտացոլումով, հայ կյանքի դրվագումներով, հայ գործիչների սրբախոսական պատմություններով: Մայիս Ավդալբեկյանն ընդգծում է, որ այդ առումով Տեր-Իսրայելի կատարածը մեծագույն սխրագործություն է հայ մշակույթի պատմության մեջ[1]: Տեր-Իսրայելի մասին այստեղ շեշտեցինք այն պատճառով, որովհետեւ նրա գործունեությունը կապված է Հասան Ջալալ Դոլայի եւ նրա կնոջ հետ:

Գանչասարի տաճարը: Համաշխարհային ճարտարապետության մեծ հրաշալիքներից է: Փարիզի Սորբոնի համալսարանի բյուզանդական ճարտարապետության պրոֆեսոր Շառլ Դիլը 1907 թվականի մարտի 6-ին իր ելույթում նշել է հայկական ճարտարվեստի գործերից համաշխարհային մշակույթի գանչարան մտած հինգ գործեր՝ հետեւյալ հաջորդականությամբ. առաջինը Աղթամարի Սուրբ Խաչ տաճարն է, երկրորդը՝ Էջմիածնի Հռիփսիմեի տաճարը, երրորդը՝ Գանչասարի վանքը, չորրորդը՝ Հաղպատի վանքի հյուսվածքը, հինգերորդը՝ Անիի Մայր տաճարը: Ականավոր հնագետ ու արվեստաբան Անատոլի Յակոբսոնը հավաստում է, որ Գանչասարը «հայ ճարտարապետության մարգարիտն է, հայկական միջնադարյան ճարտարապետության ու կոթողային քանդակագործության եզակի հուշարձանը» եւ ավելացնում, որ այն պետք է համարել «13-րդ դարի հայ ճարտարապետության հանրագիտարանը»: Գանչասարը, շարունակում է Յակոբսոնը, ոչ միայն ինքնատիպ է ու իր կատարելության մեջ ինքնուրույն, այլեւ բացառիկ է. «Մենք չենք կարող ցույց տալ ուրիշ մի այդպիսի հուշարձան Հայաստանի հողի վրա:

Ահա Գանչասարի եւ այն կառուցող Հասան Ջալալ Դոլայի հետ են կապված մի քանի փառապանծ արցախուհիներ: Սկսենք Հասան Ջալալ Դոլայի մայր Խորիշահից: Նրա մասին Կ. Գանչակեցին գրել է. «Այլեւ բարեպաշտուհի էր սրա մայրը. իր Տանկիկ կոչված ամուսին Վախթանգի մահից հետո տնավորեց իր երեք որդիներ Ջալալին, Ջաքարեին ու Իվանեին, գնաց սուրբ քաղաք

1. Մ. Ավդալբեկյան, «Հայսմաւուրք» ժողովածուները եւ նրանց պատմագրական արժեքը, Երեւան, 1982, էջ 67:

երուսաղեմ եւ բազմաթիվ փարիներ ճգնությամբ անցկացրեց այնտեղ. զարմացնում էր բոլոր տեսնողներին ու լսողներին, քանի որ ամբողջ ունեցվածքը Աբգարի կնոջ՝ Հեղինեի[1] նման ծախսելով աղքատների ու կարոտյալների վրա՝ ինքն իր ձեռագործով էր կերակրվում: Եվ այնտեղ էլ մեռավ, որին Աստված փառավորեց իբրեւ իր փառավորիչի՝ կամարաձեւ լույս կանգնեցնելով նրա գերեզմանի վրա՝ ուրիշներին նույնպիսի բարեգործությունների հորդորելու համար»[2]: Գանձակեցու այս տեղեկության մեջ ուշագրավ է այն փաստը, որ Խորիշահը զբաղվում էր ասեղնագործությամբ եւ երուսաղեմում իր ապրուստը հայթայթում էր ձեռագործով: Սա վկայում է, որ Խորիշահն էլ Արզուխաթունի նման հրաշալի ասեղնագործել գիտեր: Պահպանվել է ամուսիններ Վախթանգի ու Խորիշահի կենսագրությանը վերաբերող մի հիշատակարան:

Հր. Աճառյանը այս Խորիշահի մասին այսպես է գրում. «Խորիշահ, դուստր մեծ սպարապետ Սարգսի, քույր Զաքարն սպասալարի, կին Վախթանգ Տանկիկի՝ տեառն Խաչենոյ: Հասան Զալալ Դոլայի մայրն է: Վերաշինեց Մեծառանց վանքը 1212 թ.: Ուխտ գնաց երուսաղեմ եւ վերադարձավ ամուսնու մահից հետո, երբ որդին՝ Հասան Զալալ Դոլան, սկսել էր շինել Գանձասարի վանքը (1216 թ.), եւ արդեն արեւելյան լուսամուտն էին խփում, «կրոնավորյալ» գնաց երուսաղեմ երկրորդ անգամ եւ արդեն ի դրան Յարության խորանազգեաց ճգնությամբ, բազմամյա ժուժկալությամբ հանգավ ի Քրիստոս լուսո վկայութամբ եւ անդեն պահեցավ» (նախքան 1240 թ.): Յիշատակ[3]:

Այն ժամանակ միջնադարի մեր իրականության մեջ ընդունված էր նոր բարձրացող վանական-մշակութային կենտրոնների համար գրչության նշանավոր եւ զարգացած կենտրոններում ձեռագիր գրքեր պատվիրել: Եվ Անիում Հասան Զալալ Դոլա իշխանը մոր՝ Խորիշահ իշխանուհու նախաձեռնությամբ 1216 թ. ի վեր վերաշինվող ու բարգավաճող Գանձասար վանքի համար պատվիրել էր «Գանձասարի Կարմիր Ավետարան» հայտնի ձեռագիրը, որն այսօր պահպանվում է հեռավոր Ամերիկայի Չիկագո քաղաքի համալսարանական գրադարանում եւ մեր մշակույթի պատմության համար բազմաթիվ առումներով մի իսկական գանձարան է[1]: Խորիշահի անունը պետք է ոսկե տառերով գրվի մեր պատմության մեջ, եւ հայոց երախտավորների շարքում պատշաճ դափնեպսակով արծաթազօծվի այն:

Հասան Զալալ Դոլայի կնոջ անունը Մամքան է:

Ս. Բարխուդարյանը նշում է, որ Մամքանի անունը հիշատակվում է այն գեղաքանդակ խաչքարերի վրա, որ գտնվում է վանքից մոտ 200 մետր ներքեւ, անտառի մեջ, դեպի գյուղ[2] տանող ճամփից քիչ հեռու՝ Դերի խաչ կոչվող վայրում:

Հասան Զալալի կենսագրության նշանակալից մասն է կազմում նրա շինարարական գործունեությունը՝ ծավալված հայրենի Խաչենում եւ Խաչենի սահմաններից դուրս՝ Հաղպատում ու Կեչառիսում: Ամենուր նրա հետ է կինը՝ բարեպաշտուհի Մամքանը, որն ինչպես ամուսնու հետ, այնպես էլ նրանից զատ՝ եւ որդի Աթաբակի հետ, եւ միայնակ, եկեղեցիներ է նորոգում ու կառուցում, խաչքարեր է կանգնեցնում, օժանդակում մատյաններ ստեղծելուն, ապա նվիրում է հայրենի վանքերին[3]: Ուլուբաբյանը թվարկում է Մամքանի կատարած բարեգործությունները:

«1248 թ. Հասան Զալալն ու Մամքանը հիմնովին նորոգել են նետոդայ ազգի (թաթար-մոնղոլների) ավերած Կեչառիսի վանքը... 1251-ին Մամքանն ինքն է հայրենի Վաճառում եկեղեցի շինել տալիս: Գանձասարի վանքի գավիթի վիմագիրը քանդակվել է 1261 թ.: Արձանագրության մեջ որպես կտիտորներ (պատվիրատուներ) հիշատակված են Հասան Զալալը, Մամքանը, նրանց որդի Աթաբակը»[4]: Գանձասարի նորաշեն այդ եկեղեցուն Մամքանը եւ ամուսինը նվիրաբերում են կալվածներ, եկեղեցական սպասքներ:

---

1. Հեղինեն Եդեսիայի Աբգար թագավորի կինն էր, որն ամուսնու մահից հետո իր ողջ հարստությունը բաժանեց սովյալներին (Հեղինեն մահացել է 42 թվականին):

2. Կ. Գանձակեցի, «Պատմութիւն հայոց, էջ 268:

3. Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, էջ 545:

1. «Խորհրդային Ղարաբաղ», 1990 թ., 10 ապրիլի («Գանձասարի Կարմիր Ավետարանը եւ նրա շուրջերկրականը»):

2. Այդ գյուղը Վանքն է, որի մասին Ս. Բարխուդարյանը գրում է. «Այս գյուղը գտնվում է Գանձասարի վանքի ստորոտում, Խաչեն գետի ձախ ափին: Հնում եղել է վանքի մոտ եւ սպասարկել նրան: Հետագայում գյուղն, ավելի աճելով, տարածվել է դեպի ներքեւ: Այն կոչվում է Գանձասարի կամ վանքի գյուղ եւ ապա կրճատ՝ Վանք: Վերջին դարերում մելիքանիստ էր, ուր նստում էին Հասան Զալալի շառավիղներ՝ Զալալյանները: Գյուղում արձանագրություն ունեցող միայն մի խաչքար գտանք՝ 1229 թ.: Մինչեւ վերջին դարերը գյուղը պատկանել է վանքին, իսկ գյուղացիները եղել են վանքի ճորտերը (տես Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Արցախ, էջ 73):

3. Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, 10-16-րդ դ.դ., էջ 176:

4. Նույն տեղում., էջ 180:

Մամքանն ընծայաբերումներ արեց նաեւ Գեղարքունիքի Բրդի Այրք գյուղի ս. Աստվածածին եկեղեցուն՝ նրա աջակողմի դռան վրա թողած արյանագրության մեջ նշելով այդ մասին[1]: Բացի այդ, Մամքանի օժանդակությամբ Գեղարքունյաց Սոդք ավանում կառուցվում է եկեղեցի[2]: Մամքանը իր ամուսնու՝ Հասան Ջալալ Դոլայի եւ Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթումի հետ 1255-ին ուղեւորվել է դեպի հեռավոր Մոնղոլիա եւ հանդիպել մոնղոլ մեծ խան Մանգուին[3]: Ուղեւորության նպատակն էր՝ բարեկամական կապեր հաստատել հայերի ու մոնղոլների միջեւ:

1261 թ. Հասան Ջալալի թողած հիշատակարանում վկայված է, որ ինքն ու Մամքանը եւ որդին՝ Աթաբակը, հինգ տարի մնացել են Մանգու խանի մոտ՝ Կարակորումում, ապա վերադառնալուց փոքր-ինչ հետո, հավանաբար նույն 1261 թ., վախճանվել է Մամքանը, որը, ամուսնու խոսքերով, «ամբողջ զորքի, հեծյալների, ինչպես նաեւ եկեղեցու եւ քահանաների սփոփիչն ու մխիթարողն էր»: Մամքանի այդ ուղեւորությունը կարելի է անվանել դիվանագիտական գործուղում: Մինչեւ այդ ոչ մի հայ կին պետական գործով այդպիսի երկար ճանապարհորդություն չէր կատարել: Մանավանդ որ՝ Մամքանը մահացել է 1261 թվականին՝ ամուսնու եւ որդու հետ Ոսկե Հորդա գնալ-գալուց անմիջապես հետո:

Հասան Ջալալ Դոլան եւ Մամքանը ունեցել են մի ուսոր՝ Իվանե-Աթաբակ, որը մահացել է 1287 թվականին, եւ երեք դուստր՝ Մամախաթուն, Մինախաթուն եւ Ռուզուքան: Երեք դուստրերն էլ (ինչպես եւ նրանց եղբայրը) եղել են իրենց հոր ու մոր արժանի ժառանգներ եւ աչքի են ընկել իրենց վսեմ հայրենասիրությամբ ու պերճ բարեգործություններով:

Մամախաթունը թաթար-մոնղոլական շրջանում լայն գործունեություն եւ հեղինակավոր անուն ունեցած հայազգի վաճառական պարոն Ումեկի կինն էր[4]: Ումեկի մասին Կիրակոս Գանձակեցին հիշատակում է որպես հայրենասեր, բարերար, առատաձեռն, իր արյունակիցներին օգնող անձ[5]:

---

1. *Դիվան հայ վիմագրության, պրակ 4, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երեւան, 1973, էջ 317:*
2. *Նույն տեղում, էջ 328:*
3. *Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը (սկզբից մինչեւ մեր օրերը), Երեւան, 1994, էջ 86, «ԼՂ Հանրապետություն», 24 օգոստոսի, 1994 թ.:*
4. *Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, էջ 220:*
5. *Կ. Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 261:*

Մամախաթունը Ումեկի երկրորդ կինն էր: Մամախաթունի որդին էր Վախթանգը, որը, ինչպես գրում է Բ. Ուլուբաբյանը, մանկությունից կապված էր մեծ մորապապի՝ Հասան Ջալալ Դոլայի թանկագին հիշատակների ու նրա երկրի հետ: Այդ սերը մայրն էր ներարկել՝ նրան քանի-քանի անգամ Խաչեն տանելով եւ հորենական հոգեւոր կենտրոններին տված իր ընծայաբերություններին մասնակից անելով:

Ժամանակի ականավոր գիտնական եւ տաղերգակ Հովհաննես Երզնկացին (մոտ 1250-1326) իր «Յաղագս երկնային շարժմանց» երկասիրության հիշատակարանում գրում է, որ 1284 թ. մեկնել է Թիֆլիս՝ ս. Գեւորգ եկեղեցում քարոզ կարդալու, որի բովանդակությունը երկնային մարմինների շարժումն էր: Այդ բանախոսությունն ունկնդրում էր նաեւ Մամախաթունը, որը վերջում մոտեցավ բանախոսին եւ նրանից խնդրեց բանախոսությունը գրավոր ձեւով հանձնել իրեն: Հովհ. Երզնկացին կատարեց տիկնոջ խնդրանքը[1]: Այսպիսով, Մամախաթունի շնորհիվ պահպանվեց եւ մեզ հասավ Հովհ. Երզնկացու «Յաղագս երկնային շարժմանց» մեծարժեք երկը:

Մամախաթունին ժամանակակից էր Խաչենում իշխող Հասան Դեսումյանի դուստր Խաթունը, որը կնության տրվեց Տավուշի, Գարդմանի եւ հարակից շրջանների իշխան Զաքարիային: Վաղամեռիկ եղբայրների հիշատակին Խաթունը կառուցեց Հաղբատի ս. Աստվածածին եկեղեցին, որի արեւելյան պատին արյանագրված է. «Շինեցաւ սուրբ եկեղեցիս արդեամբք Խաթունին»[2]:

Հասան Ջալալ Դոլայի մյուս դստեր անունը Մինախաթուն է: Սա եղել է Տարսայիճ Օրբելյանի կինը: Ինչպես նշում է Գարեգին Հովսեփյանը, Մինախաթունը Տարսայիճ Օրբելյանի երկրորդ կինն էր, այսինքն՝ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի խորթ մայրը[3]: Հայտնի է, որ Ստեփանոս Օրբելյանի մայրը եղել է քրիստոնեություն ընդունած (հայացած) մոնղոլուհի (վերջինիս հայրը այդ տարիներին Սյունիքի տերն էր): Պատմիչի հարազատ մոր անունը Արուզխաթուն էր, որը մահացել է 1286 թվականին եւ թաղվել Տաթեւի Պողոս-Պետրոս եկեղեցու արեւմտյան գավթում: Իր հոր ու մոր մասին Ստեփանոս Օրբելյանը գրում է. «Սմբատին օգնա-

---

1 *Տես Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 512:*
2 *Տես Կ. Դաֆթարյան, Հաղբատ. Երեւան, 1963, էջ 220:*
3 *Հովսեփյան Գարեգին, Վախթանգի որդի Ումեկը, էջ 7:*

կան է մնում միայն իր կրտսեր եղբայր Տարսայիճը[1], որը զորեղ ու մարտնչող մարդ էր, բոլոր գործերում հաջողակ, նաեւ բարեպաշտ ու խիստ աստվածասեր: Նա իր համար կին վերցրեց իսմայելացիներից, Սյունյաց տիրոջ դստերը՝ Արուզխաթունին: Սա քրիստոնեություն ընդունելով դարձավ երեւելի հավատացյալ եւ աստծու երկյուղած: Սրանից ծնվեցին երեք որդիներ՝ Ելիկումը, հետագայում եպիսկոպոս դարձած Ստեփանոսը եւ Փախրադոլան»[2]:

Ահա այս նշանավոր ընտանիքի հարս է դառնում արցախուհի Մինախաթունը: Ուշագրավ է նաեւ հետեւյալ իրողությունը: Տարսայիճը Մինախաթունի հետ ամուսնացել է առաջին կնոջ՝ Արուզխաթունի կենդանության օրոք: Ուսումնասիրողներն այդ հարցին հիմնավոր պատասխան չեն տվել: Ի՞նչն է դրդել քրիստոնյա իշխանին երկրորդ կին առնել: Դա սիրո արդյո՞ւնք էր, թե՞ իշխանական գերդաստաններին հատուկ դիվանագիտական ամուսնություն:

Վիմական (հենց եկեղեցիներում պահպանված) բազմաթիվ արձանագրություններում Տարսայիճն ու Մինախաթունը ամուսիններ են հայտարարված: Հատկապես Տարսայիճի արձանագրություններում նրանց սերն ու փոխադարձ նվիրվածությունն արտահայտված են վիմագրական խոսքի համար չափազանց ջերմ: Ինչպես արդեն նկատվել է, մինչդեռ Տարսայիճը Արուզխաթունի հիշատակը ոչնչով չի հավերժացրել, Մինախաթունի անվամբ բազմաթիվ նվիրատվություններ է կատարել, կառուցել շենքեր: Պատմիչը երեւի նկատի ունի առաջին կնոջ կենդանության պարագան, քանի որ քրիստոնեական օրենքներով արգելվում էր բազմակնությունը:

Տարսայիճի ու Մինախաթունի ամուսնությունը, ըստ Գար. Հովսեփյանի, պետք է որ տեղի ունեցած լինի 1261-ին (Հասան

---

1. Ելիկումի որդի մեծ իշխան Լիպարիտը պատմիչ Ստեփանոս Օրբելյանի պապն էր, որի չորս որդիներից Տարսայիճն էլ հայրն էր: Այս Տարսայիճը իշխանաց իշխան էր եւ աթաբեկ: Եղբոր մահից հետո Սյունյաց իշխանական աթոռը ժառանգեց 1273 թվականին: Մահացել է 1290 թվականին: Այստեղ Տաթեւի վանքի վերաշինման կապակցությամբ հիշված նրա եղբայր Սմբատը Սյունյաց իշխանական գահին նստել էր 1253 թվականին եւ իշխել 20 տարի: Հայտնի է թաթարների հետ վարած իր բանակցություններով (2 անգամ եղել է Մոնղոլիայում), այլեւ շինարարական աշխատանքով (1261 թվականին ընդարձակել է Նորավանքը): Մահացել է 1273 թ.: Մինչեւ այժմ Նորավանքում պահպանվում է նրա դամբարանը:

2. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 332:

Ջալալի եղերական մահից հետո), քանի որ փեսան ու խնամախոսության գնացած վրաց թագավոր Դավիթը Մինախաթունի ձեռքը խնդրել են նրա եղբայր Աթաբակից: Բայց եւ՝ 1271-ից առաջ, քանի որ Դավիթ թագավորը մահացել է այդ թվականին:

Տարսայիճը մահացել է 1290-ին: Այրիացած Մինախաթունը շարունակել է նախկին ջերմեռանդությամբ նվերներ մատուցել սուրբ ուխտերին, որոնց մեծ մասը՝ «վասն հարկից արքայաշուք տեառն իմոյ Տարսայիճին»:

Մինախաթունն էլ մահացել է 1298-ին, թաղվել Ամաղուի Նորավանքում, ամուսնու եւ տեգրոջ՝ Սմբատի կողքին:

Նորավանքում պահպանված է եղել Մինայի մահարձանը: Նորավանքի եկեղեցու առջեւ եղած երկշարք տապանաքարերից չորրորդը Մինայինն է: Նրա դամբանաքարին փորագրված է. «Ի թուին ՉԽԷ (1298) թագազարմ արքայուհիին է Մինա խաթունն»:

Տարսայիճն ու Մինախաթունը ունեցել են երեք զավակ՝ մի տղա՝ «գեղեցկուղեշ» Ջալալը եւ երկու աղջիկ՝ Ասփան եւ Մամքանը: Ասփան դեռ հոր կենդանության օրոք ամուսնացավ Խաչենի իշխանության մյուս ճյուղի՝ Ծարա Դոփյանց ներկայացուցիչ Գրիգորի հետ: Իսկ Մամքանին վրաց արքունիքը հարս տարավ Տարսայիճի մահից հետո[1]:

Միջնադարյան Արցախի հայուհիների աստղաբույլի մեջ լուսեղեն ճաճանչներով է փայլում իշխանուհի Դոփը, նաեւ՝ նրանից վերընչյուղված հետնորդները: Դոփն ու Դոփյանները անմոռաց էջեր են գրել 12-14-րդ դարերի Արցախի պատմության մեջ:

Դոփը ամիրսպասալար Սարգիս Զաքարյանի դստրերից էր, Խաչենի իշխանության Ծարա ճյուղի Հասան Առաջինի կինը: Բ. Ուլուբաբյանը, քննության առնելով Դոփյանների մասին եղած ուսումնասիրությունները, գրում է. «Դա մի ժամանակ էր, երբ սելջուկյան տիրապետությունից ազատագրված հայկական համարյա բոլոր իշխանությունները փաստորեն միավորված էին Զաքարյան իշխանապետերի հովանու տակ եւ գտնվում էին կազմավորված վրաց-հայկական ռազմա-քաղաքական դաշնակցության մեջ: Այս դաշնակցության երկրորդ դեմքը (վրաց թագավորից հետո առաջինը) Իվանե-Աթաբակն էր, որի ձայնը եւ կամքը վճռական էին հայոց վերաբերող հարցերում: Իվանեն, ինչպես եւ նրանից առաջ նրա ավագ եղբայր Զաքարիա ամիրսպասալարը, ամեն կերպ ջանում էր Հայաստան աշխարհի բոլոր իշխանությունները հա-

---

1. Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, էջ 228-229:

ջանում էր Հայաստան աշխարհի բոլոր իշխանությունները հավաքել Զաքարյան զարմիկների կամ նրանց հետ խնամիացած տոհմերի ձեռքը: Այդ նպատակով էլ Իվանեն գահերեցության ժառանգորդ չունեցող Հաթերքի իշխանության տիրույթները միացրեց Վերին Խաչենի կամ Ծարա իշխանությանը: Սրանով իսկ իշխանության աթոռ զբաղեցնող Դոփը (Իվանեի քույրը) դարձավ Խաչենի մեծագույն մասի լիիրավ տնօրենը: Դոփը ինքն էր գլխավորում իշխանությունը, որովհետև, ինչպես ենթադրվում է, արդեն մահացած պիտի լիներ նրա ամուսին Հասանը, որից արձանագրություն ունենք միայն 1204 թվականից:

Ծարա իշխանությունը 12-րդ դարի վերջին եւ 13-րդ դարի սկզբին Հայաստանում նոր կազմավորված կամ վերահաստատված այն վարչական միավորներից է, որոնք Զաքարյան իշխանապետերի հովանավորությամբ հզորացան եւ հայրենի տիրույթների ոլորտում տնօրինեցին քաղաքական, տնտեսական ու մշակութային մի եռանդուն կյանք: Աղբյուրները նվազ տեղեկություններ են հաղորդում Ծարա այդ ժամանակների իշխան Հասանի մասին, որը, ինչպես ասվեց, մահացել է 13-րդ դարի առաջին քառորդում: Սակայն դրա փոխարեն մենք երկրամասի քաղաքական կյանքի ղեկավար ենք տեսնում նրա կնոջը՝ Դոփին, որն իր եղբայր Աթաբակ Իվանեի հովանավորությամբ ու ամեն տեսակ օժանդակությամբ Ծարա իշխանության համար ստեղծում է մի արտոնյալ վիճակ Արեւելյան Հայաստանի մանր իշխանությունների շարքում: Եվ պատահական չէ, որ Վերին Խաչենի այս իշխանությունը հետագայում՝ 13-րդ դարի կեսից սկսած, կոչվում էր Դոփյան: Հայ իրականության մեջ արտակարգ երեւույթ էր, երբ իշխանական տոհմը կոչվում էր կնոջ անունով: Սա ինքնին ապացույց է, որ հանգամանքների բերումով Դոփն է դարձել գերդաստանի ազդեցիկ ներկայացուցիչը՝ զավակների խնամակալը, ինչպես նաեւ իշխանության կառավարիչն ու գլխավորը»[1]:

Քննելով Դոփի գործունեությունը, մենք գալիս ենք այն համոզման, որ միջնադարյան Արցախում կինը գրեթե հավասար իրավունքներ է ունեցել տղամարդու հետ: Համաձայն Մխիթար Գոշի, Հայաստանում ամուսնացած կինը ընտանիքի, նրա տնտեսության լիիրավ անդամն էր եւ ամուսնալուծվելիս ամուսնու հետ կիսում էր ունեցվածքը[1]:

Ինչպես նկատել է Ս. Բարխուդարյանը, ըստ Մխիթար Գոշի, բոլոր դեպքերում կինն ու տղամարդը նույնիրավ էին, եթե տնտեսական դրությամբ կինը հավասար էր համարվում ամուսնուն, ուրեմն կյանքի մյուս բնագավառներում եւս նույնը տեղի ուներ[2]:

Կնոջ խելքն ու իմաստությունը, նրա շրջահայացությունն ու ողջախոհությունը երկրի ու ժողովրդի շահերին ծառայեցնելը միանգամից սկիզբ չառավ Դոփից ու 13-րդ դարից: Դա ավանդույթների շարունակություն էր, որ Արցախը պահպանում էր սերնդեսերունդ, դարից դար: Պատմության ճանապարհին հայ կինը եղել է իր ամուսնու, զավակների ու յուրայինների հենարանը: Կանանց մասին ամեն բան չէ, որ գրի են առել մեր պատմիչներն ու ձեռագրեր ընդօրինակող գրիչները: Երբեմն նրանք կանխամտածված բաց են թողել այն, ինչ վերաբերում է կանանց: Եվ, այնուամենայնիվ, միշտ չէ, որ արցախահայն առաջնորդվել է «դա կնոջ բան չէ» սկզբունքով: Հայ ժողովուրդն իր անցած ճանապարհին միշտ չէ, որ օգտվել է կնոջ խելքից: Դա ոչ միայն հայերի, այլեւ համայն մարդկության մեծագույն սխալներից մեկն է:

Դոփի մեջ փայլատակել է երկիր, տերություն, պետություն ղեկավարելու տաղանդը: Դոփն ապրել է երկար: 1225 թվականի մի արձանագրության համաձայն, Դոփը կառուցել է իր տեգր Հովհաննեսի կերտած տաճարի գավիթը (Խադա վանքում), նաեւ մի մատուռ եւ վանքին տվել Ավետարան, այլ ընծաներ[3]: Դոփը թաղված է Հաղպատում[4]:

Հերոսազարմ արցախուհիների մեջ իր տեղն ունի Ասփա իշխանուհին: Սա Տարսայիճ Օրբելյանի եւ Մինախաթունի դուստրն է, որը Սյունիքից հարսնության գալով Արցախ՝ ասես տուն է վերադարձնում արցախյան արյունը: Մի հիշատակարանում Ասփան իրեն անվանում է «դուստր արքայաշուք իշխանին Տարսայիճի»[1]:

---

1. Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դ.դ., էջ 152:

1. Տես Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխ.՝ Խ. Թորոսյանի, Երեւան, 1975, էջ 39-40:

2. Տես Ս. Բարխուդարյան, Հայ կնոջ իրավական վիճակը միջին դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, թիվ 2, էջ 30:

3. Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը (սկզբից մինչեւ մեր օրերը), Երեւան, 1994, էջ 74:

4. Կ. Դաֆթարյան, Հաղբատ, էջ 185:

Ասփայի ամուսինն էր Ծարա փիրակալ Հասանի որդի Գրիգոր իշխանը: Գրիգորի ու Ասփայի ամուսնությունը տեղի է ունեցել 1280-ական թվականներին: Ինչպես գրում է Բ. Ուլուբաբյանը, դատելով Գրիգորի եւ Ասփայի արձանագրություններից ու թողած հիշատակարաններից, պետք է եզրակացնել, որ նրանց միջեւ եղել է պաշտամունքի հասնող սեր: Ամուսինը թաթարաց արշավանքների մեջ էր, երբ Ասփան նրա համար բեմի սեղան կանգնեցրեց հայրենի Խաթրավանքում «նպաստ եղեալ Քրիստոսապսակ գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի ի շինութեան լուսանուեր սուրբ եկեղեցւոյս»[2]:

Նույն Խաթրավանքում, դարձյալ ամուսնու բացակայությամբ, Ասփան խաչքար կանգնեցրեց եւ կամուրջ կապել տվեց Թարթառի վրա՝ «յիշատակ հոգւոց անցելոց, ներկայիս եւ ապագայիս»[3]: Ասփայի կապարած մշակութաշահ գործունեության պսակն է համարվում այժմ «Թարգմանչաց» անունով հայտնի Ավետարանը, որը ինքն ու ամուսինը ստացել են եւ նվիրել իրենց տոհմական տապանատունը՝ Խաթրավանքին: Ավետարանը գրվել է 1232 թ.՝ Ասփայի եւ ամուսնու պատվերով:

Մեր նկարագրած ժամանակաշրջանի հայուհիների շարքում մենք դիտավորյալ բաց թողեցինք Հասան Ջալալ Դոլայի երրորդ դստեր կյանքի պատմությունը, որն արժանի է առանձին ենթագլխով ներկայացվելու: Ահավասիկ...

ՌՈՒՋՈՒՔԱՆ

Ռուզուքանը[4] Հասան Ջալալ Դոլայի երեք աղջիկներից է, Մամախաթունի եւ Մինախաթունի քույրը: Նա այնպիսի սխրագործություն է կատարել, որ արցախցիների համար դարձել է հայրենասիրության մշտամնա օրինակ: Հայտնի է, որ Գանձասարի վանքի շինարարությունն սկսվել է 1216-ին եւ ավարտվել 1238-ին: Բայց վանքի օծումը երկու տարով հետաձգվել է եւ տեղի ունեցել 1240 թվականին: Ինչո՞ւ: Որովհետեւ 1239-1240-ին Արցախը զբաղված էր թշնամական հարձակումներից պաշտպանվելով: Հենց այդ ժամանակ էլ դրսեւորվում է Ռուզուքանի հայրենասիրությունը: Մոնղոլական հրոսակախմբերը երբ հասնում են Արցախ, սկսում են իրենց ավերածությունները: Հասան Ջալալ Դոլան կտրիճ արցախցիների գլուխն անցած դիմագրավում է թշնամուն, խիզախաբար մարտնչում նրա դեմ, բայց ստիպված է լինում թշնամու գերակշիռ ուժերի առաջ ընկրկել, քաշվել Խոխանաբերդի իր ամրոցը: Մոնղոլները պաշարում են Խոխանաբերդը, բայց այն գրավել չեն կարողանում: Եվ ահա հայկական ամրոցի առջեւ երեւում են մոնղոլ բանբերները: Թշնամին հաշտություն է առաջարկում: Հաշվի առնելով հակառակորդի մեծ ուժը՝ Հասան Ջալալ Դոլան շրջահայացություն է դրսեւորում, մեծ նվերներով իջնում է բերդից եւ ընդառաջ գնում մոնղոլներին: Մոնղոլները հաշտություն են կնքում հայերի հետ, որն ամրապնդվում է 1240 թ. Հասան Ջալալ Դոլայի դուստր Ռուզուքանի եւ մոնղոլների զորապետի որդի Բորա Նոյինի (նոյին մոնղոլերեն բառ է, որ նշանակում է զորավար) ամուսնությամբ: Այս հաշտության շնորհիվ Արցախը զերծ է մնում հետագա ասպատակություններից ու ավերածություններից, մոնղոլները ճանաչում են Հասան Ջալալ Դոլայի իշխանությունը: Փաստորեն Արցախի մեծ իշխանն ընդունում է մոնղոլների գերիշխանությունը եւ դառնում նրանց դաշնակիցը:

Պատմական վավերագրերը ոչինչ չեն ասում Ռուզուքանի կատարած սխրագործության մասին: Բայց պատկերացրեք քրիստոնեական ոգով դաստիարակված դեռատի մի աղջկա, որը համաձայնում է ամուսնանալ օտարաշուրթ տղայի հետ, որը դավա-

---

1. Այս երկը Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 425 ձեռագրի (Գանձարան, թիվ 681-685) մեջ կոչվում է «Ողբ Խաչատրոյ Կեչարեցւոյն վասն իշխանաց»:

2. Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 194:

3. Նույն տեղում, էջ 196:

4. Ռուզուքան անունը արաբական ժամանակաշրջանից Հայաստանում մնացած անձնանուններից է: Այս հայուհին էլ, արյան բոլոր կաթիլներով ազնվազարմ հայուհի լինելով, հոր պես հայկական անուն չէր կրում: Հայրը կոչվում էր Հասան Ջալալ Դոլա: Այս երեք անուններով է մեզ հասել Գանձասարի վանքի կառուցողը, 13-րդ դարի Արցախի հզոր տիրակալը, Հասան Ջալալյան տոհմի հիմնադիրն ու անվանադիրը: Երեք անուն-մականուններն էլ արաբերեն են, Հասան նշանակում է գեղեցիկ, Ջալալ՝ փառավոր (փաղաքշական, եկեք մտաբերենք հայոց «Սասնա ծռեր» էպոսում Քուռկիկ Ջալալին, այստեղ էլ՝ Ջալալի նշանակում է փառավոր, դարձյալ արաբերեն), Դոլա՝ իշխան, տիրակալ: Մեծ իշխանն այս անուններով է կնքվել Հայաստանում արաբական տիրապետության ժամանակներից մնացած սովորության ուժով, սովորություն, որ առավելապես հատուկ է եղել հայ բարձրատոհմիկ գերդաստաններին, երբ իշխող օտարներին դուր գալու կամ նրանց հետ բարեկամություն հաստատելու նպատակով երեխաներին տալիս էին օտար անուններ: Օտար անուններով են կոչվել նաեւ իգական սեռի ներկայացուցիչներից շատերը: Դրանցից է Ռուզուքանը, որը արաբերեն բառ է եւ նշանակում է հարուստ, մեծատոհմիկ դուստր: Մինչեւ այժմ էլ Արցախի բարբառում մնացել է ռուզի արաբերեն բառը, որը նշանակում է հարստություն, բարիք: Ռուզուքանին Ռուզան է կոչել Մ. Չամչյանը:

նանքով, լեզվով, սովորույթներով անծանոթ էր Ռուզաքանին: Մինչդեռ աղջիկը մտածում էր այսպես. ես ինձ զոհում եմ իմ հայրենիքի համար, ես կդառնամ մի մոնղոլի կին, որով կփրկեմ բազում հայուհիների մոնղոլների կին դառնալուց: Եվ ոչ միայն դա. իմ ինքնազոհությամբ Արցախում ոչ մի տուն չի այրվի, ոչ ոք չի կողոպտվի, ոչ ոք սրախողխող չի լինի:

Դառնալով Բորա Նոյինի կինը՝ Ռուզաքանը շարունակում է օգտակար լինել իր հայրենիքին: Մոնղոլների հետ դաշինք կնքելուց մի քանի տարի անց Վրաստանում հակամոնղոլական ապստամբություն է բռնկում, որին միանում է Հասան Ջալալ Դոլան: Բայց մոնղոլները ճնշում են ապստամբությունը, իսկ Հասան Դոլան գերի է ընկնում թշնամու ձեռքը: Մոնղոլ զորավար Արղունը կալանավորում է Հասան Ջալալ Դոլային՝ պահանջելով մեծ փրկագին: Չստանալով իր պահանջածը՝ նրան տանում է Ղազվին՝ տաժանակրության: Հասանի դուստր Ռուզուքանը, որը, ինչպես տեսանք, մոնղոլ զորավար Չարմաղանի որդի Բորա Նոյինի կինն էր, փորձում է մոնղոլ մի ուրիշ զորապետի՝ Հուլավուի կին Տողուս խաթունի միջնորդությամբ հորն ազատել Արղունի ձեռքից: Սակայն Հասան Ջալալ Դոլայի դեմ թույնով լցված խարդախ Արղունը, տեղեկանալով այդ միջնորդության մասին, Հասան Ջալալին առաջարկում է ուրանալ հավատը, բայց մերժում ստանալով՝ իսկույնեւեթ դահիճ է ուղարկում Ղազվին, որը 1261 թ. հոդակոտոր անելով սպանում է Հասան Ջալալ Դոլային: Դյուցազուն իշխանի որդի Աթաբակը նահատակ հոր մասունքները Ղազվինից փոխադրում է Արցախ եւ թաղում Գանձասարի վանքի արեւմտյան բակում, որն այդուհետեւ դառնում է Հասան Ջալալյանների տոհմական գերեզմանատունը:

Ռուզուքանի կերպարով ոգեշնչված Մուրացանը գրել է (1881-ին) դրամա՝ «Ռուզան կամ հայրենասեր օրիորդ» անունով:

Արցախի զորեղ անհատականություններից է Խութլուխաթուն իշխանուհին՝ Կյուրիկե Գ-ի դուստրը, Խաչենի Պռոշ (Հասան) իշխանի (1223-1284) կինը: Նրա անունը հիշատակված է ս. Գեղարդի պահարանի վրա՝ 1268 թ., ինչպես նաեւ Գեղարդի վանքի արձանագրության մեջ: Նրա նկարը՝ ամուսնու եւ զավակների հետ, մնում է ս. Աստվածածնի որմնանկարների մեջ, բայց շատ

եղծված: Հավանաբար մահացել է 1258-68 թվականների միջեւ[1]:

Խութլուխաթունը եղել է այն զորեղ քաջորդու կինը, որը պատմության մեջ հայտնի է Պռոշ անունով: Սա Խաղբակյան իշխան Վասակի որդին էր, Խաղբակ Բ-ի թոռը, Պապաքի եւ Մկդեմի եղբայրը: Քաջ եւ շինարար այր էր այս խաչենցին: Հաջորդել է հորը 1223 թ.: Այնքան նշանավոր հանդիսացավ, որ Խաղբակյան տոհմը այնուհետեւ սկսեց կոչվել նրա անունով՝ Պռոշյան: Դաշնակցել է մոնղոլների հետ եւ համարվում էր Հուլաղու խանի զորավարներից մեկը եւ 13-րդ դարի 30-ական թվականներից մինչեւ 80-ական թվականների կեսերը ասպարեզի վրա էր: Մասնակցել է հայրենիքի համար մղված բոլոր ճակատամարտերին: Մասնակցել է թաթարների (իմա՝ մոնղոլների) արշավանքներին, նրանց հետ իր զորաջոկատով պաշարել Բաղդադը: Քաղաքը գրավելու ժամանակ անդամ էր այն դեսպանության, որ գնաց արաբների Մուսթասար խալիֆի մոտ եւ պահանջեց անձնատուր լինել (1258): Մասնակցել է նաեւ Նիփրկերտի արշավանքին եւ այդ քաղաքի գրավմանը (1258-1260 թ.թ.): Գնել է Այրիվանքը, զարդարել այն նոր շինություններով եւ ապահովել կալվածքներով: Այնտեղ է դրել նաեւ այն գեղարդը, որի անունով վանքն այդուհետեւ կոչվել է Գեղարդա վանք: Ինքն է շինել նաեւ Թանահատի վանքը: Նվիրատվություններ է արել Խաչենի Կոշիկ անապատին (1244 թ.), Ղսեղի բարձրաքաշ ս. Աստվածածնին եւ ս. Գրիգորին (1247 թ.) եւ Կարբիի Հովհաննավանքին (1247 թ.): Այս ամենի մասին հիշատակված է վանքերի արձանագրությունների մեջ: Պռոշ իշխանի եւ Խութլուխաթունի որդիներն են Մկդեմը, Վասակը, Հասանը եւ Պապաքը, աղջիկն է Գոհար խաթունը: Պռոշ իշխանը մահացել է 1284 թվականին եւ թաղվել Կեչառիսի վանքում[2]:

Ամուսնու բոլոր բարեգործություններին մասնակցել է կինը՝ Խութլուխաթունը: Խութլուխաթունը Հռոմոսի վանքում կառուցել է տվել երեք մատուռ եւ տապանատուն[3]: Բագնայրի՝ 1229 թ. փորագրված մի արձանագրության մեջ նշվում է, որ Խութլուխաթունը վանքին նվիրել է կալվածքներ՝ ի հիշատակ ամուսնու եւ վաղամեռիկ որդու[1]: Այնքան մեծ էր այս տիկնոջ անունը, որ Այրի-

1. Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, էջ 558:
2. Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.Դ., էջ 258-269:
3. Դ. Ալիշան, Շիրակ, էջ 21:

վանքի եկեղեցու արեւմտյան որմին փորագրված արձանագրության մեջ հիշվում է ամուսնուց առաջ[2]: Մարդ ու կին՝ արցախցիները անուն են հանել որպես միջնադարի ականավոր բարեգործներ: Խութլուխաթունի արած նվիրատվությունների մեջ արտացոլվում է Արցախի հայ իշխանուհիների մի հնամյա սովորություն. քրիստոնեական հավատի տաճարներին նվիրատվություններ անելով՝ Աստծուն զորավիգ ես դարձնում քեզ, Աստված մասնակցում եւ օգնում է քո բոլոր ձեռնարկումների հաջողությանը: Գաղափարախոսությունն այս եղել է հոգեբանություն, որ ավանդույթ դարձված փոխանցվել է սերնդեսերունդ՝ Արցախում անմար պահելով քրիստոնեական պայծառ հավատը: Պիտի շարունակել այն, ինչ սրտահաճո է Աստծուն՝ ասում էին միջնադարյան Արցախի հայուհիները:

Հայ պատմաբանները, ուսումնասիրելով հայ ժողովրդի ամբողջական պատմությունը, նրա մի օղակի՝ Արցախի մասին ասում են, որ այստեղ դարեր շարունակ, առանց ընդհատման, պահպանվել է հայկական իշխանությունը: Նշվում է, որ Արցախում ժառանգաբար իշխել են հայ իշխանները, պահպանվել են ազգային սովորույթները, ազնվականական գերդաստաններին հատուկ կանոնակարգը: Պատմաբանների խոսքն, իհարկե, վերաբերում է այրերի՝ տղամարդկանց իշխանությանը: Մինչդեռ Արցախի հայ ազնվականական իշխանուհիներին նվիրված մի առանձին ուսումնասիրություն մենք չունենք: Արցախի իշխանուհիները պահպանել են Հայաստանին, հայկական բոլոր նահանգների իշխանուհիներին հատուկ վարք ու բարքը, սովորությունները, որոնք այդ նահանգներում կորսվել են օտար նվաճողների պատճառով: Արցախը պահել է այդ կորսվածը: Արցախը հայկական կորուստների փրկատուն է եղել: Այստեղ պահպանվել է այն ամեն հայկականը, ինչ կոչվում է հնագույն եւ վաղնջագույն: Արցախը եւ արցախուհին պահել են հայ ժողովրդի հոգեւոր հարստության եզակի նշխարներ: Եվ դրա մեջ մեծ է արցախուհու բաժինը: Արցախում կատակով ասում են՝ մեզ մոտ ամեն ինչ էլ կարելի է գտնել, նաեւ՝ ամեն ինչով մեր նախահայրերին նմանվող հայերի: Ճիշտ է, ոչ մի ժողովուրդ չի կարող իր կերպարը անաղարտորեն մի դարից մյուսը փոխանցել, փոփոխությունն անխուսափելի է, բայց այդ փոփոխությունը համեմատաբար նվազ է հատկապես Արցախում:

---

1. Տես Գ. Հովսեփյան, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի եւ մշակույթի պատմության, Ա. Երուսաղեմ, 1935, էջ 17:

2. Տես Մ. Մխիթարեանց, Ստորագրութիւն հռչակաւոր մեծի ուխտին Այրի վանաց տրոյն Գեղարդայ, Վաղարշապատ, 1873, էջ 51:

Ազգային սովորույթները, ավանդույթները, հայկական դիմագիծը պահպանելու մեջ մեծ բաժին ունեն Արցախի կանայք, հատկապես բարդրատոհմիկ կանայք:

Հին Արցախում այսպիսի սովորություն է եղել. ազնվական աղջիկներին սովորեցնում էին քայլել ուղիղ՝ գլուխը բարձր պահած, վեհապանծ տեսքով: Այդ վարժություններն արվում էին գեղջկուհիների ներկայությամբ: Հասկանալի է, որ գեղջկուհիները չէին կարող անտարբեր մնալ: Նրանք էլ ջանում էին ուսանել իշխանուհիների քայլվածքը, շարժուձեւերը: Դա վերաբերում էր նաեւ հանդերձանքին: Արզուխաթունի ասեղնագործելու արվեստն այստեղ շատ է տարածված: Չես գտնի արցախցի մի աղջկա, որը չփորձի ձեռագործություն սովորել:

Արցախուհիները պահպանել են նաեւ հայ իշխանուհիների սանրվածքի, հարդարանքի ձեւերը, կանացի խաղերը (հարկապես ճոճքը), սենդի տարատեսակները:

* * *

Արցախի խիզախ հայուհիների համաստեղության մեջ շողշողուն աստղ է Գայանեն: Նա հնամենի Ավետարանոց գյուղացի էր: Ավետարանոցը եղել է Արցախի հինգ մելիքություններից մեկի՝ Վարանդայի վարչական կենտրոնը, մելիքության բերդավանը, նստավայրը: Ավետարանոցի պատմության փայլուն շրջանն սկսվում է 17-րդ դարի վերջից, երբ Մելիք-Շահնազարյաններն այս գյուղը դարձնում են ամրոցավան: Հայ ժողովրդի հերոսական պատմության պայծառ էջերից մեկը գրվել է հենց այստեղ, 1733 թվականին: Այդ տարում Ավետարանոցում տեղավորվում է թուրքական մի զորաջոկատ, որի հրամանատարն էր Սուլեյման բեկը: Թուրքերն այստեղ ոչ միայն ավերածություններ էին անում, այլեւ լկտիաբար արատավորում էին հայ կանանց պատիվը: Ավետարանոցի եւ հարակից Արցախի հայերը, չհանդուրժելով նվաճողի վայրագությունները, ոտքի են կանգնում եւ մի գիշերվա մեջ Մելիք Հուսեին Շահնազարյանի կին Աննայի եւ նրա դուստր Գայանեի գլխավորությամբ ոչնչացնում են թուրքական զորաջոկատը: Դա եղել է Արցախի բարդուղիմեոսյան գիշերը: Միաժամանակ դա արցախահայության հերոսական ոգու զորեղ արտահայտություններից էր: Թուրքական զորաջոկատի հրամանատար Սուլեյման բեկը ուզում է կնության առնել Գայանեին եւ պահանջում է նրա համաձայնությունը: Օրիորդը ցեւացնում է, թե համաձայն է ամուսնանալ բեկի հետ եւ հնարովի պատրվակներով հետաձգում է

հարսանիքը մինչեւ այն օրը, երբ ընդհանուր պայմանավորվածությամբ ողջ Արցախի ժողովուրդը հարյակվում ու ջարդում է թուրքական կայազորը: Հենց այդ ժամանակ մելիք Հուսեինի տանը ապաստան փնտրող Սուլեյման բեկը հանդիպում է Գայանեին եւ տան շեմին խոցվում նրա թրով:

Հետագայում Գայանեն իրեն դրսեւորում է նաեւ որպես հմուտ գրչուհի: Նրա ընդօրինակած Ավետարանը, որը պահվում է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, հայ գրչարվեստի նմուշներից է: Մահից հետո էլ Գայանեն մնացել է որպես հերոսականություն ներշնչող աղբյուր: Նրա տապանաքարին պատկերված է ինքը՝ Գայանեն, իսկ նրա ոտքերի մոտ՝ բեկի սրախողխող արված գլուխը: Տապանաքարին՝ Գայանեի ոտքերի մոտ, փոսիկ է արված, որից ջուր են խմեցնում նրանց, որոնք վախեցած են լինում ինչ-որ բանից: Դրանում արտահայտվում է արցախական դյուցազներգության հարատեւող ոգին: 1991-1994 թվականներին արցախյան ազատագրական պայքարին մասնակցող շատ արցախցիներ ջուր էին խմում տապանաքարի փոսիկից, սակայն ոչ թե իրենց հոգուց վախը վանելու, այլ թշնամուն հաղթելու համար հավատ ներշնչելու իրենց:

Գայանեի հերոսությունն է նկարագրված Լեոի «Մելիքի աղջիկը» վեպում:

Վիպասան Ռաֆֆին իր ստեղծագործությունների գլուխգործոցը համարել է «Խամսայի մելիքությունները», որն առաջին անգամ տպագրվել է 1882 թվականին, Թիֆլիսի «Մշակ» թերթում: Այդ վավերագրական աշխատության մեջ Ռաֆֆին մի առանձին ջերմությամբ է գրել Գայանեի եւ նրա մոր՝ Աննայի մասին: Ահավասիկ Գայանեին նվիրված հատվածն ամբողջությամբ. «Այդ ժամանակ օսմանցիների սերասկեր (գլխավոր հրամանատար) Սարի Մուստաֆա փաշան իր գլխավոր բանակով զետեղված էր Գանձակ քաղաքում, իսկ մնացած զորքերը տարածել էր Ղարաբաղի մելիքների երկրներում: Մելիք Ավանը, որ բոլոր մյուս մելիքների գահերեցն էր, օգուտ քաղելով փաշայի՝ դեպի ինքն ունեցած բարեկամական հարաբերություններից եւ առերես հնազանդություն ցույց տալով, գաղտնի կերպով սարքեց մի մեծ դավադրություն: Ղարաբաղի բոլոր մելիքները միաբանվեցան նրա հետ: Ապստամբության նշանաբանը բովանդակվում էր հետեւյալ խոսքերի մեջ՝ «պահպանեցեք հին սերմերը՝ որպես բուսնելու հույս տվողներ եւ ոչնչացրեք նորը, որ պտուղ չի խոստանում»: Այսինքն՝ խնայել պարսիկներին եւ կոտորել օսմանցիներին: Կոտորածը պետք է կատարվեր մեծ պասի առաջին գիշերվա մեջ: Այդ բարդուղիմեոսյան գիշերում հայերը ոչնչացրին թե Ղարաբաղի եւ թե Գանձակի կողմերում գտնված բոլոր օսմանցի զորքերին: Ձմեռվա ցրտի պատճառով զինվորները հայերի տներում էին բնակվում: Ամեն մի տանտեր սպանեց իր ինքնակոչ հյուրին, Սարի Մուստաֆա փաշան հազիվ կարողացավ ազատվել՝ փախչելով Երեւան: Այդ հիշատակի արժանի անցքը կատարվեց 1733 թ.:

Որպես մի փոքրիկ միջադեպ, ես ավելորդ չեմ համարում նկարագրել մի դեպք, որ նույն գիշեր տեղի ունեցավ Վարանդայի Ավետարանոց գյուղում: Դրա մեջ փայլում է հայ կնոջ հերոսությունը: Ավետարանոցը Վարանդայի մելիքության բերդավանն է: Այստեղ իր զինվորներով զետեղված էր օսմանցիների զորապետերից մեկը, որը կոչվում է Սուլեյման բեկ: Դա, լսելով տեղային Մելիք Հուսեինի դստեր՝ Գայանեի գեղեցկությունը, մտածում է տիրանալ նրան, բայց չհամարձակվելով հայտնի բռնություն գործ դնել՝ առաջարկում է ամուսնանալ Գայանեի հետ: Հայրը եւ մայրը անպատկառ մահմեդականին միամտացնելու համար խոստանում են տալ աղջիկը, բայց միշտ հետաձգում են, հայտնելով, թե հայերի ազգային եւ կրոնական սովորությունների համեմատ պետք է դեռեւս այս եւ այն ծեսերը կատարված լինեն: Այսպես օրըստօրե ժամանակ են խլում, մինչեւ հասնում է նշանակյալ գիշերը:

Սկսվում է կոտորածը: Մելիք Հուսեինը այն գիշեր տանը չի լինում. նա գնացել էր իր գավառի մյուս տեղերում գործելու համար: Ավետարանոցի կոտորածն առաջնորդում էր նրա քաջասիրտ կինը՝ Աննա խաթունը: Երբ այդ զինված հերոսուհին ավանի փողոցների մեջ կոտորել էր տալիս օսմանցիներին, այդ միջոցին նրա ինքնակոչ փեսացուն՝ Սուլեյման բեկը, իր կյանքը ազատելու համար, փախչում է դեպի Աննա խաթունի տունը: Նույն րոպեում Գայանեն, նույնպես զինված, կանգնած է լինում տան դռան մոտ: Տեսնելով իր ատելի փեսացուին ներս մտնելիս, օրիորդը իր խենչալը խրում է նրա սրտի մեջ... Այդ սպանությունից հետո Գայանեն իր անչը նվիրեց կուսակրոնության եւ մտավ Ավետարանոց գյուղի կուսանոց անապատը:

Աննա խաթունի եւ Գայանեի քաջագործության հիշատակը պահպանված է միայն ժողովրդական ավանդության մեջ, իսկ Մելիք Հուսեինի հիշատակը մնում է արյանագրված իր գերեզմանի

քարի վրա, որը գտնվում է Ավետարանոց բերդի կուսանաց անապատի գավթում»[1]:

Իր աշխատության ծանոթագրություններից մեկում Ռաֆֆին գրում է, որ 1881 թվականին Ղարաբաղ կատարած իր ճանապարհորդության ժամանակ Ավետարանոց գյուղում տեսել է մի հրաշալի գրչագիր Ավետարան՝ գրված նույն Գայանեի ձեռքով:

Հերոսուհի էր նաեւ Գայանեի մայրը՝ Աննա խաթունը, որը Դիզակ գավառի Մելիք Ավանի (Մելիք Եգանի) քույրն էր, այն մելիքի, որը, Ռաֆֆու խոսքերով ասած՝ սարքեց ընդհանուր ապստամբությունը:

Լեոն Գայանեի սխրագործությունը ոչ միայն դարձրել է իր «Մելիքի աղջիկը» վեպի նյութը, այլեւ «Հայոց հարցի նոր արծարծումը» ուսումնասիրության մեջ նրա մասին գրել է այսպես. «Վարանդայի մելիքական ոստան Ավետարանոց գյուղը Մելիք Հուսեինի ժամանակ Ղարաբաղի քաղաքական կյանքի շատ նշանավոր կենտրոն էր դարձել: Մելիք Հուսեինը, ինչպես տեսանք տպանաքարից, հարկ չէր տալիս ոչ ոքի, այսինքն՝ կատարյալ անկախության էր հասել. նույնիսկ Նադիրի ժամանակ, քանի որ անթիվ օսմանցիներ էր ջարդել: Ավանդությունը մանրամասնորեն պատմում է, որ նրա մահից հետո նրա աղջիկ Գայանեն գլուխ կանգնեց այն դավադրության, որ կազմակերպել էր Մելիք Եգանը (Մելիք Ավանը) օսմանցի զինվորներին կոտորելու համար: Վարանդայում զետեղված օսմանյան զորքի հրամանատար Սուլեյման բեկը, որ ապրում էր Ավետարանոցում, տեսնելով գեղանի օրիորդին, վճռում է նրան կին վերցնել: Գայանեն՝ քրիստոնեական խիստ դաստիարակություն ստացած մի աղջիկ, պատրաստվում է իր անչը զոհել՝ իր պատիվը պաշտպանելու համար: Նա էր,- հավատացնում է ավանդությունը,- որ Մելիք Եգանին միտք տվեց թշնամի զինվորներին մի գիշերում կոտորելու մասին: Ինքն էլ, համաձայնություն տալով Սուլեյման բեկի կինը լինելու՝ Ավետարանոցի դավադրությունը հաջողացնելու համար, թույլտվություն է ստանում բեկից, որ հայերը, իրենց հին սովորությանը հետեւելով, բարեկենդանի վերջին գիշերը հրացաններ արձակեն իբրեւ նշան, թե ուտիսը վերջացել է եւ մեծ պասն՝ սկսվել: Այդ գիշերն էլ նշանակված էր ընդհանուր կոտորածը: Գայանեն անձամբ ղեկավարում է գործողությունն Ավետարանոցում, եւ ինքն էլ սպանում է Սուլեյման բեկին»[1]:

1. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ.10, Երեւան, 1959, էջ 190-192:

Այստեղ Լեոն ուշագրավ դիտարկում է անում: Նա հայտնում է, թե այդ կոտորածը մտահղացել է ինքը՝ Գայանեն, թե նա է միտքն այդ հայտնել Մելիք Եգանին: Սա արդեն վկայում է հայրենասեր կնոջ հնարագիտության մասին:

Ստեփան Լիսիցյանը Գայանեի սխրագործությունն ու հիշատակը կապում է Ղարաբաղում տարածում գտած գերեզմանների պաշտամունքի հետ: Արցախին նվիրված իր ուսումնասիրության մեջ նա գրում է. «Լեռնային Ղարաբաղում ամենուր տարածված է գերեզմանների պաշտամունքը: Հավատում են, որ առանց հաղորդության հանկարծամահ եղածների (գնդակից, թրից, կայծակից) գերեզմաններն ունեն բուժիչ հատկություններ: Վախեցածներին կռացնում էին նման գերեզմանների վրա ու ծծրակին ջուր լցնում կամ ստիպում ջուր խմել տապանաքարի վրայի թասաձեւ փոսիկից եւ կամ գերեզմանի հողից քսում էին ծծրակին: Հավատում էին, որ նման զորություն ունեն նաեւ հերոսների եւ հրաշագործների գերեզմանները, ինչպիսին է օրիորդ Գայանեի գերեզմանը (Մելիք Շահնազարյանների տոհմից)»[2]:

Գայանեի կատարած սխրագործությունից 93 տարի անց իր խիզախությամբ փայլատակում եւ պատմության մեջ է մտնում արցախցի մի ուրիշ հայուհի, որը կրում էր Խաթայի անունը: Իր «Խամսայի մելիքությունները» երկում Ռաֆֆին հանգամանորեն ներկայացնում է այդ կնոջ արիությունը եւ այն պայքարը, որ մղում էր արցախահայությունը օտար նվաճողների դեմ:

«1826 թվի ամառը պարսից թագաժառանգ Աբաս Միրզան 80 հազար զինվորներով դարձյալ անցավ Երասխ գետը: Ֆաթալի շահի անչնավստահ որդին, որը առաջին փորձն էր արել իր զորքերի մեջ մտցնելու եվրոպական կրթություն, որը նպատակ էր դրել վերականգնելու Պարսկաստանի վաղեմի փառքը, չէր կարող համբերել, որ Պարսկաստանի մի ամենալավ մասը, որպիսին էր Անդրկովկասը, տիրեին ռուսները:

Նրա բանակի մեջ գտնվում էին Ղարաբաղի Մեհտի խանը, Շաքիի Սելիմ խանը եւ Շիրվանի Մուստաֆա խանը, որոնք առաջ ռուսաց կառավարությանը երդում էին տվել, իսկ հետո, դավաճանելով, փախել էին Պարսկաստան եւ, պարսից զորքերի հետ

1. Լեո, Երկերի ժողովածու, հ.3, Երեւան, 1973, էջ 262:
2. Ստ. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը, էջ 58:

վերադառնալով, աշխատում էին ապստամբեցնել Անդրկովկասի մահմեդականներին ռուսների դեմ: Նրա զորապետերի թվում գտնվում էր եւ վրաց իշխանազն Ալեքսանդրը մի քանի վրացի ազնվականների հետ, որոնք հուզում էին Ղազախի, Բորչալուի եւ Ծամշադինի թարաքամաններին ռուսների դեմ:

Անցնելով Երասխը եւ մտնելով Ջանգեզուրի մահալը, Աբաս Միրզան բոլորովին ջարդեց ռուսաց մի բատալիոն, որ գտնվում էր Կորիս գյուղում: Այստեղից արագությամբ մտավ նա Ղարաբաղի գավառը եւ տիրեց ամեն տեղ:

Ղարաբաղի պահպանության համար ռուսները թողել էին Եգերյան զորագնդից 6 ռոտա միայն՝ պոլկովնիկ Ի. Ա. Ռեուտի հրամանի ներքո, որոնք գտնվում էին Չանախչի[1] ավանում, որն այդ ժամանակ պատկանում էր իշխան Մադաթովին: Երբ պարսից զորքերը մոտեցան, պոլկովնիկ Ռեուտը թողեց Չանախչին եւ, իր զինվորների հետ փախչելով, հազիվ կարողացավ ամրանալ Ծուշի բերդում:

Պարսիկները գրավեցին Չանախչին, եւ Աբաս Միրզայի առաջին գործը եղավ հրամայել, որ քանդեն իշխան Մադաթովի պալատը, որը կառուցել էր նույն ավանում:

* * *

Իշխան Մադաթովը ստացավ Մեհտի խանից 15 գյուղեր, որոնց թվում գտնվում էր եւ Չանախչին: Այդ գեղեցիկ ավանը Մելիք Ծահնազարյանների ամրոցն էր. այնտեղ էին գտնվում այդ տոհմի վաղեմի պալատները: Իշխան Մադաթովը այդ պալատները քանդել տալով, նրանց ավերակների վրա հիմնեց իր նոր պալատը, որի փառքը երկար վայելել չկարողացավ նա...

Աբաս Միրզան Չանախչին ավերակ դարձնելով՝ անցավ եւ պաշարեց Ծուշի բերդը: Իր առաջապահ զորքերը իր երեց որդի Մահմադ Միրզայի եւ Ամիր խան սարդարի առաջնորդությամբ ուղարկեց նա դեպի Գանձակի գավառը, որոնք տիրեցին Գանձակի բերդին, բոլորովին ոչնչացրին մերձակա գերմանական կոլոնիաները, առաջացան մինչեւ Ծամխորի գետը, այնտեղից պատրաստվում էին գնալ Թիֆլիսը տիրելու համար:

Ամբողջ անդրկովկասյան քրիստոնյաները գտնվում էին սարսափի մեջ. բոլորը սպասում էին, որ Աղա Մամադ խանի բարբարոսությունները պետք է կրկնվեն: Տեղային մահմեդականությունը մեծ հուզմունքի մեջ էր, բոլորը պատրաստված էին միանալու պարսիկների հետ՝ ռուսներին ջարդելու համար եւ պարսկական իշխանությունը կրկին Անդրկովկասում վերականգնելու համար:

Իշխան Մադաթովն այդ ժամանակ գտնվում էր կովկասյան հանքային ջրերի մոտ, ուր գնացել էր իր առողջությունը կազդուրելու: Այնտեղ տեղեկություն ստացավ Վրաստանի գլխավոր հրամանատար գեներալ Երմոլովից, թե որպիսի վտանգ էր սպառնում Անդրկովկասին: Նա մոռացավ իր հիվանդությունը եւ երկու օրվա մեջ ջրերից հասավ Թիֆլիս: Անմիջապես (10 օգոստոսի) նրան առաջարկվեցավ ընդունել այն զորքերի հրամանատարությունը, որ պատրաստել էին ուղարկելու պարսիկների դեմ: Իշխանը մեծ ուրախությամբ ընդունեց, որովհետեւ վտանգը գլխավորապես իր հայրենիքին էր սպառնում:

Մինչեւ իշխան Մադաթովի հասնելը դառնանք դեպի Ծուշի բերդը, տեսնենք այնտեղ ինչ է կատարվում:

Աբաս Միրզայի բոլոր ջանքերը բերդը տիրելու համար իզուր անցան: Նրա մոտ գտնված ֆրանսիացի եւ իտալացի ինժեներները գործ էին դնում իրենց բոլոր արհեստը: Բնությունից անառիկ ստեղծված բերդը գրավելու հնար չկար: Նա ընդդիմացավ 48 օրվա սարսափելի պաշարման:

Բայց միայն բերդի բնական ամրությունը չէր, որ նրան պահպանեց թշնամու հարձակումներից: Նրան պահպանեց գլխավորապես հայերի անչնազոհությունը:

Բացի բերդի մեջ բնակվող հայերից, այնտեղ շրջակա գյուղերից հավաքվել էին բազմաթիվ հայեր: Այնտեղ կային, որպես վերեւում հիշեցինք, 6 ռոտա ռուս զինվորներ միայն, պոլկովնիկ Ռեուտի հրամանի ներքո: Թե ինչպես էին գործում հայերը, մենք, իբրեւ ապացույց, մեջ կբերենք մի փոքրիկ կտոր իշխան Մադաթովի կենսագրությունից. «Ոչինչ չէր կարող խռովեցնել մի բուռն ռուսներին, որոնք ընկերաբար միանալով հայերի հետ (դրանք ըստ մեծի մասին իշխան Մադաթովի կալվածներից էին)՝ քաջությամբ պատասխանում էին պաշարված բերդի բոլոր կետերի վրա թշնամու հարձակումներին, որը թվով 30 անգամ ավելի էր, քան թե բերդի մեջ գտնված կայազորը, որը չուներ ոչ բավականաչափ ուտելու պաշար եւ ոչ հրանոթներ, որոնք մնացել էին Չանախչիի մեջ, 42-րդ եգերյան զորագնդի բնակության տեղում:

---

[1]. *Չանախչին Ավետարանոց գյուղի օտարահունչ անունն է:*

Տեսնելով կայազորի այդքան համառ դիմադրությունը եւ հույս չունենալով ուժով նվաճելու նրան՝ Աբաս Միրզան աշխատում էր տկարացնել նրան գիշերային անընդհատ հարձակումներով եւ կրակ թափելով... Վերջապես եւ դրա մեջ հաջողություն չգտնելով՝ սկսեց զանազան խոստմունքներով հրապուրել բերդի մեջ գտնված հայերին՝ աշխատելով համոզել նրանց, որ բաժանվեն ռուսներից: Բայց եւ այդ ֆեռնարկության մեջ հանդիպեց հայերի կողմից միահոգի եւ հաստատուն մերժման: Սահմանագլխի այդ նշանավոր բերդի գրավումն անպատճառ կունենար մեզ (ռուսների) համար չափազանց վատ հետեւանքներ, որովհետեւ Աբաս Միրզան, տիրելով նրան, այլեւս արգելք չէր ունենա կանգնեցնել իր արշավանքը եւ ուղղակի առաջ կխաղար դեպի Թիֆլիս, ուր կարող էր հասնել, նախքան թե մեր զորքերը ժամանակ կգտնեին միանալու, որ պաշտպանեին այդ քաղաքը: Շուշիի մեջ կատարված գործողությունները սքանչելի էին: Զիշերով պատրաստված վառոդի եւ գնդակների քանակությունը գործ էր ածվում ցերեկով: Մինչեւ անգամ (հայոց) կնիկները եւ մանկահասակ աղջիկները ցույց էին տալիս եռանդ եւ քաջություն, օգնում էին պաշարվածներին հենց պատնեշների վրա՝ կռվելու ժամանակ բաժանելով նրանց պատրոններ: Դեռ մինչեւ այսօր պատմվում էին շատ զրույցներ Շուշիի բնակիչների այդ ժամանակի մասին...»:

Այդ ինքնազոհության օրինակներից մենք կհիշենք մեկը միայն, որի մեջ փայլում է ղարաբաղցի կնոջ հերոսությունը:

Հենց նույն օրը, երբ Աբաս Միրզայի զորքերը պաշարում են Շուշի բերդը, մի աղքատ կին իր ամուսնու հետ տարել էին մի պարկ ցորյան ջրաղացը աղալու համար: Շուշի բերդի ջրաղացները գտնվում էին Գարգար գետի ֆորի մեջ, Հյունոտ անունով գյուղի մոտ: Ով որ տեսել է այդ անդնդախոր ֆորը, ով որ տեսել է այն նեղ ճանապարհը, որ քարափների կուրծքի վրայով, սարսափելի գահավեժներից բարձրանում է դեպի բերդը, կարող է երեւակայել, թե որքան քաջություն, որքան սրտի ամրություն պետք էր մի կնոջ, որ նա կարողացավ այդ ճանապարհով գնալու ժամանակ ոչ միայն իր անձը ազատել պարսիկ սարվազների ֆեռքից, այլեւ կոտորեց նրանցից շատերին:

Աղքատ կնոջ ամուսինը ալյուրի պարկը շալակած, երկուսը միասին բարձրանում էին քարափներից, հանկարծ վրա են հասնում մի խումբ սարվազներ: Ամուսին այրը պարկը ցած է

գցում եւ սկսում է փախչել: Իսկ կինը մնում է, սկսում է քարերով կռվել սարվազների հետ: Նրան հաջողվում է մեկին ցած գլորել եւ խլել նրանից հրացանը ու սուրը: Այնուհետեւ, մի կողմից պատերազմելով սարվազների հետ, մյուս կողմից՝ ալյուրի պարկը իր ետեւից քարշ տալով, նա բարձրանում է դեպի բերդը: Բերդի միջից հեռվից տեսնում են նրա կռիվը եւ աղաղակներով քաջալերում են: Նա ազատում է իր զավակների ապրուստի պաշարը եւ մինչեւ բերդ մտնելը սպանում է մի քանի սարվազներ:

Մինչեւ այսօր ամեն մի շուշեցի չի մոռացել այդ կնոջ անունը. նրան կոչում էին Խաթայի»[1]:

Որպես հավելում Ռաֆֆին գրում է, որ պոլկովնիկ Ռեուտի առաջարկությամբ ռուսաց կառավարությունը այդ կնոջ համար նշանակեց ցմահ պենսիա[2]:

Այդ նույն Խաթայիի մասին Վ. Պոտտոն իր «Ղարաբաղի առաջին կամավորները» գրքում գրել է. «Հիշում եմ ինչպես ամրոցում ապաստան գտած գյուղացիները իրենց բոլոր անասունները տվեցին ամրոցի կայազորին՝ կերակրման համար, ինչպես մեր հարուստները՝ Հախումովը, Բեղրամբեկ Մելիք-Շահնազարովը, Զոհրաբ աղա Թառումովը եւ ուրիշներ ընդհանուր օգտագործման հանձնեցին իրենց ունեցած հացի զգալի պաշարներ, որը, ի դեպ, հատիկ էր, հիշում եմ նաեւ ինչպես մեր հայերը գիշերները իրենց ուսերի վրա պարկերով ցորենը տանում էին Շուշիքենդ[3] ջրաղացը, որտեղ եղբայրները՝ յուզբաշի Սաֆար, Ռոստոմ Թարխանովները, արագ աղում էին ու արագ ետ էին բերում:

Առանց այս օգնության կայազորը երբեք չէր կարողանա դիմանալ վեցշաբաթյա պաշարմանը: Աբաս Միրզայի բազմիցս փորձերը ջախջախվում էին՝ հանդիպելով հայերի հերոսական դիմադրությանը, որոնց ղեկավարում էին Թարխանով եղբայրները:

Մինչեւ իսկ հերոսներ էին նրանց կանայք, եւ նրանցից մեկին՝ Խաթուհուն,[4] այն ժամանակ գիտեր ողջ Ղարաբաղը»[5]:

Շուշեցի այս հերոսուհուն իր «Անչնանունների բառարան»-ում պատշաճ տեղ է տվել նաեւ Հր. Աճառյանը, որը նախ

---

1. *Ռաֆֆի, Երկերի ժողովածու, 10 հատորով, հ.10, Երեւան, 1959, էջ 348-351:*
2. *Նույն տեղում, էջ 351:*
3. *Շուշիքենդը Շոշ հայկական գյուղի օտարահունչ անունն է:*
4. *Խաթունին նույն Խաթայի կինն է:*
5. *Վ. Պոտտո, Ղարաբաղի առաջին կամավորները. Երեւան, 1974, էջ 50:*

ստուգաբանում է Խաթայի իգական անունը, նշում, որ այն առաջացել է պարսկերեն «չինացի, չինասպանցի» բառից, ապա գրում. «Խաթայի, հերոսուհի շուշեցի»[1]: Աճառյանն ամբողջովին մեջբերում է Ռաֆֆու գրածն այդ կնոջ մասին:

«Խամսայի մելիքությունները» աշխատության մեջ Ռաֆֆին խոսում է Արցախի մի նշանավոր իշխանուհու մասին եւս, որն էլ օժտված էր երկիր, տերություն ղեկավարելու կարողությամբ: Այդ իշխանուհու անունն է Թամար:

Հայտնի է, որ Մելիք-Իսրայելյանները իշխում էին Արցախի Գյուլիստանի գավառում: Մելիք-Իսրայելյանների գերդաստանից էր Մելիք Մեջլումի միակ որդի Մելիք Աթամը: Ինչպես գրում է Ռաֆֆին, նրա հայրը Թիֆլիսում եղած ժամանակ որդուն նշանադրել էր տեղացի «երեւելի ազնվական Յասսեի կրտսեր աղջկան, գեղեցիկ Ռեհանին: Երբ Մելիք Մեջլումի մահից հետո Ջավադ խանը հարսնախոսներ ուղարկեց Թիֆլիս՝ Ռեհանին բերելու, նրա հայրը փոխանակ գեղեցիկ Ռեհանին տալու, տվեց երեց քրոջը՝ Թամարին, որը բավականին տգեղ էր: Այդ դժբախտ ամուսնության պատճառով Մելիք Աթամ երկրորդը երկար չապրեց, նա մեռավ երիտասարդ հասակում թողնելով մի աղջիկ միայն՝ Սհարնազ անունով: Իսկ Թամարը թեեւ շատ գեղեցիկ չէր, բայց խելացի ու ճարպիկ կին էր: Ամուսնու մահից հետո նա երկար կարողացավ կառավարել Մելիք-Իսրայելյանների թողած մեծ ժառանգությունը եւ նրանց հպատակներին, որ այն ժամանակ գտնվում էին Գանձակի գավառում»[2]:

Ներկայացնելով հայ ազգագրական շարժման գործիչ Հովսեփ Էմինի (1726-1809) կյանքն ու գործունեությունը՝ Լեոն հիշատակում է Արցախի մելիքական տոհմի մի ներկայացուցչուհու մասին, որի անունը Մարիամ է. «Նոր հրամաններով եւ հանձնարարություններով Էմինը մի անգամ էլ մտնում է Աստրախան: Այս անգամ ավելի մեծ հաջողության է հանդիպում այդ զարմանալի մարդը, որ հուսահատվել չգիտեր: Նրան միանում են 80 հայ ֆիավորներ: Էմինը ծանոթանում է Ղարաբաղի հերոս Ավան յուզբաշու կնոջ եւ աղջկա հետ եւ այնքան է հավանում օրիորդին, որ խոստանում է նրա հետ ամուսնանալ, եթե հաջողությամբ վերադառնա Հայաստանից: Ավան յուզբաշու (Ավան խան) աղջկա

---

1. Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.Բ, էջ 443-444:
2. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, 10 հատորով, հ.10, էջ 278-279:

անունը Մարիամ էր,[1] եւ, անշուշտ, Էմինը նրա մեջ միայն կանացի հմայք չգտավ, այլեւ այն գրավիչ հրապույրը, որ նա Ղարաբաղի ազատության համար մարտնչած հերոսի դուստրն էր»[2]: Այս Մարիամի հետագա կյանքի մասին մեր ունեցած տեղեկությունները կցկտուր են:

19-րդ դարից սկսած իրենց գործունեությամբ առանձնապես փայլատակել են շուշեցի հայուհիները: Սմբատ Ավագյանը գրում է, որ 19-րդ դարի երկրորդ կեսին Շուշին ավելի շատ բնակիչ ուներ, քան Բաքուն: 1862-63 թ.թ. մարդահամարի տվյալներով Բաքվում բնակվում էր 1.897 մարդ, Շուշիում 19.659: Հետագա տարիներին եւս աճում է Շուշիի եւ ընդհանրապես Ղարաբաղի բնակչությունը: 1904-1913 թ.թ. Շուշիի բնակիչների թիվը 33.100-ից հասնում է 42.700 մարդու[3]:

Իր ճանապարհորդական ուղեգրությունների մեջ Գարեգին Սրվանձտյանը գրում է. «Ի մեջ Մեղրեցվոց եւ Ներքին Թաղեցվոց կա մի մենաստան կուսանաց՝ հանուն սուրբ Աստվածածնի. ունի սա յուր շրջապատն հող եւ պարտեզ եւ յուրյան սեպհական երկահարկ սենյակներ. զորս կառուցած է յուր ծախքով բազմաշխատ մայրապետն Հռիփսիմե կույս Բահաթուրյանց, ուր բաց հինքենե բնակում են նաեւ հինգ կուսանք»[4]:

Գ. Սրվանձտյանի հիշած կուսանաց այդ անապատը 1816-ին կառուցել է կույս Հռիփսիմե Բահաթրյանը իր երեք եղբայրների օժանդակությամբ: Այս անապատի մայրապետերն էլ սերնդեսերունդ եղել են իրենք՝ Բահաթրյանները:

Ոչ այդ ժամանակ, ոչ էլ հետագայում Շուշիի կուսանաց անապատը մեծաթիվ կույսեր չունեցավ: Ընդհանրապես պատմության մեջ մեծաթիվ կույսեր չի ունեցել Արցախի եւ ոչ մի կուսանոց: Բանն այն է, որ Արցախի հայուհիները կենսասեր են, սիրում են ամուսնանալ եւ շատ երեխաներ ծնել: Նրանք խուսափում են միանձնությունից, այդ պատճառով էլ դժկամությամբ են մտնում կուսանոցներ: Մտնողներից շատերն էլ այնտեղ երկար չեն մնում

---

1. Մարիամը ոչ թե Ավան յուզբաշու դուստրն է, այլ՝ քրոջը:
2. Լեո, Երկերի ժողովածու, 10 հատորով, հ.3, էջ 292-293:
3. Ավագյան Սմբատ, Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Երեւան, 1989, էջ 3:
4. Սրվանձտյան Գարեգին, Երկեր, հ.2, Երեւան, 1982, էջ 71:

եւ վերադառնում են կյանք: Հասկանալի է, որ բուռն կյանքով ապրող Շուշիում հայուհիները չէին ցանկանա կուսանոց մտնել եւ կտրվել կյանքից: Իսկ Շուշիում, որը 19-րդ դարի հենց սկզբից դարձել էր Արցախի վարչական ու մշակութային կյանքի կենտրոնը, կանանց կյանքն սկսվում էր ոչ կուսանաց անապատից: 1867 թ. ապրիլի 7-ին Շուշիում բացվում է օրիորդաց դպրոց, որի «նպատակն է պատրաստել լուսավորյալ վարժապետուհիք եւ լուսավորյալ մայրեր»[1]: Այդ դպրոցն իր գոյությունը պահպանում է՝ օգտվելով «երեք տեսակ աղբյուրից. հոգաբարձուհյաց տարեկան տուրքերից, որդեգրուհյաց թոշակից եւ բարերաց նվիրատվությունից»[2]:

1881 թվականին Շուշիի օրիորդաց դպրոցն ուներ 149 աշակերտուհի: Մի շարք առարկաների հետ միասին հայ աղջիկները սովորում էին ձեռագործի արվեստը, որ ուսուցանում էր նրանց Զառի Արզումանյանը: Շուշեցի այս տարեց կինը քիչ ջանքեր չի թափել հայ օրիորդների կրթության գործը Ղարաբաղում կազմակերպելու համար: Օրիորդաց դպրոցի առաջադեմ սովորողներից էին Վարսենիկ Գյանջեցյանը, Մարիամ Բահաթրյանը, Ոսկի Թավրիզյանը, Բալախանում Առաքելյանը, Կատարինե Դոլուխանյանը, Մագրաֆինե Մասումյանը եւ ուրիշներ[3]:

«Մուրճ» ամսագիրը գրում է, որ Եղիսաբեթ Կրասիլնիկյանը Շուշիի քաղաքային վարչությանը թողել է 24 հազար ռուբլու մի կտակ, որով պետք է հոգային շրջակա գյուղերի կարիքները[4]: Դա եզակի դեպք չէ: Շուշեցի կանայք ջանում էին փայլել իրենց հայրենասիրական ձեռնարկումներով:

ժամանակի մամուլը նշում է, որ շուշեցի օրիորդները խորանում են գիտության տարբեր ճյուղերում, դառնում բարձրորակ ուսուցչուհիներ հայկական դպրոցների համար, ակտիվորեն մասնակցում գավառի հասարակական-մշակութային կյանքին: Նրանցից առանձնապես Ոսկի Թավրիզյանը եւ Բալախանում Առաքելյանը Սեդրակ Մանդինյանի մոտ հմտանում են մանկավարժական ձեւերի ու մեթոդների մեջ[1]:

1. «Մեղու Հայաստանի» թերթ, 1864, թիվ 11, մարտի 14:
2. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, 1914, էջ 301:
3. Ս. Ավագյան, Ղարաբաղի մամուլի պատմություն, էջ 97:
4. «Մուրճ» ամսագիր, 1897, թիվ 11-12, էջ 1672-1673:

Շուշիում, սակայն, կյանքը խաղաղ չէր անցնում: 1905-1907 թվականներին այստեղ տեղի ունեցան հայ-թաթարական բախումներ: «Սարսափելի աղետ եղավ Շուշիի գլխին: Օգոստոսի 19-ին սկսվեց կատաղի զինված ընդհարում հայերի եւ թուրքերի մեջ, որն անընդհատ տեւեց մինչեւ օգոստոսի 20-ի կեսօրը: Այրվել էր հայոց թաղամասը: Կրակը կլանեց մոտ 400 տուն, որոնց թվում քաղաքային վարչությունը, հիվանդանոցը, հաշտարար դատարանը, Մարիամյան դպրոցը, դեղատունը, թատրոնը եւ գրեթե հայերի ամբողջ մագազինները»[2]:

Բայց կյանքն, իհարկե, շարունակվում է: Շուշին բուժում է իր վերքերը եւ շարունակում մշակութային վերելք ապրել: Շատերը հայրենօգուտ նվիրատվություններ են անում գրադարան-ընթերցարան բացելու, գիրք-գրականություն հայթայթելու, մշակույթին զարկ տալու համար: 1909-ին հայոց թեմական դպրոցի գրադարանը հարստանում է տիկին Նվարդ ժամհարյանի նվիրատվությամբ: Նա իր հանգուցյալ ամուսնու՝ Մարգար ժամհարյանի ամբողջ գրադարանը (բաղկացած 238 կտոր գրքից) նվիրում է դպրոցին[3]:

Շուշիում կրթական գործին զարկ են տալիս ոչ միայն տղամարդիկ, այլեւ կանայք: Առանձնապես աչքի է ընկնում շուշեցի Մարիամ Հախումյանը: Նրա խնդրանքով է Ստեփանոս արքեպիսկոպոսը համաձայնություն տալիս Շուշիում հիմնելու օրիորդաց դպրոց[4] :

Լեոն բարձր է գնահատել այդ կնոջ կրթալուսավորչական ձեռնարկումները եւ նշում, որ տիկին Մարիամը ոչ մի խոչընդոտի առաջ կանգ չի առնում իր սկսած գործն առաջ տանելիս. նա իր բնակարանը, որը բաղկացած էր հինգ սենյակից, տրամադրում է նորաստեղծ դպրոցին եւ հոգ տանում ուսումնական անհրաժեշտ պարագաներ հայթայթելու համար: Դպրոցն իր գոյությունը պահ-

1. «Գորճ» ամսագիր, 1882, էջ 89:
2. «Մշակ» թերթ, 1905, մարտի 24:
3. «Մշակ» թերթ, 1909, հունվարի 22:
4. Ս. Ավագյան, Ղարաբաղի մամուլի պատմություն, էջ 50:

պանում է այլեւայլ նվիրատվություններով[1]: Նորաբաց այս կրթարանը Շուշիի թեմական դպրոցին կից էր, այստեղի ուսուցիչներն էլ դասավանդում էին Մարիամյան դպրոցում: Շուշեցիներն իրավամբ հիմնադրի անունով դպրոցը կոչել են Մարիամյան:

19-րդ դարի Արցախի կին գործիչների մեջ առանձնանում է մանրանկարիչ Մարգարիտ Ալեքսանյանը: Նրա մասին Դ. Դզնունին գրել է. «Ալեքսանյան Մարգարիտ Ումրիբեկի (1833, Շուշի-1902, Շուշի), մանրանկարիչ: Զբաղվել է ձեռագործով, ապա՝ ձեռագրերի գեղագրությամբ: 1862 թ. իր գեղագիր Ավետարանը ուղարկում է Վենետիկի Մխիթարյաններին: 1868 թ. նկարում է «Հայկական գեղագրություն» ալբոմը: 1886-ին արտագրում է մի Ավետարան, որը նվիրաբերում է Էջմիածնի թանգարանին: 1891 թ. Թիֆլիսում լույս է տեսնում Ալեքսանյանի գեղագիր ալբոմը: Աշխատակցել է «Աղբյուր» եւ «Տարազ» ամսագրերին՝ հայկական ծաղկազարդ նկարներով եւ զարդերով»[2]:

Գառնիկ Ստեփանյանը գրում է, որ Մարգարիտ Ալեքսանյանի պատրաստած գեղագրության տետրակը Վենետիկի Մխիթարյանները համարել են «գործ զարմանահրաշ»: Գ. Ստեփանյանն ավելացնում է, որ ծանր ու հոգեմաշ աշխատանքի ընթացքում վնասվել են նրա աչքերը: Բժիշկներն արգելել են, սակայն Մարգարիտը շարունակել է իր սիրած գործը, արտագրել մի երկրորդ օրինակ եւս[3]:

Մարգարիտ Ալեքսանյանը նոր ժամանակների Արզուխաթուն էր: Նա իր սենյակը դարձրել էր նկարչական արվեստանոց: Լեոն, հիացած նրա վայելչագրությամբ, գրել է. «Պետք է հասկանալ նրա գծած յուրաքանչյուր գծի պատմությունը, պետք է իմանալ՝ ինչպիսի հանգամանքների մեջ ձեռքն այդչափ նրբությամբ ճաշակավոր դասավորության է հասել, եւ այն ժամանակ ամենայն իրավամբ կարող ենք գովել կամքի ուժը, համառ ու չարքաշ աշխատության պտուղը, որ, անկասկած, ստեղծագործողի բնականից բարձր ընդունակություններն է հայտնում»[4]:

---

1. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 301:
2. Դզնունի Դանիել, Հայ կերպարվեստագետներ, Երեւան, 1977, էջ 23:
3. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, հ. Ա, Երեւան, 1973, էջ 48:
4. «Տարազ», 1891, էջ 324:

Արսեն Ղազիկյանը ճշգրտում է Մարգարիտ Ալեքսանյանի աղջկական ազգանունը՝ Հովհանյան[1]:

Մարգարիտ Ալեքսանյանը թաղված է Շուշիի եկեղեցու բակում, ուր սրբատաշ քարի վրա գրված է. «Աստ հանգչի բազմավաստակ գրիչ ու ծաղկող Մարգարիտ Ալեքսանյանը»[2]:

19-րդ դարի շուշեցի նշանավոր կանանց մեջ իր արժանի տեղն ունի Սոֆյա Առաքելյանը:

Սմբատ Ավագյանն իր աշխատության մեջ նրա մասին այսպես է գրել. «Անուրանալի են Սոֆյա Առաքելյանի ջանքերը ոչ միայն դպրոցը, այլեւ գրականությունը, արվեստը, մամուլը աշխատավորությանը ծառայեցնելու գործում: Լինելով զարգացած, կրթված օրիորդ՝ նա գիտեր մի քանի լեզուներ, զբաղվում էր բարոյախոսական գրքերի թարգմանությամբ, հրապարակայնորեն հանդես էր գալիս մամուլի էջերում եւ իր խոսքն էր ասում ժամանակի հուզող հարցերի մասին: Նա գտնում էր, որ առավել ուշադրություն պետք է դարձնել կնոջ զարգացմանը, կրթությանն ու դաստիարակությանը, ուստի անհրաժեշտ էր համարում օգտակար գրքերի հրատարակությունը: Ինքն էլ նախաձեռնում էր որեւէ գրքի թարգմանությունն ու հրատարակությունը: Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Մշակ»-ի մեջ տպագրված նամակը Շուշիից: Այդտեղ կարդում ենք «... Աշխարհի մեջ երջանիկ ապրելու համար պետք է կրթված, զարգացած ընտանիքներ ունենալ, եւ որովհետեւ ընտանիքներին կենդանություն տվողը եւ նրա ծաղիկը կինն է, ուստի եւ կնկան դաստիարակությունը ավելի հարկավոր է կրթվել, ուսում ստանալ... Մեր հայ ընտանիքները համարյա թե դեռ ստրկական վիճակի մեջ են. տան մեջ տիրապետողը, հրամայողը՝ տղամարդիկ, բռնապետական իշխանությունն է, որին պարտ են հնազանդվել անպայման կերպով. կինը համարվում է միայն այդ իշխանության համար մեքենայական գործիք: Այդպիսի մի աննախանձելի վիճակ բարվոքելու համար մեր ազգային գրականության պարտականությունն է ժողովրդի մեջ տարածել առողջ մտքեր, թե ինչ ասել է ընտանիք,

---

1. Ղազիկյան Արսեն, Հայկական նոր մատենագրություն եւ հանրագիտարան հայ կյանքի, հ.1, Վենետիկ, 1909-1912, էջ 32: Ալեքսանյան (տիկին Մարգարիտ), Հայկական գեղագրություն (Գեղագիր ալբոմ), գրագրեցավ ի Մարգարտե՝ դստերե Ումբրի-բեկի Յովհանյանի, ըստ ամուսնոյն՝ Ալեքսանեանց: Ի Շուշի, 1868-ՌՅԺԷ: Կենսագրություն՝ հեղինակիս, գրված պ. Լեոյից, Թիֆլիս, տպ. «Արօր» Տ. Նազարյանցի, 1891:
2. «Սովետական Ղարաբաղ», 1988 թ., 17 հուլիսի:

ինչ ասել է ամուսիններ, որոնք են փղամարդու եւ կնկա առանձին պարտականությունները»[1]:

1920 թվականին թաթար մուսավաթականները բարբարոսաբար ավերեցին Շուշի քաղաքի հայկական թաղամասերը, որոնք զբաղեցնում էին քաղաքի տարածքի մոտ 70 տոկոսը: «Հայկական տարրը» Ղարաբաղում վերացնելու նպատակով մուսավաթականները 1920 թվականի մարտի 23-ին սկսեցին Շուշիի հայ բնակչության ոչնչացումը: Քաղաքի հայոց թաղերի հրդեհը չմարեց ամբողջ երեք օր, իսկ կոտորածի ընթացքում ոչնչացվեցին 30 հազար հայեր: Այդ արհավիրքից հետո էր, որ Շուշին անվանեցին Հայոց Պոմպեյ:

Ռուսաստանի կայսրության մեջ մտած Վրաստանում հաստատված հայ ազնվականների մեծ մասը ծագումով ղարաբաղցի էր: Այսպես, հայ մշակույթի երեւելի գործիչ, իշխանուհի Մարիամ Մարկոսի Թումանյանի (1870-1947) մասին «Բազմավեպ»-ը գրել է. «Իշխանուհի Թումանյանցը դուստրն է Մարկոս Դոլուխանյանի, որն ունի մեծ դիրք եւ կարողություն եւ որը մի ժամանակ եղել է հաշտարար դատավոր եւ քաղաքագլուխ, իսկ մայրն է Ղարաբաղու ամենահայտնի Խամսա մելիքների՝ Մելիք Բեգլարյանցի տոհմից: Օրիորդ Դոլուխանյանը ամուսնացել է հայ իշխան Գեւորգ Թումանյանցի հետ, որը ռուսաց լրագիր «Նովոյե օբոզրենիե»-ի խմբագիրն է: Իշխանուհի Թումանյանցը համարվում է Թիֆլիսի հայ կանանց մեջ ամենաեռանդուն գործիչներից մեկը»[2]:

ՄԵՐ ՕՐԵՐԻ ՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐԸ

Պատմությունը, դաժան ճակատագիրը չի ընկճել Արցախի հայ կնոջը: Արցախուհին միշտ էլ դրսեւորել է հզոր կամք, հաստատակամություն, տոկունություն: Արցախահայ կինը դիմացավ նաեւ երկրորդ համաշխարհային պատերազմի դժվարություններին:

Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 50-ամյակին եւ Շուշիի ազատագրման 3-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր ժողովում ԼՂՀ պաշտպանության փոխնախարար, փոխգնդապետ Ս. Առուշանյանը զեկուցագրում նշեց, որ «միայն փոքրիկ

1. «Մշակ», 1876, 16 նոյեմբերի:
2. «Բազմավեպ», 1903ի փետրվար, էջ 76-77:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից Հայրենական պատերազմին մասնակցեցին ընդունված տվյալների համաձայն 45 հազարից ավելի հայեր: Ներկայումս ճշտվող տվյալներով՝ այդ թիվը հասնում է 56 հազարի: Դա Ղարաբաղի այն ժամանակվա բնակչության թվի 1/3-ից ավելին էր: Համեմատության համար նշեմ, որ պատերազմի տարիներին Ադրբեջանում զորակոչվել է 19 ադրբեջանցիներից ընդամենը մեկը: Վերջին տվյալների համաձայն՝ մոտ 26 հազար ղարաբաղցիներ իրենց կյանքն են զոհել Ղարաբաղից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող մարտադաշտերում»[1]:

1941-1945 թ.թ. պատերազմի տագնապալի օրերին հավաքագրվեցին Արցախի շուրջ 2 հազար քաջարի դուստրեր: Նրանցից ավելի քան հազարը անմիջականորեն մարտնչում էին պատերազմի տարբեր ռազմաճակատներում, մասնավորապես՝ Թամանյան 89-րդ հայկական, Կարմիր աստղի եւ Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանակիր հրաձգային դիվիզիայում, որն անցել է Կովկասյան նախալեռներից մինչեւ Օդերի ափերը, մինչեւ Բեռլին ընկած ուղին: Բացի դրանից, էվակուացիոն հոսպիտալներում վիրավորներին խնամում էին արցախցի ավելի քան 500 կին:

Հակաօդային պաշտպանության զենիթային հատուկ զորամասի անձնակազմը հիմնականում բաղկացած էր արցախցի աղջիկներից:

Ուզում եմ պատմել ղարաբաղցի այն կանանց մասին, ովքեր իրենց հայրերի ու եղբայրների հետ հասան մինչեւ Բեռլին՝ մոր նման պաշտպանելով իրենց որդուն՝ Հայրենիքը, նրանց մասին, ովքեր ամենապայծառ էջերից մեկը գրեցին թշնամու դեմ պայքարի պատմության մեջ, որոնց հերոսական կյանքը անհայտ է ընթերցողների լայն շրջանին: Նման կանանց թիվը շատ է: Ծանոթանանք նրանցից մի քանիսի հետ:

Արմիկ Նիկոլայի Արամյանը գյուղատնտես Նիկոլայ Արամյանի հինգ երեխաներից ավագն էր՝ դաստիարակված հայրենասիրության ու պարտքի մեծ զգացումով: Պատերազմի առաջին իսկ օրերից նա ցգտում էր գնալ գործող բանակ:

«1942 թ. նոյեմբերի 16-ին ինստիտուտն ավարտելուց հետո դիմեցի զինկոմիսարիատ,- պատմում է Արմիկ Արամյանը,- ուզում էի կամավոր գնալ ռազմաճակատ: Թշնամին հասել էր մինչեւ Հյուսիսային Կովկաս: Իմ հայրենակիցներ Աշիկ Ղուկասյանի, Լի-

1. «Մարտիկ», 28 ապրիլի-10 մայիսի, 1995 թ.:

զա Փարսադանյանի, Սիրան Հարությունյանի, Աստղիկ Խաչատրյանի, Ծուշիկ Հարությունյանի եւ ուրիշների հետ մենք հասանք մինչեւ քաղաք Օրջոնիկիձե, այնուհետեւ՝ Արմավիր: Եվ այստեղ մենք առաջին անգամ ապրեցինք ռմբակոծության սարսափը, բայց չկորցրինք մեզ, չընկճվեցինք: Մենք թշնամուց վրեժխնդիր լինելու ծարավ էինք: Այնտեղ ես ծանոթացա ռուս աղջիկների՝ Օլյայի, Նադյայի, Ազայի եւ ուրիշների հետ: Ես եւ Նադյան այնքան մտերիմ էինք, որ գրեթե հարազատներ դարձանք: Այդպես մենք հասանք մինչեւ Բեռլին: Մենք կարգավորող էինք ճակատային ռազմա-ավտոմոբիլային ճանապարհներին: Այդ ծառայությունը, մյուսների պես, իր դժվարություններն ուներ: Բայց ով կարող էր դժվարությունների մասին մտածել, երբ վճռվում էր հայրենիքի բախտը»:

Ղարաբաղի դուստրերը անչնորաց կերպով էին կատարում իրենց պարտականությունները՝ կարգավորելով ռազմա-ավտոմոբիլային ճանապարհները, որոնք վիթխարի նշանակություն ունեին պատերազմի տարիներին: Այդ ճանապարհները կարծես ռազմաճակատի նյարդերը լինեին, ճակատն ու թիկունքը իրար կապող, ռազմաճակատին զինամթերք, պարեն ու հանդերձանք հասցնող կարեւորագույն միջոցներ էին նրանք, ուստի կանայք ջանում էին, որ նյարդերս այդ աշխատեն անխափան: «Ղարաբաղցի բոլոր աղջիկները,- հպարտությամբ ասում է Արմիկ Արամյանը,- աչքի էին ընկնում իրենց բարեխղճությամբ, աշխատասիրությամբ, նրանք միշտ էլ առաջինն էին բոլոր գործերում»: «Գերազանցիկ-ուղեշինարար», «Կոմերիտմիության Կենտկոմի պատվոգիր»՝ ահա այն պատվոգրերը, որոնց արժանացել են մեր աղջիկները:

Ծառայական առաջադրանքներից մեկը կատարելիս Արմիկը Բելոկուրակինում ընկավ ռմբակոծության տակ եւ վիրավորվեց: Ապաքինվելուց շարունակեց իր մարտական ուղին, հասավ Քյոնիգսբերգ, Դրեզդեն, ընդհուպ մինչեւ Բեռլին:

Եվ ահա Ռայխստագը, որի պատին Արմիկը գրեց՝ «Ստեփանակերտ-Բեռլին»: Նա գրեց իր անունը, սրտի ցավով՝ նաեւ ռազմաճակատային ճանապարհներին մահացած ընկերուհու՝ Արշալույսի անունը:

Մարտակերտի շրջանի Մեծշեն գյուղի դուստր էր Արշալույս Ղուկասյանը: 1942 թ. մի խումբ ղարաբաղցի աղջիկներ Արշալույս Ղուկասյանի հրամանատարությամբ հասան Հյուսիսային Կովկաս:

1944 թ. մարտ ամիսն էր: Արշալույսը պառկել էր դաշտային հոսպիտալում: Նրա կյանքի համար բժիշկները կռիվ էին տալիս գիշեր-ցերեկ: Մահճակալից չէր հեռանում ռուս տատիկը, որի մոտ այն դաժան օրերին օթեւանել էր ղարաբաղցի թխաչյա աղջիկը: Կանխազգալով նրա մոտալուտ մահը՝ տատիկը ծածուկ արցունքներն էր սրբում: Երկու օր անց աղջկա մարտական ընկերները՝ ռուս Մարուսյա Օլեյնիկովան եւ Կատյա Բորզովան, ուկրաինուհի Կատյա Վերվերկոն, համերկրացի Լիզա Փարսադանյանը, եկան հոսպիտալ՝ նրան տեսնելու, բայց արդեն ուշ էր: Նրանք վշտահար գնացին Աշիկի գերեզման՝ իրենց վերջին պարտքը կատարելու: Մինչեւ այսօր Արշալույսը հավերժ քնած է ժիտոմիրի մարզի Վչերաշենսկի շրջանի Ճպիկենցի գյուղի եղբայրական գերեզմանոցում:

Արշալույս Ղուկասյանի բախտակիցը դարձավ մեկ այլ մարտական ընկերուհի՝ Արշալույս Գաբրիելյանը Մարտակերտի շրջանի Գյուլաթաղ գյուղից:

1938 թ. ավարտելով Ստեփանակերտի բժշկական տեխնիկումը՝ Արշալույս Գաբրիելյանը բուժքույր էր աշխատում հայրենի գյուղում: Պատերազմն սկսվելուն պես նա էլ շատերի հետ ռազմաճակատ մեկնեց: Ծառայում էր 324-րդ լեռնահրաձգային գնդում: Ամենաթեժ պահերին ղարաբաղցի աղջիկը հայտնվում էր խրամատներում, հերթապահում զինվորների մոտ, օգնություն ցույց տալիս: 1942 թ. գարնանը կատաղի մարտեր էին մղվում Սեւ ծովի մոտ: Գթության քույր Արշալույսը նույնիսկ ամենավտանգավոր պահերին չէր լքում կռվողներին: Հենց որ մեկը վիրավորվում էր, նրան իսկույն սանդուղմարտակ էին հասցնում:

Ջերմանավով վիրավորներին Նովոռոսիյսկ տեղափոխելիս բուժքույր Արշալույսը մահացու վերք է ստանում ռմբակոծության հետեւանքով: Նրա գրպանում էր մնացել սիրած տղայի նամակը, որը այդպես էլ չէր հասցրել կարդալ:

Ֆաշիստական ռումբերից ավերված ռազմա-ավտոմոբիլային ճանապարհների խաչմերուկներում իրենց մարտական մկրտությունն ստացան համերկրացի ընկերուհիներ, կարգավորողներ Վարդուշ Գասպարյանը եւ Աստղիկ Առաքելյանը: Երկու ընկերուհիներն անբաժան էին դեռեւս դպրոցում: Հասունության վկայականի համար քննություններ հանձնելով, հայրենիքի կանչին անսալով՝ հրաժեշտ տվեցին հարազատներին, համագյուղացիներին, մեկնեցին ռազմաճակատ:

1942 թ. հունվարին Վարդուշ Գասպարյանը մի խումբ հասակակից աղջիկների հետ կամավոր մեկնում է Թբիլիսի: Վարորդական դասընթացն ավարտելուց հետո աղջիկն ուղեւորվում է Օրջոնիկիձե քաղաք, այնուհետեւ՝ Արմավիր, այնտեղից էլ՝ Խարկով, որն արդեն ենթարկվել էր ֆաշիստական գրոհին: «Մեր անմիջական ծառայության վայրն էր՝ հ. 18 ռազմա-ավտոմոբիլային ճանապարհա-ռազմաճակատային գծի ստուգման կետ,- հիշում է Վարդուշը:- Ինչ հանչնարարվեց ղեկավարել աղջիկների ստորաբաժանումը, որի կազմում ընդգրկվել էին անահ աղջիկներ Ուկրաինայից, Ռուսաստանից, Հայաստանից»:

Անցնելով Պրսոկուրովը, Տարնաուն, Լվովը, Լանցուդը, Սենժիրշովը, Ռոնկիցան, Կրակովը, Կատովիցեն՝ նորից մեկ ամսով կանգ առան խաչմերուկում: Դեպի Բրեսնաու-Բեուտեն տանող ճանապարհին՝ անտառում, տեղաբաշխված էր գեներալ Մարտիրոսյանի զորամասը: Հիշարժան է այն օրը, երբ նա, որպես համերկրացի, մասնակցեց իրենց պատվին պետի կազմակերպած ճաշկերույթին: Հրավիրել էր ինքը՝ գեներալը:

Բեուտենում, առաջին ստուգման ժամանակ, Վարդուշի առջեւ հայտնվեցին մի խումբ պարտիզանուհիներ՝ ցնցոտիներով, հոգնած, սոված, հագիվ էին քայլում: Նրանց մեջ էր նաեւ համադասարանցի Աշխեն Ասրյանը: Նա մեծ ուրախությամբ ու սիրով կերակրեց աղջիկներին եւ հանգստից հետո ճանապարհեց:

Շարունակելով իրենց մարտական ուղին՝ հասան Բեռլին տանող ամենախիտ խաչմերուկին: Ասեղ գցելու տեղ չկար զորքերի ու տեխնիկայի այս խտության մեջ: Ստուգման էին ենթարկվում բոլորը՝ առանց բացառության: Նպատակը երթեւեկության կարգավորումն էր: Նման խիստ ստուգման ենթարկվեց Խորհրդային Միության մարշալ, Բելոռուսական 1-ին ռազմաճակատի հրամանատար Գ. Կ. Ժուկովը, որը ժպտադեմ գովաբանեց Վարդուշ Գասպարյանին, ասելով. «Որքան փոքրիկ է, բայց՝ խստապահանջ»: Այդ դեպքից մեկ շաբաթ անց ավագ սերժանտ Վարդուշ Գասպարյանն ստացավ գովասանագիր:

Վարդուշը հիշում է. «Մինչեւ տեղ հասնելը ես եւ Աստղիկը մտածում էինք մի բանի մասին՝ որտե՞ղ կարող են լինել մեր սիրելի տղաները: Մենք հիշում էինք Սարգսին եւ Միքայելին, մտովի պատկերացնում առաջին հանդիպումը մեր սիրեցյալների հետ: Մեր մտքերն ընդհատեց «տագնապ» հրամանը...»:

Ստալինգրադի տակ հաղթանակ տանելուց հետո գեներալ Վատուտինի զորքերը, ջախջախելով թշնամուն, խուճապի մատնելով նրան, սրընթաց շարժվում էին դեպի արեւմուտք:

Վարդուշը հիշում է, որ ամեն անգամ կողքով անցնելիս գեներալը իրեն ողջունում էր մեքենայի խցիկից՝ ասելով. «Շուտով կավարտվի պատերազմը, եւ դուք՝ աղջիկներ, կվերադառնաք ձեր արեւոտ լեռնային երկրամաս...»:

Ճանապարհն առաջ էր գնում դեպի արեւմուտք, եւ աղջիկները գրեթե յուրաքանչյուր կանգառում նամակներ էին ստանում Միքայելից ու Սարգսից: Նրանք կռվում էին 1-ին Բելոռուսական ռազմաճակատում եւ հույս ունեին հանդիպել իրար գոնե Բեռլինում...

Ճանապարհն ավելի ու ավելի էր դեպի արեւմուտք ձգվում: Բրեսլաու քաղաքի գրավումից հետո Աստղիկը ընկերուհիների հետ հրաման ստացավ մնալու: Վերքը բուժելուց հետո Վարդուշը գվարդիական զորամասի կազմում հասավ մինչեւ Էլբա, մեկ ամիս անց Բեռլինում էր, բայց կրկին վերադարձավ Բրեսլաու, որտեղ նորից հանդիպեց իր մարտական ընկերուհիներին: Աստղիկի կրծքին նույնպես շողում էր «Կարմիր աստղի» շքանշանը:

Ռայխստագի պատին նա գրեց. «Մարտակերտից մինչեւ Բեռլին, մայիս, 1945 թ.»: Այստեղ նրանք լուսանկարվել են մի խումբ մարտիկներով:

1945 թ. օգոստոսին մեր պատմության հերոսները վերադարձան հայրենի օջախ: Վարդուշն ու Աստղիկը երջանիկ ընտանիքներ ստեղծեցին ամուսինների՝ պատերազմի վետերաններ Միքայելի եւ Սարգսի հետ:

Ահա պատերազմի բովով անցած եւս մեկ հայրենասեր կնոջ կերպար: Ուշադրությամբ նայում եմ դեմքին, հարցեր տալիս՝ փորձելով որսալ իր մասին ասված ժլատ խոսքերի իմաստը: Մարտական ուղի՝ Կովկասից մինչեւ Լեհաստան, հազարավոր փրկված կյանքեր, կուրծքը զարդարող պարգեւներ... Իր մասին, սակայն, ժլատ խոսքեր. «Ուրիշների պես ես պարտքս եմ կատարել հայրենիքի հանդեպ»:

Պատերազմը մեծ փորձություն էր, եւ ծանր բեռ դրեց բժիշկների ուսերին: Հազարավորների պես գործող բանակ կանչվեց եւ 23-ամյա Նելլի Արմենակովնան՝ ունենալով մեկ տարվա աշխատանքային փորձ:

Առաջին Ուկրաինական ռազմաճակատ (այն ժամանակ՝ Վորոնեժյան): Զահել բժշկուհին հայտնվեց հոսպիտալում, որտեղ նա պիտի աշխատեր Մոսկվայից ժամանած մի խումբ բժիշկների հետ:

Կուրսկ-օռլովյան ռազմաճակատ: Վիրավորներին թիվ չկար: Հոսպիտալը վեր էր ածվել սանգումարտակի: Ոմանց առա-

ջին օգնություն ցույց տալով՝ կրկին եր՝ կրակի գիծ էին ուղարկում, ծանր վիրավորներին վիրահատում եւ ուղարկում էին թիկունք: Եվ այսպես՝ երեք տարի: Օր ու գիշեր անընդհատ պայքար էր մղվում մահվան դեմ: Քանի՛-քանի մոր է ուրախացրել բժիշկը, քանի՛-քանի կնոջ երջանկացրել: Երբ հիվանդների հոսքը փոքր-ինչ նվազում էր, եւ նա ի վիճակի էր լինում ոտքերի վրա կանգնել, զինվորական շինելը վերմակ էր դարձնում եւ գլուխը դնում սեղանին՝ քիչ-ինչ ննջելու համար: Իսկ առավոտյան կրկին մահվան ու կյանքի պաքար էր հայտարարվում...

«Կարմիր աստղի» շքանշանին եւ մարտական այլ պարգեւներին հետագայում ավելացել են նորերը՝ աշխատանքային պարգեւները: Նելլին հանրապետության վաստակավոր բժիշկ է, առողջապահության գերազանցիկ, ունի աշխատանքային մեդալներ ու պատվոգրեր:

Ստեփանակերտ քաղաքի բոլոր երեխաները, նաեւ նրանք, ովքեր օգտվում են մանկական կոնսուլտացիայի ծառայությունից, լավ գիտեն հրաշագործ բժշկուհի մորաքույր Հասմիկին: Հասմիկ Ղուկասյանը Արցախի այն դուստրերից է, ում ճակատագիրը սերտորեն կապված է Մեծ հայրենականի հետ:

...Ընդամենը մի քանի ամիս առաջ 17-ամյա աղջիկն ավարտել էր Բաքվի ատամնաբուժական ուսումնարանը եւ եկել Ստեփանակերտ՝ աշխատելու: Երկու որոշում չէր էլ կարող լինել: Որոշեց մեկնել գործող բանակ: Նա գնաց Ուկրաինական ռազմաճակատ, որտեղ դաժան մարտեր էին մղվում: Մասնագիտությամբ ատամնաբույժ էր: Բայց պատերազմի ժամանակ մարդկանց ատամները հազվադեպ էին ցավում:

Նրա հիշողության մեջ անմոռանալի դեմքեր եւ իրադարձություններ են մնացել: Դրանցից մեկը մինչեւ հիմա թարմ է հուշերում, թվում է՝ երեկ է կատարվել:

...Միրգորոդի մոտ գտնվող մարտադաշտից նա դուրս բերեց գրեթե արնաքամ մի ռուս երիտասարդի: Նա ուշակորույս էր: Հոսպիտալի գլխավոր բժիշկ Անատոլի Պետրովիչը ամեն ինչ արեց, որպեսզի նա գիտակցության գա: Եվ երբ զինվորն ուշքի եկավ, Հասմիկ Ղուկասյանն իրեն ամենից երջանիկն էր համարում: Բայց դա երկար չտեւեց: Անատոլի Պետրովիչը վճռեց անդամահատել վիրավորի ոտքը, որովհետեւ այլ ելք չկար, արյուն էր պետք: Գլխավոր բժշկի որոշումը վերջնական էր: Հասմիկն առաջարկեց իր արյունը: Նրանից երկու անգամ արյուն վերցրին: Սահագին ժամանակ անցավ, մինչեւ վիրավորն ուշքի եկավ եւ իմացավ, թե ինչ է կատարվել իր հետ: Նա լուսանկարչին խնդրեց լուսանկարել իրեն՝ փոքրարար աղջկա հետ եւ նկարն ուղարկեց տուն՝ մորը պատմելով դարաբաղցի աղջկա մասին:

Այսպես դասավորվեց Հասմիկի ճակատագիրը: Նա քայլում էր պատերազմի ճամփաներով՝ կյանքը վտանգի ենթարկելով ու փրկելով հարյուրավոր կյանքեր: Հ. Ղուկասյանն արժանացել է կառավարական պարգեւների, պարգեւատրվել շքանշաններով ու մեդալներով: Բեռլինյան օպերացիային մասնակցելու համար ստացել է «Կարմիր աստղ» շքանշան:

Սիրան Հարությունյանին պատերազմը գտավ Բաքվում, ինստիտուտում պետական քննություններ հանձնելիս: Ուսուցչի մասնագիտություն ստանալով՝ նա գործուղվեց Նախիջեւանիկ գյուղը (Ստեփանակերտի շրջան): 1942 թ. մայիսին հրահանգիչ նշանակվեց կուսակցության Ստեփանակերտի շրջկոմում: «Աշխատում էի կուսակցության շրջկոմում,- հիշում է Սիրանը,- բայց ինձ չէր լքում պատերազմի անմիջական մասնակից դառնալու եւ անպայմանորեն գալիք հաղթանակի մեջ իմ ավանդը մտցնելու միտքը: 1942 թ. կամավոր մեկնեցի Մայկոպ քաղաք եւ սկսեցի ծառայել աղջիկների 31-րդ առանձին գնդում: Անցել եմ վարորդական դասընթաց, գործուղվել Օրջոնիկիձե»: Ամերիկյան «Ստուդեբեկեր» տիպի բեռնատար ավտոմեքենայով նա զինամթերք էր տեղափոխում Մոզդոկ եւ Ջուլֆա, Հյուսիսային Կովկաս[1]:

Բժշկական ծառայության լեյտենանտի աստիճանով էր Օդեսայի պաշտպանությանը մասնակցել թաղավարդցի Ծուշիկ Ստեփանյանը, որը ճակատային հիվանդանոցի կոմերիտական կազմակերպության քարտուղար Ջարվարդ Դոլուխանյանի հետ պատերազմի առաջին իսկ օրերին կամավոր մեկնեց ռազմաճակատ: Վերջինս Խնուշինակ գյուղից էր:

1942-ին ֆաշիստները ֆերբակալեցին Ծուշիկին: Նա մեծ տանջանքներ կրեց Սեւաստոպոլի եւ Սիմֆերոպոլի բանտերում: Նույն բախտին արժանացավ նաեւ Ջարվարդ Դոլուխանյանը:

Բանտից ազատվելուց հետո Ծուշիկը կրկին սխրանքներ է գործում: Լսելով մեր զորքերի կողմից Նոյրոնիկա քաղաքի գրավման մասին՝ Ծուշիկը հիվանդանոցի շենքի վրա կանգնեցնում է վեց մետրանոց դրոշ:

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո Ծուշիկը շարունակում է իր ընդհատված ուսումը Երեւանի բժշկական

---

1. *«Արցախ», 1 դեկտեմբերի, 1992 թ.*

ինստիտուտում, իսկ հետո որպես բժշկուհի աշխատում Երեւանում:

Դժվար է մեկ առ մեկ թվարկել արցախուհիների հերոսական ներդրումները 1941-45 թ.թ. պատերազմում: Սակայն թվարկված էլ բավական է նշելու համար, որ հանուն հայրենիքի, հանուն հայ ժողովրդի ապագայի մեր փխրուն արցախուհիները պատրաստ են անչնազոհության՝ տղամարդկանց հետ համահավասար պայքարելով թշնամու դեմ, եւ արցախյան մեր տեսակ ասելով՝ պետք է հասկանալ ոչ միայն մեր քաջակորով տղամարդկանց, այլեւ արցախուհիներին եւս...

Մեծ հայրենականի տարիներին ռազմաճակատ մեկնածներից եւ չէին մնում նաեւ թիկունքայինները: Արցախցիները գիտակցում էին, որ առանց ամուր թիկունքի, առանց նրա ակտիվ աջակցության չի կարող լինել հզոր բանակ, չի կարող լինել հաղթանակ:

Չնայած աշխատունակ բոլոր տղամարդիկ գտնվում էին ռազմաճակատում, մարզի գյուղատնտեսությունը եւ արդյունաբերությունը ոչ միայն չքայքայվեց, այլեւ առաջընթաց ապրեց: Ղարաբաղցի հայ կանայք իրենց բնորոշ արժանապատվությամբ, անտրտունջ փոխարինեցին տղամարդկանց՝ նույնիսկ ամենածանր աշխատանքներում: Նրանք ոչ միայն կարողացան կերակրել իրենց ընտանիքները, պատվով կատարել պետական մթերումների առաջադրանքները, այլեւ ծավալուն օգնություն ցուցաբերեցին ռազմաճակատին: Մեծ հայրենականի տարիներին ղարաբաղցիները երկրի պաշտպանության ֆոնդ են մտցրել 2762337 ռուբլի, 2 կգ 71 գ ոսկի, 31 կգ 99 գ արծաթ, տասնյակ հրաններով սեւ եւ գունավոր մետաղ: Տանկային շարասյուների ստեղծման եւ մարտական ինքնաթիռների կառուցման ֆոնդ է մուծվել 1631214 ռուբլի եւ 5961903 ռուբլու արժողության պետական պարտատոմսեր[1]:

Մարտակերտի շրջանի կանայք 1943 թ. նամակ գրեցին մարշալ Գ. Ժուկովին՝ ուղարկելով նաեւ 50 կգ կշռով ծանրոց եւ ստացան պատասխան: Գ. Կ. Ժուկովը բարյր գնահատեց կանանց աշխատանքային սխրանքը՝ նրանց գրելով. «Ի սրտե շնորհակալություն եմ հայտնում Մարտակերտի շրջանի կանանց՝ բանակին եւ անչափ ինչ հաջողություններ բարեմաղթելու համար: Ձեր շրջանի կանայք թիկունքում ամեն ինչ անում են հաղթանակն ապահովելու համար: Այդ առումով ձեր աշխատանքը պակաս կարեւոր չէ, քան զենքը ձեռքին անմիջական պայքար մղելը թշնամու դեմ» :

* * *

Արմատներով արցախցի է ժողովրդական դերասանուհի Թագուհի (Թագուշ) Գալուստի Սահակյանը (1907-1977): Բաքվում ծնվել, Բաքվում էլ մահացել է: 1926-1949 թվականներին աշխատել է Բաքվի Երամյանի անվան, իսկ 1949 թվականից՝ Ստեփանակերտի Մ. Գորկու անվան (այժմ Վահրամ Փափազյանի անվան) թատրոնում: Եղել է բնութագրական դերերի կատարող: Նրա դերակատարումներն աչքի են ընկել անկեղծությամբ, նուրբ հումորով: Թագուհի Սահակյանի լավագույն դերերից էին՝ Նատո (Սունդուկյանի «Քանդած օջախ»), Երանյակ (Հ. Պարոնյանի «Ատամնաբույժն արեւելյան»), Բիանկա (Շեքսպիրի «Օթելլո»), Վաչիկ (Ա. Գուլակյանի «Արշալույս»), Դավիթ Կոպերֆիլդ (ըստ Չ. Դիքենսի «Դավիթ Կոպերֆիլդ» վեպի)[1]:

Աշխարհահռչակ պարուհի, երգչուհի, բալետմայստր Թամարա Խանումը (իսկական անուն-ազգանունը՝ Թամար Արտեմի Պետրոսյան) ծնվել է 1906 թվականին, Ֆերգանայում, բայց արմատներով արցախցի էր: 1956 թվականին նա արժանացել է ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման:

Թամարա Խանումը 1924-ին ավարտել է Մոսկվայի կենտրոնական թատերական տեխնիկումը: 1926-28-ին եղել է երաժշտա-ազգագրական անսամբլի (Տաշքենդ) պարուհի, 1928-ին՝ ուզբեկական երաժշտա-դրամատիկական թատրոնի կազմակերպիչներից, որին կից 1932-ին հիմնել է բալետային ստուդիա: 1935-ին հանդես է եկել ժողովրդական պարի առաջին համաշխարհային փառատոնում (Լոնդոն): 1937-ից ուզբեկական ֆիլհարմոնիայի արտիստուհի է: Բարենորոգել է ուզբեկական կանացի պարի կատարողական ոճը, էստրադայի համար ստեղծել հատուկ ժանր: Կատարում էր աշխարհի ժողովուրդների երգեր (մոտ 60-62 լեզուներով) եւ սեփական բեմադրությամբ պարեր: 1941 թվականին արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի[2]:

Արցախցի արվեստագետ կանանց զարմանալիորեն հոգեհարազատ են աշխարհի ժողովուրդների երգի-պարի կատարում-

---

1. *«Մարտիկ», 28 ապրիլի-10 մայիսի, 1995 թ.:*

1. *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 10, Երեւան, 1984, էջ 137:*
2. *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երեւան, 1978, էջ 136*

ները: Այդ առումով Թամարա Խանումը բացառություն չէ: Աշխարհի ժողովուրդների երգի-պարերի կատարողի համբավ է ձեռք բերել Արեւ Գրիգորի Բաղդասարյանը, որը 1964-ին արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստուհու կոչման:

Արեւ Բաղդասարյանը ծնվել է 1918 թվականին, Շուշի քաղաքում: Կրթությունն ստացել է Բաքվում, այստեղ էլ ավարտել է պարարվեստի ուսումնարանը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ա. Բաղդասարյանը ելույթ է ունեցել 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայում:

Արեւ Բաղդասարյանի արվեստը երգի, պարի, դերասանական խաղի սինթեզ է: Նրա երգացանկում զգալի տեղ են գրավում հայ ժողովրդական կենցաղային տեսարանները:

Արեւ Բաղդասարյանը մահացել է 1994 թվականին, Երեւանում:

Նաիրա Հակոբյանը ծնվել է 1932 թվականին, Ստեփանակերտ քաղաքում: Տաղանդավոր գեղանկարչուհի է: 1952-ին ավարտել է Մոսկվայի միջնակարգ գեղարվեստական դպրոցը, իսկ 1958-ին՝ Մոսկվայի Վ. Սուրիկովի անվան գեղարվեստական ինստիտուտը: Ցուցահանդեսների մասնակցում է 1957 թվականից: Բնանկարների ու նատյուրմորտների հեղինակ է: Ապրում է Մոսկվայում: Լավագույն գործերից են՝ «Հայաստանի քարերը», «Ճանապարհ դեպի Սաղմոսավանք», «Կժեր»[1]:

Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստուհի Մարգո Ջալալի Բալասանյանը ծնվել է 1927 թվականին, Ստեփանակերտ քաղաքում: 1949 թվականին ավարտել է Երեւանի թատերական ինստիտուտի դերասանական բաժինը: 1953 թվականից Ստեփանակերտի հայկական պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի է:

Բալասանյանը հերոսադրամատիկական դերերի լավագույն կատարողներից է: Նրա դերակատարումներից են՝ Սուսան, Մարգարիտ (Շիրվանզադեի «Նամուս», «Պատվի համար»), Անանի, Սալոմե (Սունդուկյանի «Էլի մեկ զոհ»), Ռուզան (Մուրացանի «Ռուզան»), Նատաշա, Վասսա Ժելեզնովա (Գորկու «Հատակում», «Վասսա Ժելեզնովա»), Հերմիոն (Շեքսպիրի «Ձմեռային հեքիաթ»)[2]:

1. Ղազնուի Դանիել, Հայ կերպարվեստագետներ, Երեւան, 1977, էջ 248:
2. Հայկական համառոտ հանրագիտարան, հ. Ա, էջ 453-454:

Նրա կերտած դերերը ցույց տվեցին, որ վտանգի պահին հայ կինը նույնքան վտանգավոր է, որքան էգ առյուծը:

Մեծահռչակ Վահրամ Փափազյանը գրել է. «Նախ Դեզդեմոնան,- Մարգո Բալասանյան է նրա անունը,- վարդի թերթի պես փոքրիկ բերանով, շարժուն ռունգերով, փոքրիկ քթիկով եւ խորը նստած մեծ աչուկներով, ոչ միայն սիրուն կին է ճապուկ իրանով, այլեւ դերասանուհի՝ օժտված ոչ սովորական տվյալներով: Իմ անհամար դեզդեմոնաների շարքում նա իր ուրույն տեղն ունի...»[1]:

* * *

Արցախի հայ կանանց, ինչպես եւ ամբողջ արցախահայության համար փորձության տարիներ էին 1988-1989 թվականները: Ոչ միայն Ադրբեջանի, այլեւ ամբողջ Խորհրդային Միության մամուլն ու հեռուստատեսությունը մեծ արշավ էին սկսել Ղարաբաղի հայության դեմ: Կեղծելով պատմական փաստերը, վավերացված ճշմարտությունները, օրը ցերեկով սեւը սպիտակ ներկայացնելով՝ ռուսական ու ադրբեջանական մամուլն ու հեռուստատեսությունը կրակի տակ էին առել հայ ժողովրդին: Ի՛նչ ցեխ ասես, որ չէին շպրտում հայության դեմքին: Այդ ահեղ հարվածներին դիմանալու համար, հիրավի, վիթխարի կամք ու տոկունություն էր պետք: Արցախահայությունը, եւ առաջին հերթին՝ Արցախի հայ կանայք, դրսեւորեցին այդ կամքն ու հաստատակամությունը, դիմացան ամեն տեսակ սադրանքի, ամեն տեսակ կեղծիքի եւ հաղթանակով դուրս եկան այդ փորձությունից:

Այդ տարիներին արցախուհիները քննություն էին հանձնում պատմությանը: Նրանք ոչ միայն չերերացին, այլեւ տոկունություն ներարկեցին իրենց ամուսինների ու որդիների սրտերը: Խորհրդային բռնապետական այդ վայրենաբարո ասպատակություններին դիմանալը կարելի է անվանել ոչ թե մահկանացուական խիզախություն, այլ՝ աստվածապարգեւ դյուցազնություն:

Արցախահայության նշանաբանը դարձավ ՄԻԱՑՈՒՄԸ, միացումը մայր Հայաստանին: Հետո նոր նստաշրջան եղավ, Արցախը երկրորդեց, երրորդեց իր պահանջը: Բայց երկրի բարձրագույն մարմինները չանսացին հայ ժողովրդի ղարաբաղյան հատվածի արդար խոսքին՝ այն չեւակերպելով որպես «Ղարաբաղում կուտակված սոցիալ-տնտեսական պրոբլեմներ»: Մինչդեռ Ղարաբա-

1. «Սովետական Ղարաբաղ», 29 հունվարի, 1988 թ.:

ղը ոչ թե պրոբլեմներ, այլ միայն մի պրոբլեմ ուներ՝ միանալ մայր Հայաստանին: Հայոց արդար պայքարը խեղդելու համար 1988-ի փետրվարի 27-29-ին կազմակերպվեց Սումգայիթի հայության կոտորած: Դա եղեռն էր, հայերի ջարդ, որն իր քաղաքական գնահատականը չստացավ պետական բարձրագույն մարմինների կողմից: Ավելին, մորթված հայերին անվանեցին «տարբեր ազգությունների ներկայացուցիչներ»: Համամիութենական ու ադրբեջանական ռադիոն ու հեռուստատեսությունը, մամուլը սկսեցին հայերին հայհոյել, քաղաքակրթության դասեր տալ քաղաքակրթության ամենաբարձր պատվանդանին գտնվող հայ ժողովրդին: Սկսեցին հարցը շուռումուռ տալ, դարաբաղցին կասեր՝ «կըռըմեռ տալ»: Բողոքի հզոր ցույցեր ու միտինգներ տեղի ունեցան Ղարաբաղում ու մայր Հայաստանում: Ժողովրդական այդ շարժման մեջ հսկայական դեր կատարեցին փետրվարին ստեղծված «Ղարաբաղ» կոմիտեն Հայաստանում եւ «Կռունկ» կոմիտեն Ղարաբաղում: Ղարաբաղյան շարժումը խեղդելու համար կենտրոնական իշխանություններն ու Ադրբեջանի կառավարողները անցան բարձր հաչսկերը կտրելու գործելակերպին: Ձերբակալվեցին «Ղարաբաղ» եւ «Կռունկ» կոմիտեների անդամները, եւ երկար ժամանակ ու հասարակության համատեղ հսկայական ջանքեր պահանջվեցին՝ նրանց ազատելու համար:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թվականի հունվարի 12-ի որոշմամբ 1989 թվականի հունվարի 20-ից մարզում մտցվեց հատուկ կառավարման ձեւ, որն անզոր գտնվեց Ղարաբաղի պրոբլեմը լուծելու համար: Հատուկ կառավարման թողտվության պայմաններում Ադրբեջանի կառավարությունն սկսեց ավելի գործուն քայլերի դիմել Արցախ-Ղարաբաղն ադրբեջանացնելու համար: Ամբողջովին հայաթափվեց Շուշին: Սկսեցին բարեկարգվել մարզի միայն ադրբեջանական բնակավայրերը: Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման համար կառավարության հատկացրած 500 միլիոն գումարը սկսեցին ծախսել մարզի «ադրբեջանական դեմքը» ցայտուն դարձնելու համար: Երկու հարեւան ժողովուրդների միջեւ թշնամանքը խոր արմատներ ձգեց: Արցախահայության զգոնությունը պրկվեց: Իր արդարացի պահանջը կառավարության ուշադրությանն արժանացնելու համար մի քանի կարճատեւ գործադուլներից հետո 1989 թվականի մայիսի 3-ից սկսվեց Ստեփանակերտի աշխատավորների գործադուլը, որը շարունակվեց մինչեւ նույն թվականի օգոստոսի 1-ը: Դա ամենատեւական գործադուլն էր Խորհրդային Միության պատմության մեջ:

Երկրի ղեկավար մարմինները սկսեցին ցույց տալ, թե իբր միջոցներ են որոնում արցախահայության պահանջը լուծելու համար: Բայց ոչինչ էլ չէր լուծվում:

1989 թվականի օգոստոսի 16-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը, որը ստեղծեց բոլոր մակարդակների իշխանություններով օժտված Ազգային խորհուրդ: Համագումարը ԼՂԻՄ-ը հայտարարեց անկախ խորհրդային տարածք:

Կարճ ժամանակում Ազգային խորհուրդը զգալի գործ կատարեց մարզի կյանքը բնականոն հունի մեջ դնելու համար: Բայց Մոսկվայի ու Բաքվի իշխանավորները նորից միջամտեցին՝ նորից լարված վիճակ ստեղծելով Ղարաբաղում:

Ղարաբաղյան շարժման հենց սկզբից՝ 1988 թվականի փետրվարից, Ադրբեջանի կառավարությունը շրջափակման մեջ առավ մարզը, փակեց մարզի հայկական բնակավայրերը բերող ու տանող ավտոճանապարհները: Պաշարված արցախահայությունն օգնություն էր ստանում միայն օդով: Խորհրդային կենտրոնական իշխանությունների թողտվությամբ կատարվող այդ շրջափակումը հետապնդում էր քաղաքական մի նպատակ՝ ծնկի բերել իր ինքնորոշման համար օրհասական պայքարի մեջ մտած արցախահայությանը եւ ստիպել, որ նա հրաժարվի մայր Հայաստանի հետ վերամիավորվելու ցգտումից:

Կենտրոնական իշխանությունները Ղարաբաղի հարցը փակելու համար 1989-ի նոյեմբերի 28-ին կայացրին ապօրինի մի որոշում, որը ոտնատակ էր տալիս հայ ժողովրդի ազգային շահերը: Որոշման հիմնական նպատակն էր՝ ԼՂԻՄ-ը թողնել Ադրբեջանի կազմում: Այդ որոշման մասին հայ ժողովուրդն ասաց իր հատու խոսքը: 1989-ի դեկտեմբերի 1-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը կայացրին մի որոշում, որով Լեռնային Ղարաբաղը համարվում էր Հայաստանի հետ վերամիավորված:

Այդ որոշումը սվիններով ընդունեցին Մոսկվայի եւ Բաքվի իշխանավորները: Հայ ժողովրդի դեմ սկսվեցին նոր հալածանքներ: 1990 թվականի հունվարին Բաքվում կազմակերպվեց հայերի նոր ցեղասպանություն: Բաքվից փախան մազապուրծ եղած հայերը, այդ թվում՝ շախմատի աշխարհի չեմպիոն՝ մոր կողմից հայ Գարրի Կասպարովը: Մինչեւ ղարաբաղյան շարժումը Բաքվում ապրում էր շուրջ 300 հազար հայ: 1990-ի հունվարի վերջին Բաքուն լրիվությամբ հայաթափ եղավ:

Հայերի կոտորածներ ու ջարդեր եղան նաեւ Կիրովաբադ-Գանձակում, որը մի ժամանակ հայկական քաղաք էր եւ մտնում էր Մեծ Հայքի Ուտիք նահանգի կազմի մեջ:

Հայերի դեմ հալածանքները հասան հսկայական չափերի: 1990 թվականի մարտից հետո Ադրբեջանի բոլոր հայաբնակ վայրերը հայաթափվեցին: Մոսկվայի իշխանավորների օժանդակությամբ Ադրբեջանի կառավարողները հայերին արտաքսեցին իրենց իսկ պատմական հայրենիքից՝ Հյուսիսային Արցախի մեծ մասից, Ուտիքից, Կամբեջանից:

1990 թվականի հունվարին ԼՂԻՄ-ում մտցվեց արտակարգ դրություն, մարզկենտրոնում զինվորական ուժերով բարձրացվեց Ադրբեջանական ԽՍՀ դրոշը եւ սկսեց վերահսկվել զինվորականների կողմից: Մարզ ժամանեց Բաքվում ստեղծված կազմկոմիտեն, որի հետ, չնայած թափված ջանքերին, արցախահայերը չցանկացան եւ չգնացին երկխոսության: Դարձյալ զինվորականների աջակցությամբ փորձ արվեց Արցախը մեկուսացնել Հայաստանից, մինչեւ իսկ օդային հաղորդակցության սահմանափակման ձեւով: Զինվորականների տեխնիկական միջոցներով եւ ուժերով կազմկոմիտեն եւ մարզի պարեկությունը Ստեփանակերտում «քաղաքապմունք» էին անցկացնում ոտնահարելով արցախահայերի պատիվն ու արժանապատվությունը, հնազանդության կոչ անում: Ադրբեջանի նախագահ Մութալիբովը թռուցիկներ էր գրում, որոնցում բարեկամության դասեր էր տալիս արցախահայերին:

1991-ին հակամարտությունը դառնում է բացահայտ: Ադրբեջանի իշխանությունները անչնագրային ռեժիմի ստուգման պատրվակով խուժում են հայկական բնակավայրերը, վիրավորում հայերի արժանապատվությունը, ֆերբակալում երիտասարդներին եւ նրանց տանջամահ անում Ադրբեջանի բանտերում: Հենց որ խորհրդային կայսերապետությունը փլուզվեց, արցախահայությունը նորից թափ տվեց իրեն եւ պայքարի ելավ՝ արյամբ ֆեռք բերելու իր ազատությունը:

Արցախը դարձավ մի բազմաճակատ ռազմադաշտ: Դա մեծ հերոսամարտ էր, նոր Ավարայր: Ազերիների ռմբակոծություններից քարուքանդ էր լինում Ստեփանակերտը: Կռվում էին ոչ միայն տղամարդիկ, այլեւ կանայք ու երեխաները: Արցախյան այդ կռիվների շղթայում մի լուսեղեն օղակ էր Քարին տակ գյուղի պաշտպանությունը: Հայկական հնամենի այս գյուղն ընկած է Շուշիի արեւելյան կողմում, ժայռի տակ: Վերեւում Շուշին է, որտեղ բնավորված ազերիները գրոհում էին գրեթե ամեն օր: Լեռան բարձունքից նրանք հսկա ժայռակտորներ ու վառվող անվադողեր էին գլորում ներքեւ՝ գյուղի վրա: Իսկ Քարին տակը մնում էր անառիկ: 600 բնակչից բաղկացած այս գյուղը դիմակայում էր բազմահազարանոց խուժանին: Այդ ահեղ ճակատամարտում փայլում էին կանայք: Նրանք ոչ միայն հաց էին թխում թեժ պահերին, մթերք մատակարարում կռվողներին, այլեւ կռվում էին դիրքերում, Քարին տակի կանանց ցուցաբերած արիությունը, հաղթանակի համար անսասան հավատը ուժ ու եռանդ էր տալիս մարտնչող այրերին:

Պատերազմը դաժան փորձություն է ընդհանրապես: Բայց երբ կանացի քնքշությունն է տրոհմի, ազգի ճակատագրի պարտադրանքով նետվում այդ հորձանուտն ու հաղթում մնում ես ցնցված:

Դարեր շարունակ մղվող ազգային-ազատագրական պայքարում ի հայտ եկավ հայի ազատատենչ ոգին: Եվ այդ պայքարում բարոյահոգեբանական իր խոր ազդեցությունն է ունեցել հայ կինը: Նա տղամարդուն հավասար իրեն պատասխանատու է զգում հայրենիքի համար՝ Նուարդիս («Կմեծացնեմ իմ որդուն, եւ նա կառնի հայկական աղեղը մեծ») մինչեւ մարտնչող, զինավառ հայուհիներ՝ Վարդանանց պատերազմի տիկնանց գունդ, Անիի պաշտպան Այծեմնիկ, Դավիթ Բեկին աջակից սյունեցի կանայք եւ այսօրվա ազգային-ազատագրական շարժման կին-մասնակիցներ:

Հաղթանակի նկատմամբ արցախուհու լավատեսությունը գործնական է: Մեկի համար դա զինյալների շարքում զոհված ամուսնու տեղը զբաղեցնելն է, մյուսի համար՝ գթության քրոջ պայուսակն ուսելը, երրորդը գյուղաբնակի՝ հոգաշատությունից անվերջ թվացող օրվա ավարտից հետո տաք գուլպա ու ֆեռնոց է գործում ռազմաճակատում կռվողների համար... Մարտնչող հայորդու սիրուն ու երախտագիտությանն արժանանալ է պետք, եթե անգամ նրա մայրն ես, քույրը կամ սիրած աղջիկը:

Թերթենք Մարգարիտա Թառանյանի զինվորական օրագիրը.

«1992 թ. ամառ: Թշնամին ընդհուպ մոտեցել է Ասկերանի մատույցներին: Ամեն օր, ամեն ժամ իրար շուրթերից լուրեր ենք պոկում: Ծանր ու օրհասական օրեր էին: Պատահաբար քաղաքում աչքիս ընկավ մի հայտարարություն. «Արցախի կանանց ջոկատ» ստեղծելու համար հավաքագրվում են կանայք ու աղջիկներ: Ի՞նչ անեմ:

Գիտեմ, որ դժվար կլինի համոզել հարազատներիս, իսկ շրջապատում ամեն մեկը յուրովի կմեկնաբանի իմ քայլը: Անմիջապես հիշում եմ եղիշեին՝ «տիկնայք փափկասուն Հայոց աշխարհի», բայց անդամագրվեցին ընդամենը 25 հոգի: Սկսվեցին պարապմունքները: Ծրագիրը բարդ է: Բոլորը չէ, որ դիմանում են: 25 հոգուց մնացինք 13-ը»[1]:

Կարինե Դանիելյան, Ռիտա Տերտերյան, Սաֆուրա Շահրամանյան, Վարդուշ Գեւորգյան, Լյուբով Դանիելյան, Եվգենյա Առստամյան, Գայանե Առստամյան, Մարգարիտա Սարգսյան, Անահիտ Պետրոսյան, Արեգա Սարգսյան, Անահիտ Թամրազյան, Սիաննա Մնացականյան եւ Մարգարիտա Թառանյան[2]:

1991 թ. ամառը Արցախի ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ ամենադժվար ժամանակաշրջանն էր: «Կոլցո» օպերացիան իր մահաբեր շնչով թեւածում էր Արցախում, իսկ Արցախը, գտնվելով տեղեկատվական շրջափակման մեջ, չէր կարողանում ճեղքել մեծ տերությունների անտարբերության հեղեղուցիչ շրջափակումը: Բնակչության մի մասը անդամագրվեց ֆիդայական շարժման, մյուսը անցավ ընդհատակը: Եվ, ինչպես միշտ, այդ օրհասական պահը ամենախորը գիտակցեցին արցախուհիները, գիտակցեցին ոչ միայն իրենց հատուկ քաղաքական հոտառությամբ, այլեւ կանացի ամբողջ էությամբ:

1991 թ. օգոստոսի կեսին աշխարհի բոլոր տեղեկատվական գործակալությունների ուշադրության կենտրոնում Ղարաբաղն էր. Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում կանայք պատանդ են վերցրել ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի 40 զինվորների: Մամուլը եւ ռադիոն ի լուր աշխարհի հայտարարեցին, որ այդ օպերացիան կազմակերպել է Հաթերքի կանանց «Փառանչեմ» ինքնապաշտպանական ջոկատը: Հաթերքցի կանայք ոտքի ելան՝ պաշտպանելու իրենց պատիվն ու արժանապատվությունը ինչպես ադրբեջանական օմոնականներից, այնպես էլ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ծախու վարձկաններից:

Միայն 1991 թ. հունիսին ադրբեջանական բանտեր նետվեցին գյուղի 14 խաղաղ բնակիչներ: Եվ երբ հերթական անգամ զրահամեքենաներով Հաթերք մտան զավթիչները, տեղի կանայք նրանց պատանդ վերցրին:

---

1. *«Մարտիկ», 31 մարտի-7 ապրիլի, 1995 թ.:*
2. *«ԼՂ Հանրապետություն», 8 մարտի, 1997 թ.:*

Իրականում Հաթերքի կանանց գլխավորում էր ոչ թե Փառանչեմը, այլ ազգությամբ ռուս Թամարան, որը բնակվում էր Հաթերքում: Հետաքրքիր է լսել ռուս լրագրող Անդրեյ Շվեդովին, որն այդ օրհասական օրերին գտնվում էր Հաթերքում. «Կանայք շարասյունն առան շրջափակման մեջ: Թամարան եւ օմոնականների կողմից առեւանգվածներից մեկի՝ ժորիկի կինը խոսակցության մեջ մտան զինվորականների հետ, իսկ կանայք ավելին էին սեղմում շրջանը եւ երբ արդեն համարյա հասել էին զրահամեքենային, Թամարան առաջինը սերժանտից խլեց ավտոմատը: Ինչոր մեկը փորձեց դիմադրել, այդժամ ֆիդայիներն օգնության հասան եւ զինվորներին զինաթափ արեցին: Այդ ամենը տեղի ունեցավ հաշված վայրկյանների ընթացքում»[1]:

Արցախուհիները հոգու վեհության եւ գթասրտության մարմնավորումն են, գերված զինվորներին վերաբերվում էին ջերմությամբ եւ հոգատարությամբ: Շուտով ԽՍՀՄ ՆԳՆ ներքին գործերի 17 զինվորներ եկան Հաթերք եւ գերի հանձնվեցին[2]:

Սակայն այդ մասին այլ կարծիքի էր ԽՍՀՄ ՆԳՆ ներքին գործերի հրամանատարությունը, եւ իսկույն Մոսկվայից Արցախ ժամանեց միլիցիայի գեներալ Ստարիկովը:

Հաթերքը շրջափակվեց զրահամեքենաներով, կանանց եւ երեխաներին առաջարկվեց թողնել գյուղը, քանի որ պատանդներին ազատագրելու նպատակով հարձակում էր նախապատրաստվում: Դարձյալ լսենք Ա. Շվեդովին. «... Երբ գեներալ Ստարիկովը, որը հատուկ Ստեփանակերտ է ժամանել Մոսկվայից, զանգեց եւ հայտնեց, որ կանայք եւ երեխաները թողնեն գյուղը, քանի որ պատանդների ազատման օպերացիան կարող է սկսվել ցանկացած պահի, աշխարհը ստացավ Հաթերքի կանանց աղաղակող պատասխանը. ոչ մի կին այստեղից ոչ մի քայլ եր չի գնա: Երբ սկսվի հարձակումը, մենք, զինված պայթուցիկ շշերով, առաջինը կնետվենք զրահամեքենաների վրա»[3]:

Դժվար ասել, թե ինչպես կավարտվեր զինված հրոսակների եւ Հաթերքի կանանց վեճը, եթե գործին չմիջամտեր մի ար-

---

1. *«Столица», журнал № 48 (54), 1991 г., Москва (Андрей Шведов «Черный сад») ст. 15*
2. *DR- Press, 17. 08. 91: Այդ մասին հաղորդել է նաեւ L. Մելիք-Շահնազարյանը, որը մի ժամանակ նշված գործակալության թղթակիցն էր Արցախում:*
3. *«Столица», նշված հրապարակումում:*

տասվոր միջադեպ՝ Մոսկվայում սկսվեց պուտչը՝ խռովությունը: Եվ Մոսկվան խռովարարներից պաշտպանելու նպատակով, զինվորներին հրամայվեց արագ վերադառնալ Մոսկվա, վերջիններս էլ առանց նախապայմանների փոխանակեցին պատանդներին: Սիա այդպես կանխվեց հնարավոր արյունահեղությունը:

Հաթերքցի կանանց հերոսությունն ստիպեց արցախցիներին վերանայել պայքարի մեթոդներն ու միջոցները, սթափ նայել առաջիկա անակնկալներին:

Որ կինը գեղեցկության տիպար է եւ արարիչ ու կրող սիրո՝ հաստատված է անհիշելի ժամանակներից, եւ մարդկությանը հավասարապես հասկանալի է ու վեհ թե՛ խոստովանությունը, թե՛ երգն ու խոնարհումը կնոջ գեղեցկության առջեւ... Բայց մարդկային ցեղի շարունակող կինը պատերազմում է եւ նահատակվում:

Մարգարիտա Վարդանի Սարգսյան: Ստեփանակերտի բնակչուհի Մարգարիտա Սարգսյանը ոչնչացրել է հակառակորդի 37 զինվոր, իսկ վերջում, երբ ազերիները շրջապատում են նրան, պայթեցրել է ինքն իրեն, թշնամու 7 զինվորների հետ: Եվ այսպես, արցախյան պատերազմում ծնվեց նաեւ 20-րդ դարի հայ դյուցազնուհին:

Մարգարիտա Վարդանի Սարգսյանը ծնվել է 1960 թվականի փետրվարի 13-ին, ԼՂՀ Մարտունու շրջանի Հացի գյուղում: 1971-ին փոխադրվել է Ստեփանակերտ եւ ընդունվել Հովհ. Թումանյանի անվան մաթեմատիկական թեքումով դպրոցը, որն ավարտել է 1976 թվականին: Դպրոցում սովորելու ժամանակ ցուցաբերել է արտակարգ առաջադիմություն եւ 4-րդ դասարանից «թռել» 6-րդ դասարան: 1976-ին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ բաժին, որն ավարտել է 1981 թվականին:

Զարմանալի խառնվածքի տեր էր Մարգարիտան: Մանկավարժի մասնագիտություն ֆեռք բերեց, բայց չաշխատեց որպես մանկավարժ: Աշխատանքի անցավ Ստեփանակերտի Ղարմեքրաքսկոմբինատում որպես ջուլհակուհի, այնուհետեւ՝ հերթափոխի պետ: Ղարաբաղյան շարժման հենց սկզբից զինվորագրվեց ազատամարտիկների ջոկատին եւ հայտնի դարձավ որպես անվրեպ նշանառու: Զամուսնացավ: Զհասցրեց ամուսնանալ. սիրահարվեց՝ չհասցրեց իր սիրուն արժանանալ... 1993 թվակա-

նի օգոստոսի 28-ին Դուբաթլուի շրջանի (հնամենի հայկական Կովսական գավառ) Բաշարաթ գյուղի մոտ Մարգարիտա Սարգսյանի զորաջոկատը օրհասական մարտի բռնվեց թվով գերակշռող թշնամու դեմ: Հենց այդ մարտում էլ զոհվեց քաջ արցախուհին[1]:

ԼՂՀ նախագահի հրամանագրով, հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած քաջության, անձնական արիության համար հերոսուհին հետմահու պարգեւատրվեց «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

Քանաքարա Միքայելի Ղարայան: Առաջին կին կամավորականներից է եւ առաջին կին զոհը... Ծնվել է 1947 թվականին, Ստեփանակերտում: Բուժքույր էր հանրապետական հիվանդանոցում, երկու երեխաների մայր էր: Զոհվեց մարտի դաշտում հաղթանակի հավատը սրտում: Դա 1992 թվականի հուլիսի 13-ին էր, Քարագլխի մոտ:

...Աշխույժ էր, կենսուրախ: Կատակում էր անգամ ամենադժվար պահերին, հույս ու հավատ ներշնչում մարտական ընկերներին: Նրա կանացի փխրուն արտաքինի տակ հսկայական ուժ ու կորով էր թաքնված: Բարի, անձնազոհ, նվիրված. այդպիսին գիտեին մարտական ընկերները Քանաքարային:

«Աչքերս վախենում էին, բայց ձեռքերս իրենք իրենց էին փաթաթում վերքերը,- ասում էր 19-ամյա Ստալինան՝ բժշկական ուսումնարանի ուսանողուհին, Ստեփանակերտի 3-րդ վաշտի բուժքույրը:

Ստալինա (Ստելա) Խորենի Ասրյան: Ծնվել է 1973 թվականի սեպտեմբերի 11-ին, Բաքու քաղաքում: Զորեղ արմատը Խորեն եւ Երմոնյա ամուսիններին ձգեց, բերեց Արցախ:

Ավարտելով հանրապետական հիվանդանոցին կից 4-ամյա քույրական դասընթացները՝ 1992 թվականի հունվարից Ստալինան ծառայության անցավ Ստեփանակերտի զինվորական հոսպիտալում: Նոյեմբերին առաջին անգամ վիրավորվում է: Ֆիզիկական ամուր կոփվածքն ու կամքը նպաստում են շուտ ապաքինվելուն, եւ Ստալինան նորից շարք է վերադառնում: Մասնակցում է Մարտակերտի բռնագրավված տարածքների ազատագրմանը:

1993 թ. մարտի 20-ին դավադիր ու նենգ ականներ են պայթում Հակոբ Կամարի բնակավայրի մոտ: Զորս մարտական ընկերների հետ զոհվում է եւ Ստալինան:

---

1. Մարգարիտա Սարգսյանի մասին այս տեղեկությունները հաղորդեց նրա մայրը՝ մաթեմատիկայի ուսուցչուհի Արաքսյա Թավադյանը, որը բնակվում է Ստեփանակերտում:

1993 թվականի փետրվարի 9-ին Վաղուհասի մոտ քաջաբար զոհվեց Արցախի ամենախիզախ կանանցից մեկը՝ Անուշ Լերմոնտի Ավագյանը: Ծնվել է 1968 թվականի ապրիլի 24-ին, Մարտակերտի շրջանի Լյուլասազ գյուղում: 1990 թվականին անդամագրվել է Կարո Բաբայանի հրամանատարությամբ գործող 2-րդ դասակին:

Մարտական հարուստ կենսագրություն ունի Անուշը: Մասնակցել է Ղարադաղլուի, Խոջալուի, Մալիբեկլուի, Բերդաձորի, Լաչինի, Մարտակերտի եւ Շուշիի ազատագրման գործողություններին: Մարտի էր գնում երկու մանկահաս բալիկներին թողնելով տանը՝ վաթսունն անց մոր խնամքին:

Այո, Արցախն անկախության եւ ազատության հասավ իր քաջ ուսերի ու դուստրերի արյան գնով: Եվ այդ ազատության մեջ մեծ է դուստրերի բաժինը:

Անյա Սարգսի Ավանեսյանը ծառայում էր որպես քույր-տնտեսուհի, ամբողջ տնտեսության կազմակերպիչն էր, օգնում էր վիրավորների համար սպիտակեղեն լվանալուն, ծանր վիրավոր լինելու դեպքում նրանց կողքից չէր հեռանում կապարելով սանիտարուհու եւ հիվանդապահի դեր, օգնում խոհանոցային գործերին, հիվանդասենյակում կերակուր էր բաժանում...

Նրա երկու որդիներն ու երեք դուստրերը ծառայում են ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շարքերում:

Ամեն անգամ հոսպիտալ այցելելիս բարոնուհի Քերոլայն Քոքսը քույր-տնտեսուհուն գրկում է ու ասում. «Իմ քույր Անյան հրաշք կին է»:

Արցախյան գոյամարտում իրենց մահկանացուն կնքեցին 14 կին հերոսներ: Ահա նրանք.

Ադելա Բաբկենի Աբրահամյան - ծնված 1969 թ., զոհված 1992 թ. հունվարի 1-ին, Քարին տակում

Անուշ Լերմոնտի Ավագյան - ծնված 1968 թ., զոհված 1993 թ. փետրվարի 9-ին, Վաղուհասում

Անյա Սարգսի Ավանեսյան - ծնված 1935 թ., զոհված 1993 թ. մայիսի 3-ին, Ստեփանակերտում

Անյա Ներսեսի Հակոբյան - ծնված 1944 թ., զոհված 1992 թ. մարտի 5-ին, Քարին տակում

Լենա Խորենի Հակոբյան - ծնված 1936 թ., զոհված 1992 թ. հունիսի 12-ին, Կիչանում

Ֆրիդա Գրիգորի Հարությունյան - ծնված 1954 թ., զոհված 1992 թ. մարտի 4-ին, Ղազանչիում

Հասմիկ Բախշիի Բաղդասարյան - ծնված 1970 թ., զոհված 1992 թ. օգոստոսի 22-ին, Ստեփանակերտում

Ռուզաննա Ժորի Եսայան - ծնված 1968 թ., զոհված 1992 թ. դեկտեմբերի 13-ին, Հադրութում

Մարգարիտա Վարդանի Սարգսյան - ծնված 1960 թ., զոհված 1993 թ. օգոստոսի 18-ին, Բաշարաթում

Սվետլանա Խորենի Ասրյան - ծնված 1973 թ., զոհված 1993 թ. մարտի 20-ին, Հակոբ Կամարիում

Քանաքարա Միքայելի Ղարայան - ծնված 1948 թ., զոհված 1992 թ. հուլիսի 13-ին, Քարագլխում

Ստելա Ալեքսեյի Մկրտչյան - ծնված 1960 թ., զոհված 1993 թ. հունվարի 20-ին, Վանքում

Սուսաննա Ռուբենի Սաղաթելյան - ծնված 1975 թ., զոհված 1992 թ. օգոստոսի 6-ին, Մաղավուզում

Աղավնի Արամայիսի Դանիելյան - ծնված 1959 թ., զոհված 1996 թ. նոյեմբերի 2-ին, Ստեփանակերտում:

Այդպես է, հաղթանակի ծառը արյունով է սնվում, լավագույնների արյամբ: Կինը ոգեշնչող ուժ է պատերազմում: Հնարավոր է՝ այս կամ այն ստորաբաժանում թողներ բարդությունքներ; նահանջեր, եթե տղաների կողքին կին չլիներ: Այս առումով անգնահատելի է Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան հայկական դրամատիկական թատրոնի դերասանուհի Ժաննա Գալստյանի դերը: Ժաննան «Կռունկ» կոմիտեի անդամ էր եւ իր գործուն մասնակցությունն է բերել Արցախի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Հավանաբար ամեն մի հեղափոխություն, ամեն մի ազատագրական շարժում ունի կանայի իր խորհրդանիշը: Արցախի համար այդպիսի խորհրդանիշ է դարձել Ժաննա Գալստյանը, մեր Ժաննա դ'Արկը, ինչպես ստեփանակերտցիները սիրով ու հպարտությամբ անվանում են նրան:

Նա շատ նմանություն ունի Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկի հետ: Եթե ս. Շուշանիկը համարվում է հայ գաղափարական կնոջ միջնադարյան իդեալ, ապա Ժաննային վստահ կարելի է համարել արցախցի գաղափարական կնոջ ժամանակակից իդեալ:

Ժաննա Գալստյանը, իր սկզբունքին հավատարիմ, Ղարաբաղի ինքնապաշտպանության մարտիկների հետ ուս ուսի մարտնչում էր թշնամու դեմ: Եվ պատահական չէ, որ Ադրբեջանի հանրապետական դատախազությունը դրամական խոշոր պարգեւ է

խոստացել նրան, ով Բաքու կհասցնի ժաննային, եւ մահվան դատապարտել անվախ դերասանուհուն[1]:

Ռուս գրող, Արցախի մեծ բարեկամ Օսկոցկին 1991-ին մամուլում մի հետաքրքիր միտք է հայտնել. «Ես երազում եմ այն օրը, երբ ղարաբաղցի գյուղացին հողը կհերկի, ժաննա Գալստյանը բեմ կբարձրանա»[2]:

Այսօր խաղաղություն է Արցախում, եւ ժաննան բեմ է բարձրացել, եւ նրա սկզբունքն է. «Պատերազմում հաղթեցինք, կհաղթենք նաեւ հոգեւոր ոլորտում»: Հոգեւորի հաստատման ժամանակն է:

Ռազմա-բժշկական ծառայության անձնակազմի 70 տոկոսից ավելին կանայք են:

ԼՂՀ պաշտպանության բանակում այսօր 1000 կին է ծառայում:

1997 թ. մայիսի 9-ին՝ Շուշիի ազատագրման 5-րդ տարելիցին, գնդապետի ուսադիրներով զորահանդեսի ելավ 46492 զորամասի՝ թիկունքի գծով հրամանատարի տեղակալ Էլմիրա Աղայանը:

Էլմիրա Աղայանը ԼՂ ՊԲ առաջին կին-գնդապետն է:

Արցախի մեծ բարեկամներ են դարձել Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուհի Քերոլայն Քոքսը եւ բուլղարացի նշանավոր կինովավերագրող Ցվետանա Պասկալեւան: Վերջին հինգ տարիներին Ք. Քոքսը բազմիցս այցելել է ԼՂՀ, արտասահմանից մեծ չափերի հասնող օգնություն հասցրել իրենց անկախության ու ազատության համար մարտնչող ղարաբաղցիներին՝ աշխարհով մեկ հայտարարելով. «Հպարտ եմ, որ ինձ ճանաչում են իբրեւ Արցախի դուստր»[3]: Նրան են պատկանում նաեւ այս խոսքերը. «Ղարաբաղը ոչ այսօր, ոչ վաղը եւ ոչ հեռավոր ապագայում այլեւս չի կարող մնալ Ադրբեջանի կազմում»[4]: Իսկ Ցվետանա Պասկալեւան մի քանի կինոֆիլմեր է նկարահանել եւ ցուցադրել աշխարհի բազմաթիվ երկրների էկրաններում, որով եւ օտարներին ծանոթացրել է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին:

Պատմությունը վկայում է, որ արցախցի կինը երբեք հեռու չի եղել նաեւ քաղաքական կյանքից եւ վճռական պահերին միշտ էլ կարողացել է զորավիգ լինել հայրենիքին: Ներկայումս արցախցի կին քաղաքական գործչի առկայությունը ոչ ոք չի զարմացնում: ԼՂՀ Ազգային ժողովի 33 պատգամավորներից 6-ը կին են: Կին են ԼՂՀ Ազգային ժողովի փոխնախագահը, պաշտպանության, անվտանգության, պետական շինարարության, իրավունքի եւ օրինականության հանձնաժողովի նախագահը, մանդատային, մարդու իրավունքների եւ ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի փոխնախագահը եւ ֆինանսա-վարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի փոխնախագահը (տողերիս հեղինակը):

Արցախցի կանայք պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում նաեւ ԼՂՀ կառավարությունում: Կանայք են Սխտորաշենի, Մոխրաթաղի, Կարմիր շուկայի, Վաղուհասի եւ Քուրաթաղի գյուղապետերը[1]:

70 տարիներ ի վեր Ադրբեջանի իշխանությունների տնտեսական քաղաքականությունն ուղղված էր նրան, որպեսզի Լեռնային Ղարաբաղում ստեղծվի մի իրավիճակ, երբ տղամարդիկ, զրկվելով աշխատելու հնարավորությունից, ընտանիքը կերակրելու համար աշխատանք որոնեն հայրենիքից դուրս: Արցախի խոշորագույն ձեռնարկություններում՝ մետաքսի կոմբինատում, էլեկտրատեխնիկական գործարանում, կոշկի ֆաբրիկայում, կոնդենսատորների գործարանում, տեղական արտադրության կոմբինատում եւ այլուր, հիմնականում աշխատում էին կանայք (նրանք կազմում էին անձնակազմի 85-90%-ը): Այդ ձեռնարկություններն այսօր աշխատում են իրենց հզորության հազիվ 15-20 %-ի չափով: Հազարավոր կանայք զրկվել են աշխատելու հնարավորությունից[2]: 1996 թ. օգոստոսի 1-ի դրությամբ հանրապետությունում գրանցվել է 4 հազար 128 գործազուրկ կին[3]:

Անցման փուլին հատուկ դժվարություններին եւ կանանց հիմնահարցերին առնչվող այլ խնդիրների լուծմանն են կոչված նաեւ կանանց հասարակական կազմակերպությունները:

Ռաֆֆին, անդրադառնալով կնոջ հասարակական կոչմանը, նշել է. «Կինը իր նուրբ խելքով եւ հրապուրիչ բնավորությամբ կարող է լինել մի լավ կապ գործող ուժերի միջեւ: Նրա սալո-

---

1. «Արցախ», 24 դեկտեմբերի, 1992 թ.:
2. «ԼՂ Հանրապետություն», 9 հունվարի, 1996 թ.:
3. «Գրական թերթ», 23 դեկտեմբերի, 1994 թ.:
4. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 8 փետրվարի, 1998թ.

1. ԼՂՀ վարչատարածքային կառավարման բաժնից:
2. Բելա Բաբայան, «Կնոջ հիմնահարցերը Արցախում» զեկուցումից՝ կարդացված կանանց միջազգային Պեկինյան համաժողովի լույսի ներքո, Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի կողմից կազմակերպված կոնֆերանսում, ԶԱ նիստերի դահլիճում, 1996 թ. հունիսի 28-ին:
3. ԼՂՀ վիճակագրության եւ պետական ռեգիստրի տեղեկագիր:

նում կարող էին մշակվել եւ հասունանալ ամեն տեսակ հասարակական խնդիրներ: Եվ կինը կարող է առաջնորդել եւ խրախուսել գործող անձինքներին: Եվ դրանում է բովանդակվում կնոջ բարձր նշանակությունը, երբ նա կմասնակցեր հասարակական կյանքին՝ իր ձեռքում որպես գործիք վարելով տղամարդին: Եվ ոչ միայն ժողովրդի բարձր դասի մեջ, այլեւ իջնելով դեպի ցած, նրա բոլոր ծալքերում, կինը կարող է հայտնվել որպես ազդող ոգի, որպես ներգործող ուժ, թե խոշոր եւ թե մանր բաների մեջ: Ահա դրանումն է նրա մեծ հասարակական կոչումը»[1]:

Այսօր Արցախում գրանցված են կանանց 5 հասարակական կազմակերպություններ[2], որոնց հիմնական նպատակն է՝ պաշտպանել հանրապետության կանանց շահերը եւ իրավունքները, մասնակցել կյանքի բոլոր բնագավառներում կանանց համար ներդաշնակ[3] պայմանների ապահովման գործընթացին:

«Հայ կին» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1994 թ. նոյեմբերի 20-ին: Նրա հիմնական նպատակն է՝ «Հայ կնոջ մեջ հայրենասիրական, ազգասիրական ոգին արթուն պահելը, ազգային անարատ նկարագիրը, ինչպես նաեւ հայ նոր սերնդի հայեցի դաստիարակությանը նպաստելը»[4]:

Միության տեսադաշտում հիմնականում 3 խումբ երեխաներ են. արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների երեխաներ, երկկողմանի որբ երեխաներ եւ պատերազմական տարիներին ծնված զույգեր[5]:

Ատենապետուհի Աննա Ասատրյանի ջանքերով Ամերիկայի Հայ օգնության միությունը վերջերս իր կազմի մեջ ընդունեց «Հայ կին» միությունը:

«ԼՂՀ զոհված զինծառայողների ծնողների ընկերություն» հասարակական կազմակերպության հիմնադիրներն են երեք զոհված ազատամարտիկների մայրեր՝ Գալյա Առստամյանը, Նորա Պետրոսյանը եւ Լյուսյա Թեւոսյանը: Ընկերության շարքում գրանցված է ավելի քան 3 հազար ընտանիք:

---

1. Ռաֆֆի, հ. 9, 1964, էջ 380:

2. ԼՂՀ արդարադատության վարչության տվյալներով:

3. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն սխալ է համարում կնոջ եւ տղամարդու հավասարությունը տեսնել թվի, դիրքի կամ պաշտոնի մեջ: Խորության գաղափար չկա: Նրանց ներդաշնակության մեջ է կայանում մարդկային կյանքի երջանկության գաղտնիքը,- գտնում է կաթողիկոսը:

4 «Հայ կին» հասարակական կազմակերպության կանոնադրությունից:

5. Նույն տեղում:

Արցախի կանանց ակտիվ քաղաքական կեցվածքի խնդիրներով է մտահոգված «Լեռնային Ղարաբաղի կանանց միություն» հասարակական կազմակերպությունը. խորհրդարանական ընտրություններում ներկայացնելով իր թիմը՝ 2 ձայն ապահովեց խորհրդարանում (ԼՂՀ Աժ փոխնախագահը եւ ես):

* * *

Արդեն 6 տարի է՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դե-ֆակտո կայացել է: Նա կառուցում է իր պետականությունը, ունի ժողովրդի կողմից ընտրված ղեկավարություն, լուծում է տնտեսական եւ սոցիալական զարգացման հիմնախնդիրներ, ստեղծում ժողովրդավարական ինստիտուտներ, ռազմական, դիվանագիտական եւ քաղաքական միջոցներով ապահովում իր անվտանգությունը:

ԼՂՀ-ն թեւակոխել է իր ազատագրական շարժման վերջին փուլը՝ ԼՂՀ-ի դե-յուրե ճանաչման փուլը, իսկ աշխարհի կողմից ԼՂՀ-ի ճանաչման գործընթացն ընթանում է բարդ եւ հակասական ճանապարհով: ԼՂՀ-ն վարում է ճկուն եւ կառուցողական դիվանագիտական քաղաքականություն:

Արցախի նորընտիր նախագահ Արկադի Ղուկասյանն իր երդմնատվության օրից մեկ ամիս անց՝ 1997 թ. հոկտեմբերի 7-ին, հրավիրելով մամլո ասուլիս, հստակ շարադրել է Արցախի դիրքորոշումը. «Մենք բազմիցս ընդգծել ենք՝ ԼՂՀ-ն չի կարող համաձայնվել մի այնպիսի կարգավիճակի ընդունման հետ, որ ելնում է ադրբեջանական պետության ուղղահայաց դիսկրետիոն իրավազորությունների գոյությունից»[1]:

Արցախյան հարցի միջազգայնացման գործընթացում եւս ծանրակշիռ է արցախուհիների ներդրումը:

Աշխարհահռչակ ֆիզիկոս Անդրեյ Սախարովի կինը՝ մարդու իրավունքների հայտնի պաշտպան Ելենա Բոնները, որ բնիկ շուշեցի Լեւոն Քոչարյանի դուստրն է[2], աշխարհով մեկ հնչեցրեց Արցախի դատը: «Վաշինգտոնում եւ Մոսկվայում բազմաթիվ հանդիպումներ եմ ունենում կոնգրեսականների եւ սենատորների հետ:

---

1. «ԼՂ Հանրապետություն», 9 հոկտեմբերի, 1997 թ., թ. 120:

2. Ելենա Բոնները ամենեւին էլ Գեւորգ Ալիխանյանի (որը 1920-21 թթ. եղել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 1-ին քարտուղար) դուստրը չէ: Այս մասին հայտարարել է ինքը՝ Ելենա Բոնները, 1995 թ. նոյեմբերի 13-ին ռադիոյով ունեցած ելույթում:

ես գտնում եմ, որ սկզբունքորեն կարեւոր է, որ Եվրոպան ու ամբողջ աշխարհը եւ կանգնեն մի շարք սկզբունքներից, որոնք հաղթանակած սոցիալիզմի լիդերի՝ Ստալինի ճնշմամբ դրվել են միջազգային կազմակերպությունների եւ մասնավորապես ՄԱԿ-ի հիմքերում 2-րդ համաշխարհային պատերազմից հետո: Մասնավորապես, դոգմայի հասցված տարածքային ամբողջականության սկզբունքը, որը Եվրոպայում, Անդրկովկասում եւ Ռուսաստանի նախակովկասային տարածաշրջանում, ասենք նաեւ Մերձդնեստրովիեում, այսօրվա արյունալի վիճակը ծնած պատճառների շղթայում ես գլխավորներից մեկն եմ հաշվում: Այդ ամենը կապված է այն բանի հետ, որ այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում է այսօրվա միջազգային իրավունքը, չեն համապատասխանում այսօրվա իրավիճակին: Ղարաբաղը հենց այդ իրավիճակի սուր դրսեւորումներից մեկն է»[1],- հայտարարել է Ելենա Բոնները «ԼՂ Հանրապետություն» թերթի գլխավոր խմբագիր Մաքսիմ Հովհաննիսյանի հետ հարցազրույցում, որը տեղի է ունեցել 1993 թ. մարտին, Լոս Անջելեսում:

Արցախուհիները, օգտագործելով աշխարհի հասարակական-քաղաքական կազմակերպությունների ամբիոնները, հնչեցնում են արցախահայության արդար պահանջը: «Արցախցին երբեք չի հրաժարվի նախնյաց հողում ազատ եւ ապահով ապրելու իր դարավոր երազանքից, չի ընդունի իրեն պարտադրվող՝ ազգային փոքրամասնության նվաստացուցիչ կարգավիճակը: Դա ծաղր է արդարության սկզբունքին»-1995 թ. սեպտեմբերի 5-ին Լոս Անջելես քաղաքում կայացած Ամերիկայի Հայկական համագումարի հոբելյանական 25-րդ նիստում հայտարարեց Արցախի պետական համալսարանի հումանիտար ֆակուլտետի դեկան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արզիկ Մխիթարյանը:-Ադրբեջանը պարտավոր է ընդունել մեծագույն մի ճշմարտություն՝ Արցախը միայն հող չէ, որ կարելի է գրավել կամ փոխանակել նավթով: Արցախը Հույս է, Հավատ է, Հայրենիք է: Արյան գույն ստացած մեր հողի գինը նավթը դառնալ չի կարող, նրա արժեքը միայն ու միայն Անկախությունն է»[2]:

---

1. «ԼՂ Հանրապետություն», 15 մարտի, 1995 թ., թ. 35:

2. Արզիկ Մխիթարյանի ելույթից՝ կարդացված 1997 թ. սեպտեմբերի 5-ին Ամերիկայի Հայկական համագումարի՝ Լոս Անջելես քաղաքում կայացած նիստում:

«... Մեր դիրքորոշումը այսպիսին է. ի շահ խաղաղության եւ կայունության՝ փաստացի անկախ Ղարաբաղը պատրաստ է որոշակի չափով զոհաբերել իր անկախության մի մասը եւ Ադրբեջանի հետ կառուցել միջազգային համաձայնագրի վրա հիմնված հորիզոնական հարաբերություններ: Դա մեզ հիմք է տալիս հուսալ, որ համաշխարհային ընկերակցությունն ըմբռնումով կընդունի մեր դիրքորոշումը»[1],- այսպիսին է ԼՂՀ-ի եւ նրա արտաքին գերատեսչության դիրքորոշումը մեր հիմնահարցում, գերատեսչություն, որը ԼՂՀ նախագահի 1997 թ. հոկտեմբերի 29-ի հրամանագրով գլխավորում է Նաիրա Ռաֆայելի Մելքումյանը, որ մինչեւ այդ Հայաստանի Հանրապետությունում ԼՂՀ արտակարգ եւ լիազոր ներկայացուցիչն էր: Պատերազմող Արցախի արտաքին գերատեսչության ղեկավարը արցախուհի է. պատահական չէ այս ընտրությունը, երեւույթ, որն աշխարհին հուշում է մեր պետության խաղաղասիրության մասին:

Արցախուհիները փորձում են աշխարհում ստեղծել հայանպաստ կարծիք՝ իրենց կանացի բնազդով, կանացի բարությամբ առաջադեմ կանանց ուշադրությունը հրավիրելով մեր հիմնահարցի վրա: ԱՄՆ-ի հայտնի կոնգրեսական Փորթերի տիկինը՝ Քեթրին Փորթերը, որ մասնակցում էր Ամերիկայի Հայկական համագումարի հոբելյանական նիստին, ծանոթ լինելով մեր հիմնահարցին, հայտարարեց, որ եթե Արցախը ներքաշվի պատերազմի մեջ, ինքը կգինվորագրվի մեր պայքարին[2]: Նման պատրաստակամությունների եւ արդարությունների վրա է եւ արցախցիների հույսը:

Քաղաքական ահա այսպիսի պայմաններում Արցախի հայ կինը իր պատմական առաքելությունն է կատարում եւ, տղամարդուն հենարան դարձած, կառուցում իր հայրենի տունը:

---

1. «ԼՂ Հանրապետություն», 9 հոկտեմբերի, 1997 թ., 120:

2. «Արցախի համալսարան», 14 հոկտեմբերի, 1997, թ.7:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում տարբեր ժողովուրդների, տարբեր մտածելակերպի, գաղափարների տեր պետությունների տիրապետության տակ լինելով՝ ինչքան էլ դիմացել է, պահպանել իր ուրույն դեմքը եւ երկար ժամանակ մշակույթի, ավանդույթների միջոցով պինդ կառչել է՝ հաճախ բարձր գին վճարելով, բայց չէր կարող չազդվել:

Բարձրահասակ, պնդակազմ արցախուհիները, կյանքը փրկելու համար բարձրանալով լեռները եւ ամրապնդվելով լեռնային օդի ազդեցությամբ, իրենց զերծ պահեցին այն վարակներից, որ բաժին ընկան հովիտների բնակիչներին: Ի տարբերություն հովիտների բնակչության, որոնք լրիվությամբ կամ մասամբ կորցրել են իրենց նախասկզբնական թե՛ լեզվական եւ թե՛ կենցաղային կերպարանքը, Արցախը պահպանել է համեմատաբար ավելի շատ էթնիկ-ժառանգություն:

Արցախուհին՝ թագուհուց մինչեւ շինական, հեթանոս ու քրիստոնյա ավանդների միահյուսմամբ, ներկայանում է որպես մի ամբողջական կերպար՝ իբրեւ բարձր բարոյականության կրող, որի էության մեջ պահպանվել են վաղնջական ժամանակների հայերին հատուկ հատկանիշներ:

Արցախուհու դերը պատմության մեջ եղել է ուրույն: Նա ամբողջ պատմության ընթացքում գնացել է բնությամբ պայմանավորված ուղիով, որը ե՛ւ գեղեցիկ էր, ե՛ւ արդար:

Հայաստանում, մասնավորապես՝ Արցախում, կինը առանձնապես ստրկացված չի եղել, նույնիսկ ստրկատիրական շրջանում, ինչի վառ վկայությունն է հնագույն ժամանակներից հայկական դամբարաններում հայտնաբերված քարի վրա պատկերված տղամարդն ու կինը՝ միմյանց ձեռք բռնած, ինչը վկայում է նրանց միասնության ու սիրո ուխտի մասին:

Իբրեւ մայր՝ հայ կինը արժեքավորվում է 2 հիմնական գծերով՝ բոլորանվեր ու անսահման նվիրվածությամբ ու հայրենիքի պատկերի խորհրդանշմամբ:

Մայրությունը արվեստների արվեստն է: Մայրական անդավաճան սիրո եւ անձնուրացության լավագույն օրինակներ են Հաթերքի մեծ իշխան Վախթանգի կին Արզուխաթունը, Հասան Ջալալ Դոլայի մայրը՝ Խորիշահը, կինը՝ Մամքանը: Իսկ երբ վտանգվում է հայրենիքը, հայ մայրը՝ արցախուհին, ըմբոստանում է թշնամու դեմ: Ջուր չէ, որ հայերս հայրենիքը, հողն ու լեզուն «մայր» ենք կոչում:

Արցախուհուն, որպես կնոջ, բնորոշ են անձնազոհությունը, խոնարհությունը, արժանապատվությունը, իմաստնությունը, անանձնական սերը, հայրենասիրությունն ու քաջությունը, առաքինությունը, ազգային ոգու պահպանությունը:

Հանուն հայրենիքի, ժողովրդի զոհվելու պատրաստակամության վառ դրսեւորումներ էին Հասան Ջալալ Դոլայի եւ իշխանուհի Մամքանի 3 դուստրերից Ռուզուքանը, Ավետարանոցի Մելիք Ճահնազարի դուստրը՝ Գայանեն, շուշեցի գեղջկուհի Խաթան եւ այլն:

Նվիրվածությունն ու խոհեմությունը ամենեւին էլ ստրկամիտ չեն դարձնում արցախուհուն: Արժանապատվությունը Վարազ-Տրդատի դուստր Ճահանդուխտի, իշխանուհի Դոփի գլխավոր բարոյական գծերից էին:

Իմաստնության ու առաքինության փայլուն դրսեւորում է իշխանուհի Դոփը, որը վաղ կորցնելով ամուսնուն՝ Խաչենի Ծարա ճյուղի իշխան Հասանին, անցավ իշխանության գլուխ, իր իմաստնությամբ ու առաքինությամբ արտոնյալ վիճակ ստեղծեց իշխանության համար: Դոփի անունով կոչվեց իշխանությունը՝ արտառոց մի երեւույթ հայ իրականության մեջ, երբ կնոջ անունով կոչվեց տոհմը:

Արցախուհուն, եւ ընդհանրապես հայուհուն, հատուկ հատկանիշներից է եւ անանձնական սերը: Հայ կինն օրհնում ու բարին է կամենում նեղության մեջ գտնվող յուրաքանչյուրին: Վկան՝ Լ. Աթաբեկյանի «Մոր նամակը Ազիզ բալուն»:

Հայ կինը որքան գթասրտության եւ հոգու վեհության դրսեւորում է, հարյուրապատիկ անգամ անողոք է թշնամու հանդեպ: Հանուն հավատի իրենց նեստեցին ժայռերից՝ փրկելով ազգն անարգանքից, սրբացան՝ փրկելով հայոց պատիվը (Ասպղաբլուր, Կուսաբերդ): Տղամարդուն հավասար իրենց պատասխանատու զգալով հայրենիքի համար՝ դարձան մարտնչող, զինավառ հայուհիներ: Վկան 2-րդ համաշխարհային պատերազմը եւ Արցախի ազգային-ազատագրական շարժման արդի փուլը:

Արցախուհու ազգապահպան որակի առկայության մասին է Արցախի ամբողջ պատմությունը՝ հնագույն ժամանակներից առ այսօր՝ Արցախի դժվար ու խավար ճամփաներից պահպանելով եւ մեզ հասցնելով «գանձերն անգին»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	5
Կանանց հետ կապված պաշտամունքի հետքեր Արցախում	7
Արցախի հայուհին որպես կին ու մայր	15
Նշանավոր արցախուհիները	20
Ռուզուքան	44
Մեր օրերի հերոսուհիները	64
Վերջաբան	92

Բելա Արկադիի Բաբայան

ԱՐՑԱԽՑԻ ԿԻՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ստեփանակերտ - 1998

«Սոնա» գրահրատարակչություն

Ծապիկը՝ Սերգեյ ԱՌՍՏԱՄՅԱՆԻ

Խմբագիր՝ Մ. Ե. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գեղ. խմբագիր՝ Մ. Ս. ԱԶԻԶՅԱՆ

Սրբագրիչ՝ Ա. Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ծարվածքը՝ Ժ. Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Բելա Արկադիի Բաբայան

ԱՐՑԱԽՑԻ ԿԻՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ստեփանակերտ - 1998
«Սոնա» գրահրատարակչություն

Հանձնված է շարվածքի՝ 07.07.1998 թ.: Ստորագրված է տպագրության՝ 06.10.1998 թ.: Թուղթ՝ 42x60 1/16: Տպագրական 6 մամուլ: Տպագրությունը՝ օֆսեթ: Գինը՝ պայմանագրային: «ՍՈՆԱ» գրահրատարակչություն, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների, 4:

ԺՈՒՆԼ ՓԲԸ